

4730

3K71

4-20

Ա. ԿԱՆԱՏՁԻԿՈՎ

**ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ**

(Լեհիկի յեվ Ա. Մյանիկյանի պատկերներով)

00

59-44

Հրատ. Հ. Կ. Կ. Լեհգավիտի Ազիսյուրայ բաժնի

17 MAY 2013

4-20 NOV 2009 26 SEP 2006

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԼԵՆԻՆԱԿԱՆ ԳԱՎԿՈՄԻ ԱԳԻՏՄՐՈՊ ԲԱԺՆԻ № 3

Պրոֆեսորներ բոլոր լեհերների, միացե՛ք

Ս. ԿԱՆԱՏՋԻԿՈՎ

300
2669-40

**ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՈՒ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ**

Լեհիների յեվ Ա. Մյասնիկյանի պատկերներով



Հ. Կ. Կ. ԼԵՆԳՍՎԱՍՏԸ

ՄԱՅԻՍԻ 1-ին

Հրատարակում է այս գիրքը

յեզ ԳՎԻՐՈՒՄ Ե

ԱԼԵԿՍԱՆԴՐ ՄՅԱՆԻԿՅԱՆԻ

(ՄԱՐՏՈՒՆՈՒ)

Հ ի ռ ա ս ա կ ի ն

008
ՍԿ-ԻՐ



М. Шапкин-24.



ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ
ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ՈՐՈՎ

Գյուղացիները իրանց ազատութեան և հողի համար շատ վաղուց ե, վոր կռիվ են մղում ճորտատեր-կալվածատերերի դեմ, բայց այդ հերոսական կռիվը Ռուսաց պատմութեան բոլոր ժամանակներում անխուսափելի կերպով միշտ գյուղացիների պարտութեամբ ե վերջացել:

Ստեղծաբան Ռազինի խռովութեանը, Յեմելյան Պուգաչևի դեկավարութեամբ գյուղացիների ապստամբութեանը Վոլգայի շրջանում՝ Յեկատերինա I-ի թագավորութեան ժամանակ — այդ բոլորը առանձին մոմենտներ եյին ոռւս գյուղացիութեան այն բազմամիլիոն մասսայի հերոսական տարերային կռիւի, վորը հեծում, տառապում եր ճորտատեր-կալվածատերերի և նրանց հավատարիմ ծառայի՝ ցարական կառավարութեան լրծի տակ:

Այն ժամանակները գյուղացու դրութեանն իրոք վոր սոսկալի յեր: Ճորտատեր-կալվածատերերը գյուղացիներին ամբողջ ընտանիքներով կա-

րող եյին փոխել վորսկան շների հետ. գյուղացի-կանանց ստիպում եյին ծիծ տալ շան լակոտաներին. առանց վորևե զատարանի և քննության նրանց ամենասոսկալի մարմնական պատիժների եյին յենթարկում և այդպես անվերջ ու անսահման:

ՍՏԵՆԿՍ. ՌԱԶԻՆԻ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղացիության դրությունը զգալի կերպով վատթարացավ առաջին Ռոմանովների որոք: Բացի այն, վոր այդ ժամանակ գյուղացիները կատարյալ ճորտեր դարձան ու կզան կալվածատերերի հողին, այլ և այդ որերին գյուղացիների վրա ծանրացան նոր հարկեր, վորոնք այժմ հավաքվում եյին յուրաքանչյուր յերդից, մինչդեռ առաջ գյուղացիությունը միմիայն մըշակվող հողից եր հարկ վճարում: Գավառական քաղաքներում նստող ցարական կառավարիչները՝ վոյեվոդները, պետական ոռճիկ չստանալով, ժողովրդի հաշվին եյին ապրում, վորը նրանց բոլոր անհրաժեշտ պիտույքները մատակարարում եր: Վոյեվոդները զեղծումների ընդարձակ հնարավորություն ունեյին. ժողովրդին դատում եյին նրանք անարդար կերպով, կաշառակեր եյին ու կաշառքով արդարացնում եյին մեղավորներին. հարկերը հավաքելիս չեյին մո-

ռանում իրանց սեփական գրպանը: Ժողովրդի համբերությունը սպառվեց: Հաճախ խռովություններ եյին ծագում քաղաքներում (Մոսկվայում, Նովգորոդում, Պսկովում 1648—1650 թվականներին). այդ խռովություններն ուղղված եյին լինում ցարական վոյեվոդների դեմ, վորոնք կաշառքներով և անարդար պահանջներով տանջում և հարստահարում եյին ժողովրդին: Բավական եր մի խթան, վորպեսզի գյուղացիությունը վտարի կանգնի. այդպիսի մի խթան յեղավ Դոնյան կազակների ապստամբությունը Վոլգայի շրջանում: Աճա այդ ապստամբության զուլխը կանգնում ե նրանց առաջնորդ աստաման Ստեփան Ռազինը (1670—1671):

Ապստամբության սկզբում արդեն Ստեփան Ռազինը յուր տրամադրության տակ ունեւր յոթ հազարանոց մի բանակ, վորով նա վերցրեց Յարիցին քաղաքը: Յարիցինից նա ամեն կողմ թղթեր ու «հրովարտակներ» ե ուղարկում՝ կոչ անելով գյուղացիներին՝ բռնել ծեծել ու սպանել բոյարներին, ազնվականներին, վոյեվոդներին և կալվածատերերին ու ազատորեն կազմակերպվել ապրել ազատ այնպես, ինչպես կազակներն եյին ապրում: Այդ կոչ-հրովարտակներն անազին հաջողություն ունեյին. ամեն կողմից Ռազինի մոտ եյին գալիս հավաքվում գյուղացիական հսկայական բազմություն, ամենու-

րեք նրան փրկչի, ավատարարի տեղ եյին դը-
նում: Ռազմինը շարժում է ցարական զորքը,
վերցնում է Աստրախանը, Սարատովը, Սամա-
րան: Շարժումը աճում, մեծանում է: Ամեն
տեղ վառվում, հրդեհվում եյին կալվածատերերի
ազարակները. սպանվում, մորթնուվում եյին վո-
յեվոդներն ու ցարական մյուս ծառաները: Սա-
կայն ժողովրդական ստորին խավերի այս ապրա-
տամբությունը հենց յուր բնավորությամբ առա-
ջուց արդեն պարզ էր, վոր անհաշուության պի-
տի մատնվեր: Ժողովուրդը թագավորի, կառավա-
րության դեմ չեր ապստամբել, յենթադրելով,
վոր բոլոր թշվառությունները գալիս եյին հա-
րստահարիչ բոյարներէից, վոյեվոդներէից և կալ-
վածատերերէից, և վոր «ինքը, ցար հայրիկը»
յեթե իմանար գյուղացիների անտանելի նեղ վի-
ճակը, անպատճառ կաշխատեր բարվոքել նրանց
դրությունը: Բացի դրանից, գյուղացիությունը
յուր բաժանվածության, տգիտության պատճա-
ռով, այլ և այն պատճառով, վոր սովոր չեր
կազմակերպված-միահամուռ գործողություններէի,
չեր կարող հաղթել կառավարական լավ մարզված
և կարգ ու կանոնի սովոր, կազմակերպված զոր-
քերին:

Տեսեք, որինակի համար, թե մի պատմա-
գիր ինչպես է նկարագրում Ստենկա Ռազմինի
առաջնորդությամբ Վոլգայի շրջանում գյուղա-

ցիների առաջ բերած ապստամբությունը:

«Ռուս գյուղացի ազգաբնակչության վիճա-
կը Վոլգայի շրջանում չափազանց ծանր էր:
Ռուս գյուղացին մի կողմից հեծում էր նույն
այն վոյեվոդական ցարական ռեժիմի տակ, մյուս
կողմից նստած լինելով կալվածատերերի հողի
վրա, հարստահարվում և ճնշվում էր յուր անմի-
ջական տիրույթից, այդ կալվածատերից: Հին հի-
շատակարանների մեջ շատ վորոշ ցուցմունքներ
կան այդ իմաստով: Այդպես որինակ, թագավո-
րի անունով արված գյուղացիական մի աղեր-
սագրի մեջ պատահում ենք մի գանգատի, վոր
մի կալվածատեր, վոմն իշխան Արտեմիյ Շեյդյա-
կով, «յուր մոտ ըստ սովորության հացով վող-
ջունելու յեկող գյուղացիներին ծեծում, տան-
ջում և սառցարան էր ձգում»: Այդ կալվածա-
տերը «հակառակ թագավորի հրամանին» գյու-
ղացիներից հավաքում էր ամբողջ տարեկան հար-
կը և Շիրինգի գյուղից գնում էր Յարոսլավքա-
ղաքը, վորտեղ ամբողջ հարկը, նույնիսկ յուր
շորերը ծախում ուտում էր «ուրախ կանանց»
հետ. ապա վերադառնում էր կրկին Շիրինգի
գյուղը, բայց վոչ մեհակ, այլ «ուրախ կանանց»
հետ. և սկսում էր նոր հարկ հավաքել, և այն-
պես էր «հավաքում» այդ հարկը, վոր նույնիսկ
խլում էր գյուղացիներից վերջին ձիերին: Այդ
բոլոր հարստահարությունների և անասման ճըն-

շումները համար նրա դեմ գանգատ են տալիս թագավորին, իսկ նա ծեծով ու մահով է սպառնում աղերսագրեր տվողներին և յուր ձեռքերով ծեծում ու ջարդում է գյուղացիներին»։ Յեւ մենք, քո վորքերը—ասում են գյուղացիները թագավորին, այլ ևս չկարողանալով համբերել անասիման ցավերին ու տանջանքներին, աղերսում ենք ազատել մեզ»։ Ահա այդ վիճակի մեջ եր գյուղացիների դրությունը Վոլգայի շրջանում 17-րդ դարի քսանական թվականներին։ Այդ դարի կեսերին արդեն այդ վիճակը ավելի ևս վատթարանում է, վորովհետև վկայություններ կան, վորոնք ցույց են տալիս վոր Վոլգայի շրջանում գյուղացիների վրա կալվածատերերի դրած պարտականությունները 17-րդ դարի կեսերին մի քանի անգամ շատանում են»։

Այդ պատմագիրը հետևյալ կերպով է նկարագրում Ռազինի արտաքին յերևույթը և նրա ղեկավարող դերը ապստամբության մեջ։

«Ռա մի մարդ եր անսովոր ամուր և ամրահա մարմնակազմով, մեծ հոգեկան հզորության և ուժի տեր, ազատ ու ընդարձակ ցանկություններով։ Ամբոխի վրա նա հմայիչ տպավորություն եր թողնում յուր քայլվածքով ու արծվի հայացքով, վորը գիտեր և՛ ահավոր ու սոսկալի լինել և՛ վորորմած ու ներող։ Ամբոխն անմիջապես տեսնում եր, վոր յեթե այդ մարդը շատ

բան է խոստանում, ապա նա քիչ ել չի տա, և վոր նա յուր միտքը դրածին հասնելու համար վոչնչի առաջ չի կանգի։ Կամքի ուժն ու անողորությունը՝ միացած անասիման քաջության հետ, ըստ յերևույթին Ռազինի ազատ ու անզուսպ բնավորության ամենագլխավոր գծերն էյին։ Հենց այդ գծերն էյին, վորոնց շնորհիվ Ռազինը նվաճում եր ամբոխին, դառնում նրա ղեկավարն ու սիրելի Ստեպանուշկան»։

Ռազինը վորորմածաբար եր վերաբերվում հասարակ մարդկանց հետ. բոլոր նավաբանվորներն ու աքսորականները նրա մոտ շնորհ ու գլխա վերաբերմունք էյին գտնում։ «Ձեզ բոլորիդ ազատություն եմ տալիս,—ասում եր նրանց—գնացեք ուր վոր ուզում եք, գոռով վոչ վոքի չեմ ստիպի ինձ մոտ լինել. իսկ ով ցանկանում է ինձ մոտ մնալ—ազատ կազակ կրդառնա։ Յես յեկել եմ միայն բոյարներին և հարուստ տերերին ծեծելու, վոչնչացնելու. իսկ աղքատ և հասարակ մարդկանց հետ պատրաստ եմ յեղբոր պես ամեն բան հավասար բաժանել»։

Մի խոսքով, Ստեփան Տիմոֆեյեվիչը Վոլգայի շրջանում ապստամբության այս մոմենտում յուր վրա նայում եր վորպես փախստական մարդկանց ու զրկվածների պաշտպանի վրա և ժողովրդին տանջող ու հարստահարող հզորների հանդեպ իրան համարում եր վորպես մի պատժող, պատուհասող զորություն։

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՄԵԼ-
ՅԱՆ ՊՈՒԳԱԶՈՎԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ

«Սակայն 18-րդ դարում ժողովրդի ստորին խավերի կյանքի համար շատ ավելի անտանելի պայմաններ ստեղծվեցին, թե քաղաքացիների և թե մանավանդ գյուղացիների նկատմամբ: Փողային տնտեսութայն հետագա և զգալի զարգացումը սաստիկ վատացրեց Ռուսաստանի աշխատավորների վիճակը: Ծորտ գյուղացիները շատ սուր կերպով սկսեցին իրանց կաշու վրա զգալ փողի գորությունն ու ծանրությունը, վորովհետև և կալվածատերերը, վորոնք իրանց շուայլ և թանգարժեք կյանքի համար փողի շատ մեծ կարիք էյին զգում, իրանց ճորտերի վրա հսկայական հարկ էյին դնում և իրանց կալվածատիրական ամբողջ իշխանությամբը բռնի միջոցներով հարստահարում և դուրս էյին բերում այդ հարկը իրանց հպատակներին: Շուտով հողային այդ հարկի տակ է ընկնում նաև վոչ սևահող նահանգների գյուղացիութայն մեծամասնությունը»:


«Կալվածատերերի իշխանությունը 18-րդ դարում չափից դուրս ուժեղանում է, իսկ Յեկատերինա II-ի որով յուր բարձրագույն կետին է հասնում: Յելիզավետա կայսրուհին ճորտ գյուղացիներին արգելել էր իրանց տերերի դեմ գանգատ տալ, սպառնալով հակառակ դեպքում Սիբիր աքսորել նրանց, այնտեղ բնակվելու հա-

մար. իսկ Յեկատերինա II-ի որով այդ արգելքն ավելի ևս սաստկանում է. այժմ արդեն սպառնում էյին տաժանակիր աշխատանքների հեռանկարով»:

Յերբ Յեկատերինա II-ը ճանապարհորդում էր Վոլգայի շրջանում, 600-ից ավելի աղերսագիր է ստանում, վորոնց մեջ կալվածատիրական ճորտերը գանգատվում էյին իրանց տերերի ծանր, անտանելի հարկերի և տուրքերի համար, բայց այդ բոլոր աղերսագրերը վերադարձվում են խնդրատուներին, ըստ վորում նորից հաստատվում և շեշտվում է նման գանգատներ տալու արգելքը: Իսկ սենատը գանդառներ տալու փաստը համարելով ծանր քրեական հանցանք, մի առանձին հրամանով (1767 թվ. սեպտեմբերի 22-ին) նորից հաստատում է կալվածատերերի դեմ գյուղացիների գանգատ տալու արգելքը— զանցառության դեպքում սպառնալով տաժանակիր աշխատանքներ: Պարզ էր, վոր խաղաղ ճանապարհով, աղերսագրերով և պահանջներով գյուղացիները վոչինչ չէյին կարող ստանալ պետական իշխանությունից, վորովհետև հենց այդ իշխանությունը գտնվում էր ազնվականների ձեռքում:

«Բոլոր կալվածատերերը ճորտերի վրա իսկապես նայում էյին վորպես անասունների վրա, վորոնց պետք էր պահել, պահպանել, վորովհե-

տև նրանք հարկավոր եյին և վորոնց հետ կարելի յեր վարվել, ինչպես ցանկանային կարվածատերերը. ճորտերի զուգեբը կարելի յեր միացնել, «յերկրագործներ բազմացնելու համար», տիրոջ տնտեսութեան մեջ վորևէ պատճառով անպետք ճորտերին կամ նրանց, վորոնք իրանց կարվածատերերին բարկացրել եյին, կարելի եր զինվոր ուղարկել, կամ աքսորել Սիբիր, դրա փոխարեն ստանալով նորակոչ զինվորներին վերավերյալ ստացագիրը (վորովհետև կարվածատերերի Սիբիր ուղարկած գյուղացիները կառավարութեան կողմից ընդունվում եյին կարվածատերերից պահանջված նորակոչ զինվորների փոխարեն). կարվածատերերը կարող եյին իրանց ճորտերին հատ-հատ կամ խմբերով ծախել, ուղղակի իրանց տնտեսական դրութիւնը բարվոքելու համար կամ շուայութեան առարկաներ ու վորսկան թանգագին շներ գնելու համար, ծախում եյին շատ անգամ առանց խորութիւն զնելու գնողների մեջ. վորովհետև հաճախ եր պատահում, վոր առնողը ճորտ աղջիկներով բազմացնում եր յուր ճորտատիրական հարեմը: Կարվածատերերը կարող եյին ճորտերին թղթախաղի մեջ տանուլ տալ. մի խոսքով ամենալավ կարվածատերերն անգամ համոզված եյին, վոր ճորտերի վրա իրանց ունեցած այդպիսի իշխանութիւնը միանգամայն արդարացի յեր,



մի իշխանութիւն կար Նախկին ծառայական մարդկանց, վորոնք իրանց ծառայութեան համար և ծառայելու պայմանով կարվածքներ եյին ստանում, այժմ առաջին իսկ պահանջով դարձնում եր ճորտատեր, վորոնք ազատ եյին հիմա պետութեանը ծառայելու պարտադիր վիճակից, ուստի և իրանց «ազնվածնութեան» շնորհիվ միայն տեր եյին բնակված վայրերին և կարվածքներին: Ահա դրա մեջ ե ճորտատիրական իրավունքի ամբողջ սարսափը: Գյուղացիութեան մեծամասնութիւնը փաստորեն ստրուկ եր դարձել ազնվականութեան ձեռքին, վորը ճորտատիրութիւնը յուր դասակարգային արտոնութիւնն եր համարում. իսկ գյուղացիների վրա ունեցած յուր իշխանութիւնը ազնվականի աչքում նույնպիսի աստվածային ծագում ունեց, ինչպես և առհասարակ վորևէ իշխանութիւն մարդկանց վրա: Նույն կատեգորիայի մեջ պիտի հաշվել նաև այն կարվածատերերին, վորոնք բոլոր գյուղացիներին այսպես կոչված «ամսական»-ի եյին կապել, այսինքն պահում եյին իրանց հաշվով. ուրեմն խլում եյին նրանցից ամբողջ հողը և ստիպում եյին նրանց մի վոր հացի համար աշխատել կարվածատիրական հողի վրա. այդ կատեգորիայի մեջ են նաև այն կարվածատերերը, վորոնք ուղղակի գլխատիչ կերպով եյին վերաբերվում դեպի գյուղացիական աշխատանք

1922
1982

քը և իրանց «ստրուկներին» այնպիսի վիճակի եյին հասցնում, ինչպիսին յերևում ե ուրինակ գյուղացիական մի աղեղսագրից. գյուղացիներն իրանց ուժից վեր հարկը տիրոջը վճարելու համար «ծախել եյին իրանց խրճիթներից վիրջիներ, իրանց փոքրիկ սայլերը և տավարը»: Մի այլ կալվածատեր, նույնպիսի մի գիշատիչ գազան— հրամայում և յուր գործակատարին գյուղացիների մասին չասել այլևս, վոր նրանք մուրացկան են և «վողորմություն են հավաքում»: «Յես կասկած չունեմ և հուսով եմ—գրում ե տերը, վոր մինչև հազար ուսուլի կարելի յե նրանցից հավաքել առանց դժվարության և քայքայման: Գյուղացին խորամանկ ե, նա յուր հնարագիտությամբ միջոցներ կըգտնի»: Մի յերրորդ կալվածատեր պարծենում եր, վոր նա «յուր գյուղացիներից չսփազանց մեծ տուրքեր հավաքելուց աճազին կարողություն եր դիզել յուր համար»:

Գյուղացիների ծայրահեղ աղքատությունն ու իրավագրկությունն առանց հետևանքի չեր կարող անցնել: Տեղ տեղ գյուղացիական ապստամբություններ եյին ծագում. վերջապես գյուղացիական խռովություններն ու հուզումներն աճելով մի հոյակապ ապստամբություն դարձան, վորի առաջնորդը Դոնյան փախստական կազակ Յեմելյան Պուգաչովն յեղավ 1773—

74 թվերին: Գյուղացիներն ինչպես վոր Ստենկա Ռազինի ժամանակ, դեռ շարունակում եյին հավատալ, վոր ամբողջ չարիքն ազնվականներից և չինովնիկներից ե գալիս, իսկ ցարն այստեղ մեղավոր չե. նրանք հավատում եյին, վոր յեթե գահի վրա մի իսկական ցար լիներ, վոչ մի չարիք չեր լինի: Պուգաչովը գյուղացիական մասսաների այդպիսի հագեբանությունը հիանալի գիտենալով, իրան հայտարարում ե կայսր Պետրոս III-ը, վորը իբր թե Յեկատերինայի ուղարկած մարդասպանների ձեռքից ազատվել եր: Ժողովուրդը սիրով հավատում եր նրան և նրան իսկական ցարի տեղ ընդունում, մանավանդ վոր նորահայտ կայսրը և «համայն Ռուսաստանի ինքնակալ Պյոտր Ֆեոդորովիչը» բոլոր «հավատարիմ հպատակներին ազատություն եր շնորհում առանց պահանջելու գլխահարկ կամ վորևե այլ տուրք կամ առանց նորակոչ զինվորներ հավաքելու... Բացի դրանից, Ռուսաստանում ազնվականությունը գյուղացիներին այլևս ծանր աշխատանքներով և հարկերով չի ճնշի, յեթե վոր յուրաքանչյուր վոք իրան տրված ազատությունը հասկանա և գնահատի»: Բոլոր գյուղացիներին Պուգաչովն «ընդմիշտ կազակություն» եր շնորհում:

Վուգայի ամբողջ շրջանը (Поволжье) Պուգաչովի կողմն անցավ: Գյուղացիները խրմ-

բերով գալիս հավաքվում էյին նրա դրոշակի տակ. հենց վոր ինքնակոչը մոտենում եր վորևէ քաղաքի, նրան դիմավորում էյին քաղաքային պատգամավորությունները խաչվառներով, սրբերի պատկերներով և աղ ու հացով: Նորից կրակի կեր են գառնում կալվածատիրական տներն ու ագարակները, նորից ե ժողովուրդը յուր կրած վիրավորանքների համար վրեժ լուծում, շատ անգամ գազանաբար կողոպտելով, բռնանալով և սպանելով: Պուզաշովյան այդ ապստամբության հեռավոր արձագանքներն հասնում են մինչև կենտրոնական նահանգներին, վորտեղ ազնվականությունը սարսափից դողալով ըստե առ ըստե սպասում եր «ծառաների ու ձորտերի խռովությանը»:

Պուզաշովը Վոլգայի ձախ ափով հաղթական կերպով հասավ մինչև հազան քաղաքը և ներս խուժեց. սկսվեցին հրդեհները, կողոպուտներն ու սպանություններն այն բոլոր մարդկանց, վորոնք պատահում էյին քաղաքի մեջ գերմանացու շորերով: Յեկատերինայի կառավարությունը, վոր մահու չափ սարսափած եր, «չարագործի» դեմ բանակ բանակի հետևից եր ուղարկում, նշանակելով յուր ամենանշանավոր գեներալին՝ Սուվորովին հրամանատար այն զորքերի, վորոնք կովելու յեյին գնում ինքնակոչի դեմ: Սակայն Սուվորովին վիճակված չեր խա-

ղաղեցնել Պուզաշովին. այդ գործը կատարեցին ավելի փոքր զորապետները: Գնդապետ Միխելստոնը յերեք անգամ ջարդեց Պուզաշովի զորքերին հազանի տակ, վորից հետո Պուզաշովը փախավ Վոլգայի աջ ափը, վորտեղ հակառակության չհանդիպելով անցավ դեպի հարավ, վախենալով հանդիպել Միխելստոնի զորքերին, վորոնք հալածում էյին ապստամբներին: Ճանապարհին կրկնվում էյին նույն այն տեսարանները, վորոնք տեղի էյին ունեցել Վոլգայի ձախ ափին. կալվածատերերին կախում էյին, ագարակները թալանում և հրդեհում էյին: Ցարիցինից հարավ ցարական զորքերը հասան ապստամբների անկազմակերպ և անկանոն խմբերին և արագ կերպով ցաք ու ցրիվ արին: Պուզաշովը Վոլգայի վրայով փախավ, աշխատելով ուրայան կազակների մոտ ծածկվել, բայց նրա ընկերները բռնեցին նրան և հանձնեցին կառավարությանը: Կառավարությունը չարագործների հանդեպ սկսում ե յուր սովորական դատաստանը: Գյուղացիներին ձեծում են խարազաններով և ուղարկում իրանց բնակության վայրը, Պուզաշովին սրբերի պատկերներով ընդունող տերտերներին կարգալույծ են անում և ձեծում: Իսկ Պուզաշովին նրա ոգնականների և աշխատակիցների հետ Մոսկվայում գլխատում են:

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ 18-րդ ՅԵՎ 19-րդ
ԴԱՐԵՐՈՒՄ

Գյուղացիական խռովություններն ու ապստամբությունները Ռուսաստանում սովորական չերևույթ էյին ամբողջ 18-րդ և 19-րդ դարերի ընթացքում: Ստրկությունն ու կարիքը սոսկալի ծանրությամբ ճնշում էյին գյուղացիներին: Նրանց մեջ շարունակ հուզումնալից լուրեր էյին պատում ազատության և արտոնագրերի մասին, վոր իբր թե կալվածատերերի կողմից կաշառված չինովնիկներն էյին յուրացրել: 18-րդ դարում յուրաքանչյուր ցարի թագավորության սկզբում ժողովուրդը միշտ հույս ու ակնկալություն ե ունեցել, թե նոր ցարն ազատություն կըտա գյուղացիներին և կըթեթեացնի նրանց ծանր գրությունը: Բայց ամեն անգամ նոր թագավորությունից հետո ժողովուրդը հիասթափվում եր: Գյուղացիների գրությունն իրոք վոր անտանելի չեր:

Պոմեշչիկը յուր կալվածքի մեջ գյուղացիների համար և՛ ցար եր և՛ աստված. նրա դեմ գանգատվել վո՛չ կարելի չեր, վո՛չ ել հնարավոր:

«Պոմեշչիկական-կալվածատիրական իրավունքները իրավաբանորեն միայն մի կետում էյին սահմանափակված — ասում ե պատմագիր Պոկրովսկին — պոմեշչիկը յուր գյուղացիների

կյանքի և մահվան վրա իրավունք չերբեք չըստացավ»:

Պետական որենքով յենթադրվում եր, վոր կարելի չե պոմեշչիկին դատաստանական քըննության և տուգանքի յենթարկել այն դեպքում, չերբ նա ճորտ ե սպանել և այն ել վոչ թե պատահաբար ե սպանել, այլ նախապես մտածված: Իսկ յեթե ճորտը մեռնում եր անյայտի խիտտ պատժի հետևանքերից, վորն ինքը պոմեշչիկն եր նշանակել, բայց գլուխ եր բերել ուրիշ մարդկանց որինակ, ճորտ կառապանի միջոցով, ապա սպանության պատասխանատվությունն ընկնում եր այդ վերջինների վրա: Սակայն այդ ամբողջը լոկ թղթի վրա եր գրված. գործնական կյանքում պոմեշչիկներն համարյա ամեն որ մեոցնելու չափ ձեծում, շարդում էյին իրանց ճորտերին և վոչ վոք նրանց արարքի մեջ չեր խառնվում: Նույնիսկ չերբ կատաղի պատիժները չէյին բղխում պոմեշչիկի քրեական իրավագորությունից, այլ ուղղակի հանդիսանում էյին նրա քմահաճույքի լոկ մի արտահայտությունը, մատնների արանքով էյին նայում նրա վրա: Հայտնի «Սալտիչխայի» գործը քսան և մեկ անգամ սկսվեց առանց վորևե հետեվանք ունենալու: Յերբ գործն արդեն քննվում եր իրավաբանական կողբգիտյում, Սալտիկովայի դեմ գանգատ տվողները՝ նրա ճորտերը սենատի կար-

գաղբությամբ ճիւղտոնների հարվածներով են պատ-
 ժվում. ահա այդքան խիստ կերպով եր հետևում
 սենատը այն կանոնին, վորի համաձայն՝ բարինի
 դեմ թագավորին չեր կարելի աղերսագիր տալ.
 մի կանոն, վոր ամբողջ 18-րդ դարի ընթաց-
 քում բազմաթիվ անգամ հայտարարվել է: Կենտ-
 րոնական իշխանությունը կալվածատիրական իշ-
 խանության սահմաններից ներս մտնել կարող
 եր կամ յուր սեփական նախաձեռնությամբ և
 կամ պոմեշչիկի հրավերով. բայց կառավարու-
 թյունը առանց պոմեշչիկի թույլատվության չեր
 կարող նրա հպատակների գործերի մեջ խառ-
 նվել. կառավարության համար պետությունը
 վերջանում եր պոմեշչիկով, իսկ պոմեշչիկի ճոր-
 տերը նրան չեյին վերաբերում այլևս. դա իրա՝
 կալվածատիրոջ անձնական գործն եր:

Պետական գործնական կյանքում տանջան-
 քըն արդեն սկսել եր այդ ժամանակները հետզ-
 հետե վերջանալ. այժմ տանջում եյին միմիայն
 քաղաքական քննությունների և հետախուզում-
 ների դեպքերում, այլ և կարևորագույն քրեա-
 կան գործերի քննության ժամանակ: Իսկ կալվա-
 ծատիրական պետության մեջ տանջանքը շարու-
 նակում եր ծաղկել այստեղ գոյություն ունեյին
 տանջելու վարպետության առանձին սիրողներ:
 Յեկատերինայի թագավորության սկզբում Ուրյոլ
 նահանգի կալվածատերերից մեկը՝ Շենշինը յուր

գյուղերից մեկում իսկական մի տանջարան ե
 շինում, յուր բոլոր հարմարություններով, տան-
 ջելու գործիքներով, աքցանով և այլն: Շենշինի
 պետության մեջ յերբեմն «աշխատում եյին մին-
 չև յերեսուն դահիճներ իրանց ոգնականներով»:

Լիբերալ պատմագիր Մելգունովը ճորտ
 գյուղացիների կյանքը ցայտուն կերպով նկա-
 րագրող մի գեղեցիկ պատկեր ե տալիս:

«Ստրկի և իրի մեջ տարբերություն չկա:
 Վորսի շան լակոտին վճարում են 3000 մթ.
 մինչդեռ ճորտ գեղջկուհի աղջիկը ծախվում ե
 21¹/₂—33 մանեթով: Յերբխայի համար վճա-
 րում եյին նույնիսկ 10 կոպ. ի հարկե բոլոր
 ճորտերը այդպես չեյին գնահատվում. ամեն
 բան կախված եր ստրկի վորպիսությունից և ըն-
 դունակություններից. մի լավ խոհարարը, յե-
 րաժիշտը գնահատվում ե մինչև 800 մթ. և ա-
 վելի: Կոմս կամենսկին դերասաններին առնում
 եր տալով մի ամբողջ գյուղ 250 հոգի բնակիչ-
 ներով. քսան յերաժիշաներին նա ծախում ե
 10,000 մանեթով»:

Լրագրերի մեջ, հայտարարությունները բաժ-
 նում տպվում են շատ տեղեկություններ ստրուկ-
 ների և տնային այլ իրեղենների ծախման մա-
 սին:

«Ծախվում ե աղը դրած ոստերինա, 7 մոխ-
 րագույն յերիվար և մի մարդ ու կին»:

«Ծախվում է մի վարսավեր, բացի դրանից չորս մահճակալ, մի դռշակ և այլ տնական իրեր»:

Ահա մի քանի հայտարարություններ ևս, վորոնք տպված են Պետերբուրգում, 1797 թվին.

«Ծախվում է մի 16 տարեկան աղջիկ լավ վարքով և մի փոքր կիսամաշ կառք»:

«Ծախվում են բանկետային սփռոցներ... այլ և յերկու ուսումնական աղջիկ, հետո մի գյուղացի, մի վարսավեր և կով՝ անգլիական լավ ցեղից»:

Կյանքի առօրյա ընթացքի մեջ գավազանը, ուղղին, ճիպոտը, մտրակը, խարազանը, յերկաթը, վզնոցը, կաղապարը սովորական «ուղղիչ միջոցներն» էյին: Յերբեմն տան բոլոր ծառաները մարմնական պատժի էյին յենթարկվում: Մի կարվածատիրուհի միանգամից ծեծել է տալիս 80 գյուղացիների, վորովհետև նրանք հակառակ արված հրամանին՝ յելագ չէյին հավաքել:

Այդ պատկերը չի փոխվում ուսաց աղնվականության կյանքի «հերոսական» շրջանի ամբողջ ընթացքում, վորը տևում է հիսուն տարուց ավելի: Գրուզինոյում, Արակչեյեվի տնտեսության մեջ, կոմսական զինանոցում շարունակ դրված էյին կիսատակառներ, վորոնց մեջ թրջվում էյին ուղղիներն ու ճիպոտները: Առա-

ջին հանցանքի համար կոմսը յուր ծառաներին ծեծում էր ախոռում, յերկրորդ հանցանքի համար մեղավորներին ուղարկում էր Պրեբերաժենսկի գունդը, վորտեղ նրանց պատժում էյին առանձին հաստ փայտերով, վորոնք կոչվում էյին արակչեյեվյան փայտեր, յերրորդ հանցանքի դեպքում պատիժը կատարվում էր հատուկ մասնագետ դահիճների միջոցով, վորոնք զալիս էյին Պրեբերաժենսկի գնդից և մեղավորներին ջարդում էյին կոմսի տանը, նրա առանձնասենյակում, կամ նրա զբաղարանում: Պատժից հետո մեղավորները պարտական էյին դալ ներկայանալ կոմսին և նրան ցույց տալ մտրակի կամ գավազանի պինդ հարվածներից ուռած կամ կապտած մեջքը: Պատժվածները վախենալով թե կոմսը կարող է անբավական մնալ և նորից հրամայել կրկնել պատիժը, կենդանիների արյունով ծածկում էյին իրանց վերքերը, վորպեսզի այդպիսով գոհացնեն իրանց տիրոջ անգութ և անագորույն զգացմունքը: Կոմսի ազարակում հատուկ անական բանտ կար, վոր հայտնի յեր եղիկուլ անունով: Նա մի մուլթ, խոնավ, ցուրտ և նեղ նկուղ էր, հանցավորներն այդտեղ շաբաթներով և ամիսներով նստում էյին:

Ալեքսանդր Ի-ի դաստիարակչի կինը Սալտիկովան յուր վարսավերին ամբողջ յերեք տարի վան-

դակուժ փակած և պահուժ միմիայն նրա հա-
մար, վորպեսզի նա բերնից չթուցնի, վոր յուր
տիրուհին կեղծ պարիկներ և դնուժ:

Այսպես եր անա դրությունը սովորական
պոմեշչիկների շրջանուժ:

Բայց դանվուժ եյին նաև այնպիսի հայրա-
կան խնամատարության սիրահարներ, վորոնք
առանձին «կետերով» ու «կանոններով» հայտա-
րարուժ եյին պատիժների գանաղան տեսակնե-
րը: Չափազանց բնորոշ ու հետաքրքիր են այն
կետերը, վոր առաջ և բերուժ Վ. Ի. Սեմեվսկին
տնային վարչության ժուրնայից, և վորոնք վե-
րաբերուժ են 1763—65 թվերին: Այդ կետերի
հեղինակը, համաձայն վոստիկանական պետու-
թյան բոլոր կանոններին, մտահոգված և յուր հա-
վատարիմ հպատակների նաև հողիների փրկու-
թյամբ: Ճորտերից պահանջվուժ և կրոնական ծե-
սերի մանրակրկիտ և ուշադիր կատարուժն. «Իսկ
յեթե վորևե մեկը վորևե տարի չխոստովանի—ծե-
ծել նրան՝ տալով ճիպոտի 5000 հարված անխը-
նա. իսկ յեթե չհաղորդվի, նույնքան ուղղու-
հարված առանց խնայելու»: Այդ բարինի խել-
քին փչուժ և, վոր նրա ճորտուհիներից մեկը,
վորը յուր տիրոջ բարկությունը յուր վրա յեր
շարժել, այլևս հոր անունով չկոչվի, այլ նրան
անվանեն «փախկոտ և ստախոտ»: «Ով այսուհե-
տև Ֆեկլային անունով և հոր անունով կրկոչի,

նրան առանց խնայելու ուղղու 5000 հարված
տալ»: Պոմեշչիկը վորոշուժ և նաև «անխնա»
պատժից հետո հիվանդության տևողությունը: Ով
մտրակի 100 հարված եր ստացել կամ 17000
ուղղի, նա իրավունք չուներ մի շաբաթից ավելի
պառկել. 50 մտրակի հարված կամ 10,000 ուղ-
ղի ստացողը պետք և պառկեր վոչ ավելի քան
կես շաբաթ և այսպես անվերջ. հիվանդության
ժամանակը պետք և համաձայն լիներ ստացած
հարվածների թվին: Յեվ դա լի տեսություն չեր,
վորով տիրական պոմեշչիկը ուղղուժ եր վախե-
ցնել յուր ծառաներին. մեզ հայտնի յե, վոր այդ
«կետերը» կիրառվուժ եյին և գործնական կյան-
քուժ:

Յեթե հիշելու լինենք այս կարգի բոլոր
փոստերը, ապա հուշակավոր Սալտիկովան, վոր
մեղադրվուժ եր 75 մարդ սպանելու մեջ, ամե-
նևին հազվագյուտ յերևույթ չի լինի այլևս: Սալ-
տիչիխայի պատկերը ցայտուն կերպով մեխվել և
ժողովրդական հիշողության մեջ, վորովհետև նրա
գործը այն սակավաթիվ գործերիցն եր, վորոնք
վերջացել են մեղադրյալին դատապարտելով:

Մեր մուայլ անցյալից մենք մի քանի ցայ-
տուն որինակ միայն առաջ բերենք: Բայց այդ
որինակներն ու փաստերը կարելի յեր անսահ-
մանորեն բազմապատկել:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր ճիպո-

տի ու գավազանի տակ աշխատող գյուղացիների աշխատանքը պետք է պակաս արտադրական լիներ: Այդ փաստի դեմ պոմեշչիկները տարբեր յեղանակներով եյին կովում: Նրանցից մի քանիսը խիստ հակողութուն եյին նշանակում ճորտերի վրա: Պոմեշչիկներից մի քանիսը՝ ճորտ աշխատողների վզին ոտգատականեր եյին ձգում, վորպեսզի սրբանք անկարող լինեյին նստել գետնի վրա և այդպիսով ստիպված լինեյին անընդհատ աշխատելու: Վորպեսզի բանվորներին ստիպեյին շուտով վերջացնել իրանց աղայի աշխատանքները, հնձի ժամանակ գյուղացիներին թույլ չեյին տալիս գնալ շուր խմել, չնայած որվա շոգին ու տապին: Գյուղացիների վրա ազդելու ամենասովորական միջոցը ոտզին եր, գավազանը, մտրակը, յերբեմն նաև վորսի մտրակը և ուրիշ զանազան միջոցներ ու գործիքներ «ծուլութան», զանազակոտութան և անճշտապահութան դեմ:

Մինչև վորոշ ժամանակ գյուղացիութունը անտրտունջ համբերում ու տանում եր այդ ճնշումը և կալվածատիրական իշխանութան այդ քմահաճույքը:

Բայց ժամանակ առ ժամանակ գյուղացիների համբերութունը չափից անցնում եր և ասա այդպիսի դեպքերում այստեղ գյուղացիական ազմուկներ, խռովութուններ եյին ծագում:

Այսպես որինակ Պավել I-ի թագավորու-

թյան սկզբում զանազան նահանգների մեջ միաժամանակ գյուղացիական 11 ապստամբութուն ծագեցին:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդ խռովութունները ամենաբարբարոս խստությամբ եյին խաղաղացվում: Ամեն մի խռովութունից հետո սկսվում եյին գյուղացիների մասսայական պատժումը՝ մտրակով, ճիպոտներով, գավազանով և այլն:

Ահա թե որինակի հաժար մի պատմագիր ինչպես է նկարագրում գյուղացիների իրավագրկութունը Պավել I-ի թագավորության որով: Յարոսլավյան նահանգի գյուղերից մեկի գյուղացիները՝ ծանր ու անտանելի հարկերի ու պարտականութունների տակ համբերութունները կարած՝ մտածում են իրանց տերերի դեմ գանգատվել: Տերերը լսելով ճորտերի մտադրության մասին, անմիջապես մարդ են ուղարկում, կանչում վոստիկանապետին, վորը մի վաշտ զինվորների հետ գալիս է, մի քանի մարդ ձերբակալում, իսկ մնացած բոլորին ասա որ շարունակ ճիպոտով անտանելի ծեծում ե, հայտնի չե թե ինչու հաժար և ծեծելու ժամանակ միշտ կրկնում. «խնդիր մի տա թագավորին»:

Նիկոլայ I-ի սրով գյուղացիների հետ այսպես խայտառակ վարվելու յեղանակներն ավելի խստանում, ուժեղանում են. մի փոքրիկ անհնա-

զանդությունն անգամ ամենադաժան կերպով եր պատժվում:

Սարատովի նահանգում, ասում ե պատմագիրը, Վոլկովների կալվածքում գյուղացիները մտածում են վոնդել իրանց նաչալնիկներին: Սակայն դրա մասին ժամանակին իմացվում ե. գալիս ե վոստիկան Բարանովսկին. ձերբակալում ե գլխավորներին և հրամայում ե գյուղացիներին ժողովի գալ: Ժողովի գալիս են ընդամենը 109 ձերունիներ: Բերում են ձերբակալվածներին և պատրաստվում են մտրակներով ձեծել: Բայց յերբ մերկացնում են գլխավորներին, 109 ձերբերը իբրև մի մարդ գետին են ընկնում և ձեռքերը մեջքերին զրած մի բերան աղաղակում են. «մեզ բոլորիս ձեծեցեք, և վոչ թե այդ յոթին. նրանք մեղավոր չեն»: Բայց վոստիկանը սիրտ չի անում բոլոր ժողովականներին ձեծել: Լավ ձողկելուց հետո նա այդ յոթին բանտ ե ուղարկում. սկզբում մտադրություն կար նրանց Սիբիր ուղարկել, սակայն գյուղացիների տերը՝ պոմեշչիկ Վոլկովը նամակով խնդրում ե նահանգապետին մի լավ դաս տալ գյուղացիներին, այսինքն մի լավ ձեծել, բայց Սիբիր չուղարկել. վորովհետև աքսորը պոմեշչիկի տնտեսության համար վնասակար կըլիներ: Առ հասարակ կալվածատերերի համար գյուղացուն «խնայելու» միայն մի պատճառ կարող եր լինել, վորի համար գյուղա-

ցիներին պետք չեր արքսորել և մեռցնելու չափ ձեծել—դա „տնտեսության համար վնասակար լինելու հանգամանքն եր»: Նույն այդ պատճառով եր, վոր նա խնայում եր յուր ընտանի անասուններին:

Յեվ այդ բոլորը կալվածատերերի և ցարական կառավարության դաժան ու անգութ վերաբերմունքի արտահայտության առանձնակի դեպքեր չեյին լսկ: Ընդհակառակը, դա մի սխտեմ եր, վորով գյուղացին ճնշվում և անասունի վիճակին եր հավասարվում: Այդ յերևում ե նաև այն փաստից, վոր Թուսաստանի մի քանի տեղերում ոռոգիչների համար բավականաչափ քանակությամբ ճիպոտներ չեյին ձարվում: 1849 թվականին Տավրիկյան և Խերսոնյան նահանգական վարչությունը դիմում ե Կիյեվի նահանգապետին խնդրելով ուղարկել Տավրիկյան նահանգի համար տարեկան 6000 հատ կեչու ճյուղ ոռոգիչների համար, իսկ Խերսոնի նահանգի համար 2000, վորովհետև այդ նահանգներում կեչի ծառերի անտառներ չկային և ոռոգի շինել չեր կարելի վոչ մի բանից»: Նաչալնիկներ ել կային, վորոնք գործի պարզության համար իրանց արներում առանձին մեքենաներ եյին շինում գյուղացիներին ձեծելու և ջարդելու համար:

Հասկանալի յե, վոր գյուղացիների այդպիսի սոսկալի վիճակը հաճախ գանգատների,

քողոքների և խռովութիւնների պատճառ եր գառնում, վորոնք սակայն ամենաբարբարոս դատանությամբ եյին ճնշվում: Գյուղացիական այդպիսի անկարգութիւններ համարյա ամեն տարի տեղի եյին ունենում: 1826 թվից մինչև 1854 թվականը, ուրեմն 28 տարվա ընթացքում զանազան կալվածատիրական ազարակներում և կալվածքների մեջ 674 այդպիսի խռովութիւններ են տեղի ունեցել: Իսկ գյուղացիների ազատագրումից անմիջապես առաջ գյուղացիական խռովութիւնների թիվը տարեկան հիսունի եր հասել արգեն:

Բռնութիւնն ու քմահաճույքը վոչ միայն գյուղերումն էր թագաւորում, այլ և սովորական յերևույթ եր քաղաքներում: Ազնվականները, կալվածատերերն ու ցարական ծառաները, շինովիկները ամենաանպատիժ կերպով ծաղրում, խայտառակում եյին և ամենաանամոթ կերպով վարվում հասարակության ստորին աղքատ խավերի հետ:

Գյուղացիների ազատագրումից անմիջապես առաջ արգեն չկրիչի վոստիկանապետ Գոլյատկինը Չիչեռինի և Տատիչչևի նման շրջում եր քաղաքը յեռաձի կառքով չորս կողակների ուղեկցությամբ, վորոնք հենց տեղն ու տեղը բռնում գետին եյին տապալում հանցավոր քաղաքացիներին, ըստ վորում կողակներից մեկը բռ-

նում եր հանցավորի գլուխը, մյուսը՝ վոտքերը, յերբորդը ծեծում եր և չորրորդը ձիերն եր պահում»:

«Պետերբուրգում, ժանդարմական վարչության մեջ—Տիմաշևի մոտ Յեպնոյ կամուրջից վոչ հեռու մի աթոռ եր սարքված, ցարական հուշակավոր դահլիճ Շեշկովսկու բազկաթոռի նրման, աթոռի վրա նստողը վորոշ մեխանիզմի ոգնությամբ իջնում եր ստորերկրյա հարկը, վորտեղ և յենթարկվում եր գանակոծության*»:

Յեպնոյ կամուրջի մոտ յեղած այդ շինութիւնը այն ժամանակվա յերգիծաբանական վոտանավորների նյութ եր դարձել նույնիսկ:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Մեր ցարը շատ հավատարիմ ծառաներ ունի
Ահա որինսկ Տիմաշևի մոտ
Անտանելի կերպով ծեծում են.
Յեթե այնտեղ հարյուր հարված ստանաս,
Յերբեք չես մոռանա շինութիւնը
Յեպնոյ կամուրջի մոտ:

ՄՈՍԿՎԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Ե

Մեր ցարն ամեն բան խելացի յե անում,
Այստեղ առանց Տիմաշևի ել լավ ձողկում են,
Ի՞նչ պետք կա Յեպնոյ կամուրջի մոտ յեղած
շինությանը,
Հրամանը դուրս գալուն պես—ուղղակի կաշի են
պրկում:

*) Н. Евреинов, «История телесных наказаний в России».

Ճորտատիրական լծից գյուղացիները ազատագրուածը նրանց ծանր վիճակն այնքան եւ չթեթեացրեց:

Յեւ վերոք, ասում եւ Լենինը յուր մի հոգևածի մեջ, վոր գրել ե գյուղացիական ռեֆորմի քառասնամյակի առթիւ, «գա գյուղացիներէ ազատումն եր հողից, վորովհետեւ այն հողաբաժինները, վորոնք դարերի ընթացքում գյուղացիներէ տրամադրութեան տակ եյին, հակայական չափերով կարատվեցին, փոքրացան, իսկ հարյուր հազարավոր գյուղացիներ բոլորովին հողազուրկ դարձան կամ ստացան իրանց նախկին հողաբաժինների մի քառորդը և ուղղակի մուրացկան դարձան: Իսկապես գյուղացիք կրկնակի թալանվեցին. բավական չեր, վոր նրանց հողը կտրեցին և քչացրին, նրանց դեռ ստիպեցին, վոր իրենց թողած հողի համար «փրկանք» վճարեն, այն հողի, վորը միշտ գյուղացիների ձեռքին եր յեղել և բացի զբանից հողի փրկանքը շատ ավելի բարձր եր նշանակված, քան իրոք հողն արժեր: Իրոք կալվածատերերը ճորտերի ազատագրումից տասը տարի հետո, խոստովանում եյին կառավարութեան չինովնիկների առաջ, վորոնք ուսումնասիրում եյին գյուղական անտեսութեան վիճակը, վոր գյուղացիներին ստիպել են վոչ միայն իրանց հողի, այլև իրանց ազատութեան համար վճարել: Յեւ

սակայն, անձնական ազատութեան համար փրկանք վերցնելով, այնուամենայնիւ գյուղացիներին ազատ մարդիկ չդարձրին. նրանց քսան տարով ժամանակավորապես պարտավոր թողին, նրանց թողին դարձյալ ստորին դասակարգ, վորը յենթակա յե ռոզգի, վորը վճարում ե հատուկ տուրքեր և հարկեր, վորը չի համարձակվում ազատորեն դուրս գալ կես ճորտական համայնքի շրջանակից, չի կարող ազատորեն վարվել իր սեփական հողի հետ, ազատ կերպով բնակվել պետութեան այս կամ այն նահանգում: Մեր գյուղացիական ռեֆորմը կառավարութեան մեծահոգութեան ապացույց չի բոլորովին. ընդհակառակը, այդ ռեֆորմը մեծագույն պատմական որինակն ե այն բանի, թե վոր աստիճանի ապականված ու խեղաթյուրված ե դուրս գալիս վորևէ գործ առհասարակ միահեծան կառավարութեան ձեռքից: Զինվորական պարտութեան, ֆինանսական սոսկալի դժվարութեանների ճնշման տակ, ինչպես նաև գյուղացիների անավոր ու սպառնալի խռովութեանների սպառնալիքի տակ կառավարութեանն ուղղակի ստիպված եր ազատել ճորտերին»:

Գյուղացութեանը փոքր հողաբաժիններ ըստանալով («մինչև անգամ հավերի համար ազատ տեղ չունեյին») առջվա պես ճորտական կախվածութեան մեջ մնաց պոմեշչիկներից, կա-

պալով վերցնելով նրանց հողը և փոխարենը պարտավորվելով գանազան աշխատանքներ անել նրա համար:

Մի ամբողջ շարք խռովություններից ու աղմուկներից հետո, վորոնք տեղի ունեցան գյուղացիների շրջանում, ցարական կառավարությունը սպանությունների, գնդակահարությունների և գանակոծության միջոցով գյուղացիներին ստիպում է հաշտվել իրանց դառն վիճակի հետ, այն գյուղացիներին, վորոնք ուրիշ արդյունք եյին սպասում այդ ռեֆորմից:

«Յե՛վ գյուղացին սկսեց մշակել յուր նախկին ազայի հողը—գայրույթով գրում է Վ. Ի.— «կապալով վերցնելով» նրանից այն հողը, վորն առաջ իրան էր պատկանում, ձմեռ ժամանակը հաց փոխ վերցնելով յուր սովամահ ընտանիքի համար, վորպեսզի դրա փոխարեն դարնանը ազայի համար աշխատի: Աշխատանք՝ առած փոխառությունը հատուցանելու համար, և ճորտություն—ահա թե իսկապես ինչ էր այն «ազատ աշխատանքը», վորի վրա յեզվիտ տերտերի կազմած մանիֆեստը կոչ էր անում գյուղացուն հրավիրել «ստավածային որհնությունը»:

Իրավագրկությունն առաջվա պես ծանրանում էր գյուղացու վրա: Տարբերությունը միայն այն էր, վոր այժմ պոմեշչիկը նրան չէր ծեծում գոմում, այլ այդ գործը այժմ անում էր

զեմսկի նաչախիկը, ուռյադնիեր կամ վորոստի ստարչինան, վորը նրան ծեծում, շարդում էր գյուղական ժողովի մեջ հարկերը ժամանակին չվճարելու համար: Այս է ահա համառոտակի շարագրված մարտիրոսական—սոսկալի պատմությունը այն տանջանքների և պայքարի, վոր ուսս գյուղացին մղեց է ցարի և պոմեշչիկների դարավոր ստրկությունից ազատվելու համար:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԿՌՎՈՒՄ «ՆԱՐՈՂՆԻԿՆԵՐԸ»
ՊՈՄԵՇՉԻԿՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԾԱՌԱՅԻ ՑԱՐԱԿԱՆ ԿՍՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ.

Ինչպես պատմության փորձը ցույց է տալիս, Ռուսաստանում, ինչպես և արտասահմանում գյուղացիությունն ինքը, թեպետ և բազմամարդ է, սակայն յուր տգիտության և բաժանվածության ու անմիաբանության պատճառով ուժեղ չէ, ուստի և յուր սեփական ուժերով անկարող է դարավոր ստրկությունից ազատվել: Միմիայն դաշն կապելով, միանալով իրանից ավելի կազմակերպված գիտակից և զարգացած դասակարգի հետ՝ գյուղացիությանը հաջողվել է արտասահմանում յերբեմն կարճ ժամանակով միայն ազատագրվել յուր ստրկական վիճակից: Սակայն այդ ազատագրումը յերկար չի տևում: Գյուղացիությունը շատ շուտով

կախման մեջ և ընկնում յուր դաշնակից ու զեկավար դասից և գյուղացիութեան համար մի նոր ստրկութուն և ստեղծվում, միայն թե ուրիշ տեսակ: Գյուղացիութեան այս նոր դաշնակիցն ու նրա պայքարի, կռիվի մեջ այդ նոր առաջնորդը ամենից հաճախ լինում և բուրժուազիան, կապիտալիստները դասակարգը:

Կալվածատեր ազնվականներին գյուղացիների ոգնութեամբ հաղթելուց հետո, կապիտալիստները, վորպես ավելի զարգացած և հարուստ դասակարգի ներկայացուցիչներ, խաբեութեան և բռնութեան ճանապարհով իրանց ձեռքն ելին ձգում իշխանութունը, վճռված ազնվականներին—պոմեշչիկներին տեղն ելին գրավում և գյուղացիական մասսաներին կապիտալիստական նոր լծի տակ ելին դնում:

Ճշմարիտ և, Ռուսաստանում միահեծան կառավարութեան դեմ փորձում ելին կռվել հասարակութեան և այնպիսի խավեր, վորոնք ընկած ելին այդ յերկու դասակարգերի՝ կապիտալիստների և գյուղացիների միջև, ինչպես որինակ մանր բուրժուական ինտելլիգենցիան, այսինքն պակապ պահովված զարգացած մարդիկ—մեշչաններին, աղքատացած ազնվականներին, գյուղական հողևորականութեան և այլ այդպիսի շրջաններից դուրս յեկած մարդիկ:

Այդ հեղափոխական շարժումը, վոր տեղի

ունեցավ Ռուսաստանում 19-րդ դարի 70-ական և 80-ական թվականներին, կոչվում և «նարոչնիկութուն», մի շարժում, վորը յուր ծրագրային պահանջներով մի քանի տարբեր հոսանքների յե բաժանվում:

Սոցիալիստ-նարոչնիկները իրանց նպատակ ելին դնում՝ գյուղացիների հետ դաշնակցած և նրանց ոգնութեամբ՝ պետական հեղաշրջում առաջ բերել և բովանդակ հասարակութունը սոցիալիստական հիմունքներով վերաշինել, խլել պոմեշչիկներից հողը և տալ գյուղացիներին, վորպես ընդհանուր, համայնական սեփականութուն:

Սոցիալիստ-նարոչնիկներն ասում ելին, վոր գյուղացիների մեջ դեռ մնացել և հին գյուղական համայնքը, «միրը», գյուղի կազմակերպված ընդհանուր ժողովը, վորը գյուղացիների կյանքին ու կենցաղին վերաբերյալ բոլոր հարցերը լուծում և վորոշում և միահամուռ կերպով, միասին, գյուղացիները կարիքի և նեղութեան մեջ իրար ոգնում են, նրանց մեջ գոյութուն ունի համայնական յերաշխավորութուն. և հեեց այդ պատճառով մեր գյուղացին յուր բնութեամբ արդեն հասարակական և «սոցիալիստ և», համայնական է:

Նարոչնիկները մասսաներով դիմում ելին զեպի «ժողովուրդը» և սկսում ելին գյուղացի-

ների մեջ քարոզել գյուղացիական կյանքը սոցիալիստորեն վերաշինելու անհրաժեշտութեան մասին:

Միահեծան կառավարութիւնը անխնա հանապաճել ե սկսում նարողնիկներին, բանտ ե նստեցնում, աքսորում ե հեռավար Սիբիր. կառավարական դատարանները ամեն մի ազատ խոսքի համար նարողնիկներին դատապարտում եյին տաժանակիր աշխատանքների, աքսորի ե այլն:

Սակայն մոռացված ու մութ գյուղացիութիւնն ել չեր հասկանում նարողնիկներին: Ազնվականների ե պոմեշչիկների դարավոր լծի տակ կռացած գյուղացիութիւնը շատ կասկածանքով ե հաճախ թշնամանքով եր նայում սոցիալիստական նարողնիկներին. սրանք խորթ եյին գյուղացիութեան համար, մարդիկ, վորոնք դուրս ելն յեկել նրա համար ոտար միջավայրից: Ուստի ե հազվագյուտ չեյին այնպիսի դեպքերը, յերբ իրանք գյուղացիները ոգնում եյին վոստիկաններին «վորսալու սոցիալիստներին», նրանց ձեռքերը հետ եյին կռացնում դեպի մեջքերը ե այդ վիջակի մեջ տանում հանձնում եյին հարյուրապետներին կամ ուռյադնիկներին:

Այդպիսով սոցիալիստ նարողնիկները ջանքերը՝ գյուղացիներին ազնվականների ե կառավարութեան դեմ դուրս բերել—կատարյալ անհաջողութեամբ վերջացան:

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏՆԵՐԸ.

Սոցիալիստ-նարողնիկների սխալներից մեկըն այն եր, վոր նրանք գյուղացուն համարում եյին ապագա սոցիալիստական հասարակութեան գլխավոր ե միակ ստեղծողը, իսկ գյուղական համայնքը (վորը պաշտպանվում եր նաև ցարական կառավարութեան կողմից՝ ավելի հարմար ե հեշտ կերպով ստրկացնելու գյուղացիներին) նըրանց կարծիքով ապագա սոցիալիստական հասարակութեան բլիշի սաղմն եր: Բանվորական դասակարգն այն ժամանակ դեռ սակավաթիվ եր ե անզիտակից. ուստի ե նարողնիկներն հաշի չեյին առնում բանվորին: Բայց յերբ նարողնիկներն իրանց հեղափոխական գործնական աշխատանքների ժամանակ հանդիպեցին բանվորներին, ապա յերևաց, վոր բանվորներն ավելի լավ ե ավելի սիրով են ըմբռնում ե ընդունում նըրանց սոցիալիստական պրոպագանդան, քան գյուղացիները: Սակայն այդ հանգամանքը նրանց գլխի չձգեց, վոր նրանք բանվորի վրա ուրիշ կողմից նայեյին: Մեզ, կոմունիստներին համար ապագա հասարակութեան ստեղծողը բանվորն եր հանդիսանում, իսկ նարողնիկները համար՝ առաջվա պես գյուղացին եր, վոր ապագայի մարդն եր ու այդ ապագայի ստեղծողը:

Յերբ նարողնիկներն իրանց գաղափարների պրոպագանդայով բանվոր դասակարգի մեջ եյին մտնում, ապա շատ բնական եր, բանվորական միջավայրից դուրս յեկած առաջին հեղափոխականները պիտի յուրացնեյին նարողնիկների նույն այն հայացքները գյուղացիութեան դերի մասին:

Սակայն շուտով ամենաաչքի ընկնող բանվորները, իրանք ել այդ բանը չգիտակցելով, հեղափոխութեան և բանվոր դասակարգի ունենալիք դերի մասին այլ հայացք են ձեռք բերում. նրանք գալիս են այն տեսակետին, վոր բանվոր դասակարգը ինքնուրույն, անկախ դեր ե ունենալու հեղափոխութեան մեջ և սկսում են բանվորների քաղաքական անկախ ինքնուրույն կազմակերպութեան հաստատել: Նարողնիկական շրջաններից դուրս յեկած առաջին բանվոր հեղափոխականներից եյին հռչակավոր Պյոտր Ալեքսեյովը և Ստեփան Խալտուրինը:

ԶՈՒԼՆԱԿ ՊՅՈՏՐ ԱԼԵՔՍԵՅԵՎԻՉ ԱԼԵՔՍԵՅԵՎ

Ահա ինչպես ե նկարագրում ընկ. Բատուրինը Մոսկվայի բանվոր շուրհակ Պյոտր Ալեքսեյովին:

50 նարողնիկների դատաստանը Ռուսաստանում առաջին, դեռ մինչև այդ ժամանակ չտեսնուված դատավարութեան եր վոչ միայն այն պատճառով, վոր մեղադրյալները շատ եյին, այլ

և այն պատճառով, վոր ցարական դատավորներն առաջին անգամ առիթ ունեյին տեսնել ու գործ ունենալ ժողովրդի ամենաստորին խավերից դուրս յեկած գիտակից, համարձակ հեղափոխականների հետ: Հիսուն մեղադրյալների մեջ կային և մի քանի մոսկվացի բանվորներ. սրանցից ամենից նշանավորը շուրհակ Պյոտր Ալեքսեյովիչ Ալեքսեյովն եր:

Նա արդեն յուր արտաքինով շատ խիստ կերպով տարբերվում եր մյուս մեղադրյալների խայտաճամուկ բազմութեանից: Նրան ճանաչող մարդիկը հետևյալ կերպով են նկարագրում նրա արտաքինը. միջահասակ, թիկնավետ, ամբակազմ, ամուր ու պինդ գլուխ, թուխ դեմքի խոշոր գծերով, թավ, սև գանգուր մազեր. նույնպիսի գանգուր մորուք և բելսեր. պարզ, բոցավառ աչքեր, պայծառ և բարի յերես:

Յուր ծագումով Պ. Ա. Ալեքսեյովը ամենասղքատ ու մութ գյուղական միջավայրի զավակ եր: Նա ծնվել եր 1849-ին Նովինսկի գյուղում, Սմոլենսկի նահանգի Սիչեվսկի գավառում: Այն կողմերում հողը շատ անբերրի յե և Պյոտրի աղքատ ծնողները յերեխային դեռ շատ փոքր հասակից քաղաք են բերում և գործարան տալիս:

Պ. Ա. Ալեքսեյովը գյուղից, ինչ կասկած վոր, անգրագետ ե դուրս գալիս: Քաղաքում, ամենավաղը հասակից աշխատելով որակյան մինչև

17 ժամ, նա ժամանակ եր գտնում ինքնակրթությամբ պարագելու, աշխատելով գրագիտություն սովորել: Սակայն միմիայն գրագիտությունը դեռ վոչինչ չէր տալիս այն ժամանակի «Միթե վորև պարապմունքի համար մենք բանվորներս ազատ ժամանակ ունենք—հարցնում ե գատարանում յուր ճառի մեջ. միթե մեզ չքավորներիս փոքր հասակից սովորեցնում են վորևե բան. միթե մեզ աշխատավորներիս համար մատչելի և ոգտակար գրքեր կան»:

Պ. Ա. Ալեքսեյեվի համար այնքան ել հեշտ չէր գրքերից մի բան հասկանալ: Սակայն բախտը նրան բերում հանդիպեցնում ե հեղափոխական նարոդնիկների հետ, վորոնք նրան շատ ոգնում են պարզել և իմաստավորել այն հարցերը, վորոնց համար գրաքննական մամուլում վոչ մի պատասխան չէր կարելի գտնել: Ագահորեն լսում եր նա նարոդնիկների ճառերը, իսկ գիշերները, յերկար աշխատանքային օրից հետո, կարգում եր նրանց գրքերը, վորոնք տաված եյին լինում ծածուկ տպարաններում: Նարոդնիկական պրոպագանդան ընդլայնում, ընդարձակում եր նրա նախկին իմացությունները, ամրացնում եր նրա մեջ յեղած ատելությունը դեպի կառավարությունը և դեպի այն բոլոր ձրիակերները, վորոնք ծծում են աշխատավոր մասսաների արյունը:

Ալեքսեյեվի կենդանի ու գործունյա բնավորությունը չէր կարող բավականանալ լոկ գրքերի մեջ յեղած իմաստությամբ: Նա շտապում ե յուր գիտությունը գործ դնել յուր իսկ սեփական հեղափոխական աշխատանքի մեջ: Նա դառնում ե պրոպագանդիստ և առանց դադարելու գործարաններում աշխատելուց, յուր ընկերների մեջ խմբակներ կազմակերպում, նրանց մեջ գրքեր և գրականություն ե տարածում: Միևնույն գործարանի մեջ նա յերկար ժամանակ մընալ չէր կարող, վորովհետև հեշտությամբ կարելի կըլիներ այդ դեպքում նրա հետքը գտնել ու ձերբակալել: Ուստի և մի գործարանում գործերը կարգի ձգելուց և խմբակ կազմելուց հետո նա շտապում եր անցնել մի ուրիշ գործարան, վորպեսզի նույն գործն այնտեղ սկսեր:

Մոսկվայի ջուհակ հեղափոխականի, ինչպես և հեղափոխության բոլոր ժողովրդական գործիչների այդ յեռուն աշխատանքը շատ կարճ ե տևում, ընդամենը մի քանի ամիս միայն:

1875 թվին, ապրիլի 4. ին նա յուր ութ ընկերների հետ ձերբակալվում ե Մոսկվայում, Կորսակովի տանը: Ամբողջ յերկու տարի նա բանդ ե նստում սպասելով դատավարությանը և այդ ժամանակամիջոցում բավականին գիրք և կարգում, վորովհետև բանդում կարգալու համար ավելի պարապ ժամանակ կար, քան աղա-

տության մեջ: Սակայն նրան այլևս վիճակված
չէր վերադառնալ յուր նախկին աշխատանքին:

Դատարանում մեղադրական կետեր նրա դեմ
շատ չկային և նա կարող էր թեթև պատժով պրոծ-
նել դատարանից, յեթե վոր աշխատե՞ր արդարանալ
և իրան պաշտպանել, կամ ուղղակի լռե՞ր, բան չը
խոսե՞ր գառի ժամանակ: Սակայն նա խոր կեր-
պով արձամարում էր ցարական գոտարանը. նա
հրաժարվում է պաշտպանել, հայտարարելով,
վոր այդ դատարանը լոկ մի կատակերգություն,
մի ծաղր է, վորովհետև դատավճիռն առաջուց
արդեն պատրաստված էր: Բայց ինքն ևս չի
ցանկանում պաշտպանվել: Կարծես նա հարմար
առիթի յեր սպասում, վորպեսզի բարձրաձայն,
հրապարակով հանդես բերի կառավարության և
կապիտալիստների դեմ ամբարված ատելությու-
նը, վորպեսզի նոր զարթնող ամբողջ բան-
վոր դասակարգի անունից նրանց յերեսին գոռ
մենամարտի ահեղ հրավերը շարտի:

Նա դատավորության ընթացքում այնպես
հիմնական կերպով ու համարձակորեն է հարձակ-
վում կառավարության և բոլոր շահագործողնե-
րի վրա, վոր դատարանի շարացած նախագահը
մի քանի անգամ ընդհատում է նրան և հազիվ
հնարավորություն տալիս նրան վերջացնելու ճառը:

Առաջ ենք բերում Պ. Ա. Ալեքսեյեվի ճա-
ռից մի քանի կտորներ:

«Յես յենթադրում եմ, ամեն մարդու հայտ-
նի յե, վոր մեզ մոտ Ռուսաստանում բանվոր-
ները դեռ շարունակում են հալածվել զիրք կար-
գալու համար և մանավանդ, յեթե բանվորի մոտ
տեսնում են մի զլրք, վորի մեջ նրա զբության,
նրա վիճակի մասին խոսք կա, այն ժամանակ
պետք է զգուշ լինել: Նրան ուղղակի ասում են.
«դու բարեկամս, բանվորի նման չես, դու զիրք
ես կարդում»: Յեվ ամենից տարորինակն այն
է, վոր այդ խոսքերի մեջ նկատելի չե հեգնու-
թյուն, վոր Ռուսաստանում բանվորին նմանվել
միկնույն է, թե անասունին նմանվել: Պարոն-
ներ, միթե ձեզանից վորեւ մեկը յենթադրում
է, վոր մենք բանվորներս մեր շրջապատի նը-
կատմամբ այն աստիճան խուլ ենք, կույր, հա-
մըր, վոր չենք լսում, թե ինչպես հայհոյ-
ում են մեզ՝ հիմար, ծուլ և հարբեցող անվա-
նելով: Միթե կարծողներ կան, վոր բանվորներն
այդ արատների տերն են: Միթե մենք չենք նը-
կատում, վոր ինչպես մեր շուրջը մարդիկ հա-
րըստանում և ուրախ կյանք են անցկացնում մեր
հաշվին: Միթե մենք չենք կարող ըմբռնել և
հասկանալ, թե ինչո՞ւ մենք այդպես եժան ենք
գնահատվում և թե ո՞ւր է գնում մեր անտանե-
լի ծանր աշխատանքի արդյունքը: Ի՞նչն է պատ-
ճառը, վոր ուրիշները առանց աշխատանքի այդ-
պես շքեղ ու շոտյլ կյանք են վարում և վորտե-

դից են վերցնում նրանք այդ հարստութիւնը: Մի՞թե մենք բանվորներս չենք հասկանում, չենք զգում, թե ինչպիսի ծանր բեռան պես իջել է մեր վրա այսպես կոչված ընդհանուր գլխավորական պարտականութիւնը: Մի՞թե մենք չգիտենք, թե ինչպիսի դանդաղկոտությամբ և ակամայից եր վճռվում գյուղացիութեան կրթութեան համար գյուղերում դպրոցներ մտցնելու հարցը և մի՞թե մենք չենք զգում, թե ինչ վիճակի մեջ դրվեցին այդ դպրոցները: Մի՞թե մենք չենք տխրում և և չենք ցավում, յերբ լրագրներում կարգում ենք բանվոր դասակարգի վարձի մասին արտահայտված կարծիքը: Այն մարդիկ, վորոնք բանվոր դասակարգի մասին այդպիսի կարծիքի յեն, իբր թե բանվորն անզգա յե և վոչինչ չի հասկանում, խորապես սխալվում են: Իսկ բանվոր դասակարգը թեպետ և դեռ մնում է նախնական վիճակի մեջ և մինչև այժմ վոչ մի ուսում և կրթութիւն չի ստանում, այդ հանգամանքի վրա նայում ե, վորպես լոկ մի ժամանակավոր չարիքի վրա, ինչպես և այդպես նայում ե ուժով հափշտակված կառավարական իշխանութեան վրա, վորը միայն բազմադասութեան համար իրերը շուռ ե տալիս: Նրանից ավելի բան չի ել կարելի սպասել: Մենք բանվորներս կառավարութիւնից սպասում եյինք, և ցանկանում վոր նա մեզ համար ծանր ու անտանելի նորմութու-

թիւններ չեր անի, հին դրութիւնը չեր պաշտպանի, նյութապես կապահովեր գյուղացիութիւնը, մեզ դուրս կըբերեր այն նախնական վիճակից և արագ քայլերով առաջ կերթար: Բայց ավանդ. յեթե հետ նայենք, ապա կատարելապես կըհիասթափվենք. և յեթե միևնույն ժամանակ հիշենք ուս ժողովրդի համար այն անմոռանալի թվացող որը, յերբ նա բազկատաբած, յուր ապագա բախտն ապահովելու հույսով և ուրախութեամբ լեցուն՝ յուր ցարին ու կառավարութեանը շնորհակալութիւն եր հայտնում — յերբ մենք հիշենք այդ նշանավոր փետրվարի 19-ը: Յեվ ի՞նչ. դա ել մեզ համար լոկ մի յերագ եր և ցնորք... 61 թվականի փետրվարի 19-ի գյուղացիական այդ ռեֆորմը, վոր «շնորհված» եր, թեպետ և անհրաժեշտ, բայց վոչ անմիջական կերպով իրա, ժողովրդի գործը, չի ապահովում գյուղացու ամենամանրաժեշտ կարիքները: Մենք առաջվա պես առանց մի կտոր հացի մնացինք, մի բուռն անպետք հողով և դարձանք այժմ կապիտալիստի ճորտը: Յեթե Նոսովորների գործարանի գործակատարը, վոր այստեղ վկա յե, ասում ե, վոր նրա մոտ բացի տոն որերից բոլոր բանվորները գտնվում են խիստ հսկողութեան տակ, և վորոշված ժամանակը գործի չեկող բանվորն անպատիժ չի մնում, իսկ շրջակա հարյուրավոր գործարանները լիքն են

գյուղացիներով, վորոնք ապրում են նույնպիսի պայմանների մեջ.— այդ նշանակում է, վոր նրանք բոլորը հոս են: Յեթե մենք, զժբախտաբար, հաճախ ստիպված ենք լինում խնդրել, վոր բարձրացնեն մեր աշխատավարձը, (վոր իրանք կապիտալիստներն են ցածրացնում) մեզ մեղադրում են, վոր մենք գործադուլ ենք առնում և աքսորում են Սիբիր. դա նշանակում է, վոր մենք հոս ենք: Յեթե մենք կապիտալիստի կողմից ստիպված ենք լինում թողնել գործարանը և պահանջել, վոր մեր հաշիվները տան, վորովհետև մեզ նեղում են ամեն տեսակ տանջանքներով և հում նյութն էլ ավելի վատացնում են, մեզ այդպիսի դեպքերում մեղադրում են, վոր մենք ազմուկ և խռովություն ենք անում և զինվորների հրացանի կոթով ըստիպում են շարունակել գործարանում մեր աշխատանքը, իսկ մեզանից մի ջրանիսին՝ զրգապատճառներին հեռավոր աշխարհներ են ուղարկում— դա նշանակում է, վոր մենք հոս ենք: Յեթե մեզանից յուրաքանչյուրն առանձին վերցրած կապիտալիստի դեմ չի կարող զանգատ տալ և առաջին պատահած թաղային վոստիկանը կարող է մեզ ծեծել և բռունցքով ջարդել մեր ատամներն ու քացիով մեզ դուրս քշել— դա նշանակում է, վոր մենք հոս ենք»:

Յուր այս ճառը Պյոտր Ալեքսեևը հետևյալ

նշանակայից խոսքերով է վերջացնում:

«Յե՛լ կրքարձուանա բանվոր դասակարգի միլիոնավոր մարդկանց ուժեղ հուժկու բազուկը յե՛վ միկչե՛վ այդ ժամանակ զինվորների սլիկներով կանգուն մնացած բռնակալության լուծը հող ու մոխիր կըդառնա»:

Վկաների ասելով, այդ նշանավոր ճառն այնպիսի տպավորություն է թողնում դատարանում, վոր յեթե ճառից հետո Պ. Ա. Ալեքսեևն ուզենար դատարանի դահլիճից ազատորեն գնալ հեռանալ, վոչ վոք նրան չէր կանգնեցնի. այդ աստիճան շմել էյին բոլոր ներկա յեղողները, զրանց թվում նաև պահակները:

Այդ համարձակ ճառի համար Ալեքսեևը տասնամյա տաժանակիր աշխատանքի դատապարտվեց: Սիբիրում տաժանակիր աշխատանքների բանտում տաս տարի տանջվելուց հետո, նա 1884 թվին աքսորվում է Յակուտյան շրջանի մի խուլ ուլուս (գյուղ) այնտեղ բնակվելու, Յակուտսկից 200 վերստ հեռավորության վրա: Այստեղ նա դեռ 7 տարի ապրում է, պարապելով յերկրագործությամբ: Այս յեղանակով նա ապրում է մինչև 20-ական թվականների սկիզբը և կարող էր արդեն շուտով հայրենիք վերադառնալ այն ժամանակ, յերբ Ռուսաստանում բանվորական շարժումը լայն ու ընդարձակ չափեր էր ընդունել, յերբ բանվորական

կենտրոններում պրոպագանդիստների խմբակներ եյին յերևան յեկեկ, վորոնք բանվորներին տալիս եյին վոչ թե արդեն տնաբույծ նարող-նիկական տեսություններ, այլ իսկական գիտական կոմմունիզմ:

Բայց Պ. Ա. Ալեքսեևին վիճակված չեր հայրենիք վերադառնալ Յակուտայան կորստաբեր քսորավայրից: 1891 թվի ամառը, նա յուր ուլուսից քաղաք ե գնում տոնավաճառի: Ամայի ճանապարհին նրա վրա են հարձակվում յակուտ ավազակները, կողոպտում են և զազանաբար սպանում: Մի քանի որից հետո միայն նրա կիսաքայքայված դիակը գտնում են անտառում, մի փոսի մեջ և տերևներով ծածկված:

Հռչակավոր ջուլհակ հեղափոխականի մահից 34 տարի յե անցել, սակայն աշխատավոր մասսաների հիշողության և մտքի մեջ Պ. Ա. Ալեքսեևը յերբեք չի մեռնի:

ՍՏԵՓԱՆ ՆԻԿՈՒԱՅԵՎԻՉ ԽԱՆՏՈՒՐԻՆ

(1857 1882)

Բանվոր դասակարգի հեղափոխական շարժման պատմության մեջ պակաս կարևոր տեղ չե գրավում նաև ատաղձագործ Ստեփան Խալտուրինը:

Ստեփան Նիկոլայիչ Խալտուրինը ծնվել է

1857 թվականին Վյատկայի նահանգի Ուլովյան գավառի Մեծ Արագիլներ գյուղում: Նրա ծնողները պետական ունեվոր գյուղացիներ եյին: Ծնողները նրան Վյատկա յեն ուղարկում սովորելու. այստեղ նա հիմնովին ուսումնասիրում ե ատաղձագործական արհեստը և կարևոր գիտելիքներ ե ձեռք բերում:

Վյատկայում այդ ժամանակները մի քանի քաղաքական քսորականներ եյին ապրում: Աքսորականները դպրոցի աշակերտներից վորոչ շրջաններ և խմբակներ եյին կազմակերպում, վորոնք և իրանց ընկերների մեջ զաղտնի գրքեր և բրոշյուրներ եյին տարածում: Այդպիսի խմբակներից մեկի մեջ ե ընկնում անա Ստեփանը, յերբ նա հազիվ 15—16 տարեկան եր: 17 տարեկան հասակում նա Պիտեր ե գնում և ատաղձագործի տեղ ե ստանում յերկաթուղու վրա:

Շուտով Խալտուրինը ծանոթություն ե ըսկրսում Պետերբուրգի հեղափոխական ինտելիգենցիայի հետ (Չարուշին, Մորոզով, Բլինով և ուրիշներ): Նարոգնիկները մեծապես ոգնում և նպաստում են Խալտուրինի զարգացմանը, ինչպես վոր նպաստել եյին Պյոտր Ալեքսեևի զարգացմանը: Իսկ մենք Պ. Ա. Ալեքսեևի որինակից արդեն տեսանք, թե ինչպես նոր ծագող բանվորական շարժումն առանձնանում, անջատվում եր նա-

րողնիկությունից, աշխատում եր անկախ, ինքնուրույն ուղի բռնել: Պետերբուրգում, վորտեղ շատ վաղուց է, վոր հսկայական չափով գավոդներ ու գործարաններ եյին կուտակված, բանվորական շարժումն ավելի հասուն և ավելի ուժեղ եր: Ինքը, Խալտուրինն էլ, յերբ վոր Պետերբուրգ յեկավ, ամենեկին այնպես տգետ ու մութ գյուղացի չեր, ինչպես Պ.Ա. Ալեքսեւը և Մոսկվայի գործարանային բանվորների մեծամասնությունը: Վյատկայի զեմսկի դպրոցում նրա ըստացած ուսումն ու գիտությունը Խալտուրինին ավելի շուտ մտեցնում էին ինտելլիգենցիային, քան բանվորական գորշ մասսային:

Ահա դրա համար է, վոր Ստ. Խալտուրինը շատ ավելի անկախ և ինքնուրույն կերպով կարող եր վերաբերվել այն ժամանակվա նարոդնիկական պրոպագանդիստներին, ճիշտ այնպես, ինչպես վոր նարոդնիկների աշակերտ Մոսկվայի հռչակավոր Չուխակ Ալեքսեւը, վոր յուր բոլոր ուժերը նվիրել եր բանվորական շարժմանը:

1874—1875 թվականներին 18—19 ամյա Խալտուրինն արդեն բանվորական խմբակների գործունյա պրոպագանդիստն ու կազմակերպողն եր: 1876 թվին վերջնականապես կազմակերպվում է նարոդնիկական կառավարությունը «Հող և Ագատություն» («Земля и Воля») անունով: Այդ վայրկյանից արդեն պետերբուրգ-

յան նարոդնիկները սկսում են բավականին ընդարձակ պրոպագանդա անել բանվորների շրջանում: 70-ական թվականներին, յերբ Պետերբուրգում սկսվում է գործադուլային շարժումը, բանվորական միջավայրում նարոդնիկների ունեցած այդ աշխատանքն ավելի ևս ուժեղանում է. իսկ այն բանվորական խմբակները, վորոնց մեջ նրանք իրանց պրոպագանդան եյին առաջ տանում, աստիճանաբար առանձնանում էյին և կազմում անկախ, ինքնուրույն մի սերտ կազմակերպություն: Հենց այդ ժամանակ եր, վոր Ստեփան Նիկոլայևիչ Խալտուրինը, վոր անձամբ յեղել եր ամենալավ նարոդնիկական խմբակներում, այժմ դառնում է բանվորական շարժման գլխավոր կազմակերպիչներից մեկը: Գեորգի Վալենտինովիչ Պլեխանովը, վորն այդ որերին «Հող և Ագատություն» կուսակցության եր պատկանում և պրոպագանդա յեր անում պետերբուրգյան բանվորների շրջանում, Ստեփան Խալտուրինին լավ ճանաչում եր: Յուր հիշողությունների մեջ նա մանրամասն բնութագրեր և նկարագրություններ է թողել այն ժամանակվա առաջավոր բանվորների մասին և առանձնապես Ստեփան Խալտուրինի մասին: Պլեխանովի ասելով, Խալտուրինը բարձրահասակ, բարեկազմ մի յերիտասարդ եր, յերեսի հաճելի գույնով և արտահայտիչ աչքերով: Մարդկանց հետ ունե-

ցած յուր հարաբերությունների ժամանակ նա շատ մեղմ եր թվում, համեստ և նույնիսկ ամաչկոտ, մի բան, վոր քիչ եր սազ գալիս բանվորին: Սակայն նրա հետ մոտենալն ու նրան բարեկամ դառնալը հեշտ չեր: Յուր ծանոթների հետ նա չեր սիրում հոգեկան զեղումներ ունենալ և միմիայն գործի մեջ կարելի յեր մոտ ճանաչել նրան: Այն ժամանակ յերևան կըգար, վոր այդ յերիտասարդի բանվորական համեստ արտաքինի տակ ծածկված ե մի շատ ուժեղ կամք, անխորտակելի համառություն և անսահման անձնվիրություն զեպի բանվորական գործը: Թեպետ և նա յուր տեղեկություններն ու ծանոթությունները ամեն հարմար զեպքում ինտելիգենցիայից եր վերցնում, այնուամենայնիվ հիանալի հասկանում եր այդ տարրերի՝ վորպես հեղափոխական ույժի՝ անկայունությունն ու անհաստատություններ: Այդ ե պատճառը, վոր Սալտուրինը հաճախ հանաքով ծաղրում եր յուր ինտելիգենտ լուսավորիչներին, իսկ բանվորների, հասարակ աշխատավորների արժանիքին նա շատ հարգանքով ու պատկառանքով եր վերաբերվում, չնայած նրանց տգիտությանն ու մտավոր խավարին:

Յուր բարձր աստիճանի գիտակցության և զեպի բանվորական գործը հանդես բերած յուր նվիրական անձնագոհության շնորհիվ Սալտուրինը այնպիսի հարգանք և վստահություն եր վա-

յելում բանվորական շրջաններում, վորպիսին այն ժամանակ վոչ մի ինտելիգենտ գործիչ չեր կարող ունենալ: Նրա, ինչպես և յուրաքանչյուր բանվորի գործնական մտածելակերպը, յուր բանվորական հարազատ միջավայրի գերազանց ճանաչումը, իսկ ամենագլխավորը—անսահման և անխորտակելի հավատ զեպի բանվորական շարժման ուժը—այս բոլորը Սալտուրինին շատ ավելի մեծ չափով հնարավորություն եր տալիս բանվորների կազմակերպչական գործը հաջողությամբ առաջ տանելու, քան այդ անում էլին մինչև այժմ նարոգնիկները:

1878 թվականի վերջերին Պետերբուրգի առաջավոր բանվորները խմբվեցին և մի սերտ միություն կազմեցին և սկիզբ դրին առաջին մեծ բանվորական կազմակերպության «Ռուս բանվորների Հյուսիսային Միություն» անունով: Ամբողջ գործի հոգին ու գլխավոր կազմակերպիչը Ստեփան Նիկոլայեվիչ Սալտուրինն եր:

«Ռուս բանվորների Հյուսիսային Միությունը» ներկա բանվորական կոմմունիստական կուսակցության նախակարապետն եր: Բայց նրան վիճակված չեր յերկար կյանք ունենալ: 70-ական թվականների վերջերին «Հողի և Ազատության» կուսակցության անդամները կառավարության կողմից ուժեղ հալածանքի յենթարկվելով, սկսեցին սկզբում հատ-հատ դիմադրություն ցույց տալ

կառավարութեանը ձերբակալութեաններէ ժամանակ, և նույնիսկ սպանութեան ակտեր կազմակերպել ամենամանարգ ժանդարմների, նահանգապետների և ցարիզմի մյուս վորսկան ու քերժե շներէ դեմ: Իսկ հետագայում, «Հող և Ազատութիւն» կուսակցութեան մեծամասնութիւնն ևս թեքվում է դեպի այդ կողմը և վորոշում են այդ ահաբեկիչ կռիւլը առաջ տանել վոչ թե հատ-հատ, այլ ամբողջ կուսակցութեամբ, մտածված ու ծրագրված սպանութեան փորձեր կազմակերպել վոչ միայն ցարական ծառաների, այլ և հենց ցարի դեմ: Այդ նարոդնիկները, վորոնք տերրորի կողմնակիցներ եյին, կազմեցին մի նոր կուսակցութիւն «ժողովրդական Ազատութիւն» անունով և սկսեցին իրար հետեից սպանութիւններ կազմակերպել: Սարսափած կառավարութիւնն ավելի ևս խտացրեց յուր հալածանքները և խեղդեց ամեն մի ազատութիւն. նա յուր լրտեսներէ, ժանդարմների և բանտապետների բանակը ավելի ևս ուժեղացրեց, բազմապատկեց:

Գաղտնի աշխատանքի մեջ դեռ չփորձված բանվորները թեպետ իրանք անձամբ կարմիր տերրորի մեջ չեյին մասնակցում, բայց և այնպես կառավարական ճերմակ տերրորից շատ ավելի կորուստներ եյին ունենում քան տերրորիսաների կազմակերպութիւնը: Բանտարկու-

թիւն բանտարկութեան հետեից եր գալիս նրանց զլխին: Յերիտասարդ բանվորական կազմակերպութիւնը քայքայվեց, քանդվեց: Առաջավոր բանվորներից մի քանիսը՝ հուսահատութեան հասած, սկսում են հետզհետե տերրորիստական կռիւ մեջ մտնել: Այնպես եր թվում, վոր բավական եր ցարին սպանել և կառավարութիւնը անմիջապես կըսկսի զիջումներ անել և այնպիսի ազատութիւն կըտա, վորի ժամանակ բանվորները հնարավորութիւն կունենան ազատորեն բացարձակ կազմակերպվել: Այդպես եր մտածում և Սալտուրինը: Շուտով նա հնարավորութիւն է ստանում Չմերային Պալատ մտնել վորպես ատաղձագործ: Շատ գայթակղեցուցիչ եր այդպիսի հնարավորութիւնը: Հեղափոխականը թափանցում եր այդպիսով կատաղի գաղտնի բուն իսկ վորջը մի այնպիսի ժամանակ, յերբ լրտեսներն ու ժանդարմները առանց աչք փակելու վորսի եյին դուրս յեկել ու վխտում եյին վորջի չորս կողմերը, բռնելով բոլոր «կասկածելիներին»: Սալտուրինը յերկար չմտածեց և ընդունելով յեղած առաջարկը, պալատ մտավ: Հաստատ մտադրվելով հասնել այն նպատակին, վոր դրել եյին տերրորիստները՝ սպանել թագավորին—նա հարաբերութեան մեջ է մտնում «ժողովրդական Ազատութիւն» կուսակցութեան առաջնորդների հետ, վորոնք նրան շատ լավ ճա-

նաչում եյին և սիրով ընդունում եյին նրա առաջարկութիւնը:

Վորոշվել էր Չմերային Պալատը պայթեցնել այն ստորնկողյա կացարանից, վորտեղ ապրում էր Սալտուրինը: Անելիքը հեշտ չեր և վերին աստիճանի վտանգավոր էր: Բանվոր հեղափոխականն այստեղ էլ յերևան է բերում այնպիսի քաջութիւն, սառնասրտութիւն, հնարագիտութիւն և հաստատակամութիւն, վորպիսին ամեն ինտիլիգենտ տերրորիստի մեջ շատ զըժվար էր գտնել:

Յուրաքանչյուր բոպե նա կարող էր գործը փշացնել և յուր գլխով տուժել: «Ժողովրդական Ազատութեան» կուսակից Կվյատկովսկին Սալտուրինին զինամիտ էր հայթայթում, իսկ սա այդ զինամիտը քիչ-քիչ հավաքում, կիտում էր յուր ստորնկողյա սենյակում: Բայց շուտով Կվյատկովսկին ձերբակալվում է և նրա մոտ գտնվում է Չմերային Պալատի հատակագիծը, վորի վրա ցարական սեղանատունը, վորը պիտի պայթեցնեյին, կարմիր գույնով նշան էր արված: Յարական պահնորդները իրար գլխով են անցնում և ամբողջ պալատը տակն ու վրա յեն անում: Մի բախտավոր պատահումնքով էր միայն, վոր Սալտուրինը չձերբակալվեց: Սակայն այն ժաժանակիսնից պալատ զինամիտ բերելը ավելի ևս զժվարանում է: Սալտուրինն ստիպված էր ա-

մենաչնչին քանակութիւնով բերել, ականջներէ մեջ կոխած, մագերի մեջ պահած և այլն: Վերջապես Սալտուրինը հաղթահարում է բոլոր վրտանգներն ու զժվարութիւնները և 1880 թվականի փետրվարի 5-ին նկուղը պայթում է: Սպանութեան այն նոր փորձի լուրը կայծակի արագութեամբ տարածվում է ամբողջ Ռուսաստանում: Բայց ցարն այս անգամ էլ ազատվում է: Տերրորիստներից հետապնդվելով, շրջապատված յուր թիկնապահներով, «Ժողովրդական Ազատութեան» կուսակցութեան կողմից մահվան դատապարտված՝ նա դեռ մոտ մի տարի յեւ ապրում է, մինչև վոր վերջապես այդ դատավճիռը պուխ է գալիս (1881 թվին, մարտի 1-ին):

Սալտուրինը վերջնականապես հարում է «Ժողովրդական Ազատութեան» կուսակցութեանը և շուտով մտնում է նրանց կենտրոնական կազմակերպութեան՝ «Ժողովրդական Ազատութեան Գործադիր կոմիտեի» մեջ: Գործադիր կոմիտեի հանձնարարութեամբ նա սկզբում աշխատում է Մոսկվայում, գործարանային բանվորներէ շրջանում, բայց հետո մի այլ կուսակցականի՝ Ժելվակովի հետ միասին հանձնարարութիւն է ստանում սպանել Ողեսսայի դատախազ Ստրելնիկովին: Այս դատախազը, նոր ցար Ալեքսանդր III-ի հրամանով, Ողեսսայում զբաղված էր հեղափոխականներին հետևելով և բռնելով: Յարէ

կաշին պաշտպանելու գործում այդ սրիկան վոչ մի բանի առաջ չեր կանգնում: Նա աջ ու ձախ բռնում եր բոլոր «կասկածելիներին», իսկ դատավարութիւնները ժամանակ չեր քաշվում ամենաանամօթ քայլերից. բռնվածներին՝ հատկապես յերիտասարդներին վախեցնում եր զանազան սուտ վկայութիւններով, ցուցումներով, պրովակատներ եր գտնում և ամեն կերպ աշխատում եր ցարի առաջ յեռանդուն և անձնվեր յերևալ:

Սալտուրինն ու ժելվակովը 1882 թվին, ապրիլի 18-ին Ողեսսայի քաղաքային բուլվարում որը ցերեկով սպանեցին Ստրելնիկովին: Բայց այդ հանդուգն սպանութիւնը նրանց վրա թանգ նստեց. նրանք յերկուսն ել իրանց կյանքով տուժեցին: Հավաքված ամբոխը շրջապատում և նրանց և բռնում կապում: Ամեն կողմից դեպքի վայրը վազող մարդկանցից դեռ վոչ վոք չեր իմանում ընդհանուր իրարանցման մեջ, թե ով եր իսկապես սպանվել. և յերբ հայտնի յե լինում, վոր սպանութիւնը քաղաքական հողի վրա յեր կատարվել և վոր սպանել էյին սրիկա Ստրելնիկովին, տերորիստներին բռնողներից մի քանիսը զղջացին:

Պիտերից հրաման և գալիս. ձերբակալվածներին ռազմական դատարանով դատել և 24 ժամվա ընթացքում կախել: Հասկանալի յեր, վոր

դատավարութիւնը մի դատարկ կոմեդիա յեր լիկ: Ողեսսայի իշխանութիւնները շտապում են կատարել հրամանը և նույնիսկ ժամանակ ել չեն գտնում վորոշել Սալտուրինի անձնավորութեան ինքնութիւնը, վորովհետև նա կեղծ անցագրով եր ապրում: Մեծ դժվարութեամբ կարելի յեղավ բանալի քրեական հանցավորների մեջ մի հարբեցող գտնել, վոր համաձայնվեց ի կատար ածել դատարանի վճիռը:

1882 թվին, մարտի 22-ին Ստեփան Նիկոլահիչ Սալտուրինը, ընդամենը 25 տարեկան, արդեն հիվանդ, թոքախտավոր — մեռավ ցարական կախաղանի վրա:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԸ ՅԵՎ ՆՐԱ ԿԱՊԸ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Այն ժամանակ, յերբ միահեծան կառավարութիւնը ավերում, ջարդ ու փշուր եր անում նարոդնիկական շարժման վերջին մնացորդները հանձինս «ժողովրդական Ազատութեան» կուսակցութեան, Ռուսաստանում այդ որերին արդեն ծնվում եր ցարական կառավարութեան մի նոր մահացու թշնամի, վոր բոլոր աշխատավորներին ապագա ազատագրողն եր — դա բանվոր դասակարգն եր: Այդ ժամանակները Ռուսաստանն արդեն հաստատուն կերպով վոտք եր դրել կա-

պիտալիստտական զարգացման ուղին: Տիրական կապիտալն արդեն թափանցել էր Ռուսաստանի ամենախուլ անկյուններն անգամ: Անխնա կերպով ավերում, քարուքանդ էր անում գյուղացիական տնտեսությունը, տատանում էր գյուղի պապենական հիմքերը և սովի միջոցով քշում էր «գյուղի յերիտասարդներին դեպի գործարանները, նավաշինարաններն ու դավոզները» — աշխատանք գտնելու, ինչպես յերգում են ժողովրդական մի հայտնի յերգի մեջ: Սկզբում վաստակ վորոնելու դուրս յեկած թափառական բանվորության մի մասը կրկին գյուղ էր վերադառնում աշխատանքը վերջացնելուց հետո. բայց հետո, գյուղացիական ազգաբնակչության մի մասը ամեն տարի աստիճանաբար մնում էր արդյունաբերական քաղաքներում և հետզհետե դառնում հիմնական արդյունաբերական բանվորներ, վորոնք այնուհետև միմիայն իրանց աշխատավարձով էյին ապրում և վոչ մի սեփականություն չունեյին այլևս:

Մյուս կողմից միասնորեն ամբողջական չի մնում նաև գյուղական բնակչությունը: Գյուղի ազգաբնակչության մեջ սկսում են քիչ քիչ տուռաջ գալ, շերտավորվել առանձին ունևոր գյուղացիներ, վորոնք չէյին քաշվում իրանց հուրեանների՝ միջին գյուղացիների կարիքավոր դրությունից ոգավել, նրանց հաշվով հարս-

տանում էյին և հետզհետե դառնում էյին հարուստ գյուղակեր բուռնցքներ: Գյուղի մյուս ծայրում տեղի յեր ունենում միջին գյուղացու քայքայումը. աստիճանաբար սա դառնում էր տնանկ աղքատ, իսկ հետո հարուստ գյուղացու ու կալվածատիրոջ բատրակն ու աշխատավորը:

Բացի դրանից, արդյունաբերական քաղաքներից գյուղ վերադառնալով ընդմիշտ կամ մի առ ժամանակ այնտեղ ապրելու համար՝ յեռանդուն քաղաքային յերիտասարդությունը արդյունաբերական քաղաքների «ազատ վոգին» տանում, գյուղի ամենահեռավոր ու խուլ անկյուններն էր հասցնում: Նա հետամնաց գյուղի մեջ քաղաքային կուլտուրայի հետ միասին տանում էր գյուղական իշխանությունների՝ պոմեշչիկների, գեմսկի նաշալնիկների, ոււյադնիկների դեմ կովելու և նրանց չհնազանդվելու, նրանց դեմ բողոքելու ազատ վոգին:

Յերբ քաղաքից գյուղ վերադարձող բանվորը սկսում էր գյուղացիներին կազմակերպել ազնվականների և պոմեշչիկների դեմ և նրանց միջքարոզել կոմմունիստական գաղափարներ, այն ժամանակ գյուղացին արդեն մեծ վատահուստյամբ էր նրան վերաբերվում, ավելի մեծ վատահուստյամբ, քան «աղայական» միջավայրից դուրս յեկած ինտելլիգենտ-նարոզնիկին:

Այդպես աստիճանաբար աճում և ամրանում

եր բանվորներին և գյուղացիներին մեջև յեղած բընական կապը:

Բանվորներն իրանց հոտառությամբ զգում էյին, առանց դեռ կարողանալու իրանց զգացածը խոսքերով պայծառորեն արտահայտել, վոր առանց Ռուսաստանի ազգաբնակչության հսկայական մեծամասնության՝ առանց գյուղացիների մասնակցության և ոժանդակության, նրանք չեն կարող կապիտալիստներին հաղթել: Իսկ գյուղացիներն իրանց հերթին զգում էյին, վոր իրանց ամենամոտ հոգեկից տարրը դա բանվոր դասակարգն է, առանց վորի ղեկավարության նա չպիտի կարողանար հաղթել կալվածատեր-ազնվականներին և ստանար նրանց հոգերը:

Ռուսաստանում հեղափոխական շարժման այդ յուրահատուկ ճանապարհները հոկտեմբերյան հեղափոխությունից դեռ մի քանի տասնամյակ առաջ կռահել ու ըմբռնել են այն ժամանակվա բանվոր դասակարգի ամենաառաջավոր ղեկավարները. բանվոր դասակարգը նոր նոր երգարթնում յուր յերկարատև ընդհանր և սկսում եր ապրել գիտակցական կյանքով:

«Ռուսաստանում հեղափոխությունը կըհաղթանակի վորպես բանվորական շարժում-ասում եր բանվոր դասակարգի այն ժամանակվա նշանավոր ղեկավարներից մեկը—կամ թե նա բոլորովին չի հաղթանակի»:

Հեղափոխությունն հաղթանակեց Ռուսաստանում վորպես բանվոր դասակարգի շարժում՝ գյուղացու թյան ակտիվ ոժանդակությամբ ու նրա հետ դաշնակցած—այժմ մենք կարող ենք կրկնել, մի փոքր լրացնելով մեր ղեկավարների մարգարեական նախագուշակությունը:

Բանվորների և գյուղացիների միության այդ հանճարեղ ստեղծողը անկասկած հանդիսանում է Լենինը: Ռուսական հեղափոխական շարժման պատմության մեջ նա առաջինն էր, վոր ըմբռնեց ու հայտնագործեց այն մեծ ճշմարտությունը, թե մեր ուսական բազմամլիլիոն գյուղացիությունը հզոր ուժ կարող է դառնալ միայն այն դեպքում, յերբ իրան ղեկավար և առաջնորդ ունենա բանվոր դասակարգը և նրա հետ սերտորեն դաշնակցած լինի:

Լինելով Ռուսաստանում հողային հարցի վազույն իրազեկներից մեկը, Վ. Ի. Լենինը՝ յուր ուսումնասիրած հսկայական վիճակագրական նյութի հիման վրա գալիս է այն յեզրակացությանը, վոր կալվածատերերի և գյուղացիների մեջ տեղի ունեցող դասակարգային դարավոր պայքարը անխուսափելի կերպով պիտի ավելի ու ավելի սրանա և ուժեղանա, վորովհետև 28 հազար ազնվական կալվածատերեր այնքան հող ունեն իրանց տիրապետության տակ, ինչքան 100 միլիոն գյուղացիներ, ըստ վորում այս

գյուղացիները հսկայական մեծամասնութիւնը աղքատ մուրացկաններ են. կամ սակավահող, կամ առանց ձիւերի կամ տնանկ աղքատներ և այլն: Աղքատ գյուղացիութեան այդ հսկայական բազմութիւնը հողի և ազատութեան համար մղած յուր կռիւնքը կը հանդիպի վոչ միայն յուր դարավոր թշնամուն՝ ազնվական պոմեշչիկին, այլ և կապիտալիստին, վորի բանկերում գրավ ե գըրված այդ էսկվածատիրական հողը, վորովհետև հեղափոխութեան ժամանակ հողը պոմեշչիկներինց խլելով, գյուղացիք նյութական հարված կը հասցնեն վոչ միայն պոմեշչիկներին, այլ և կապիտալիստներին: Մենակ գյուղացիութիւնը ինչպես պատմութեան փորձը ցույց ե սովել արտասահմանում և Ռուսաստանում, յուր տգիտութեան, մտավոր խավարի և տնտեսապես բաժանվածութեան հետևանքով, չի կարողանալու հաղթահարել պոմեշչիկներին և կապիտալիստներին:

Հետևապես, գյուղացիութեանը՝ նրա պայքարի մեջ հավատարիմ գաշնակից և դեկավար ե հարկավոր: Գյուղացիութեան հսկայական բազմութեան այդ հավատարիմ գաշնակիցն ու դեկավարը միմիայն բանվոր դասակարգը կարող ե լինել, վորը նույնպես շահագրգռված ե կալվածատերերի և կապիտալիստների բռնութիւնն ու լուծը ջախջախելու և վորն արդեն կապիտալիզմ կռվելու փորձ ունի: Բացի դրանից, բան-

վորներն արդեն իրանց բանվորական դասակարգի համար կազմակերպված քաղաքական կուսակցութիւնն ունեն, վորը կազմակերպված հերոսական կռիւլ ե մղում միահեծան կառավարութեան և նրա չինովնիկները դեմ:

Ճշմարիտ ե, գյուղացիութիւնն այն ժամանակները դեռ սակավ եր զարգացած, անգիտակից եր ու անկազմակերպ:

Սակայն այդ հանգամանքը պատճառ չի լինում, վոր Լենինը դադարեք համառօրէն կռվելուց և չձգտեք յուր առաջադրած նպատակներին հասնել:

«Հեղափոխական կռիւլ գործնականն ու փորձը, ասում եր Լենինը, կը սովորեցնի գյուղացիներին հասկանալ և ըմբռնել իրանց դասակարգային շահերը. գյուղացիներն այդ ճանապարհով կիմանան զանազանել, ով ե իրանց թշնամին և ով՝ բարեկամը»:

Լենինի այդ գուշակութիւնները լիակատար կերպով արդարացան այն կռիւլով, վոր բանվորներն ու գյուղացիներն առաջ տարան կապիտալիստները ու կալվածատերերը դեմ:

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԶԱՐԹՈՒՄԻ ՍԿԻԶԲԸ ՅԵՎ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՅԻԱԼ-ԴԵՄՈՆՍՏԱՏ ԲԱՆՎՈՐԱ-
ԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒ-
ՄԱՐԸ.

Մինչև այդ ժամանակները Հտեսնված գործադուլները մի ալիք է անցնում 90-ական թրվականներին ուսաստանի բոլոր արգյունաբերական կենտրոններով և զրավում է ամբողջ հեղափոխական ինտելիգենցիայի ուշագրուցյունը, վորը միահեծան կառավարության դեմ ունեցած յուր կովի մեջ ընկեր էր վարոնում: Բանվորական բոլոր կենտրոններում յեռ է գալիս հեղափոխական աշխատանքը: Սկզբում բանվորների մեջ կազմակերպվում էյին ինքնակրթության խմբակներ՝ նախապատրաստվելու՝ հեղափոխական աշխատանքի համար, իսկ հետո Ռուսաստանի զանազան քաղաքներում կազմված սոցիալ-դեմոկրատական առանձին կազմակերպությունները անցան բանվորների մեջ լայն մասսայական ազիտացիայի: Պետերբուրգյան ջուլհակների 1896-97 թվականների հռչակավոր գործադուլներից հետո բանվորական շրջաններում կարիք է զգացվում միաձուլյ, ղեկավարող մի կազմակերպության, վորը յուր ձեռն առնեք Ռուսաստանի ամբողջ բանվորական շարժումը և ուղղություն տար նրան:

Յեվ ահա, 1898 թվին, մարտի 1-ին (հին տոմարով) Մինսկ քաղաքում տեղի յե ունենում զանազան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների պատգամավորական առաջին զապանի համագումարը, վորտեղ և հիմք է զրվում միասնական սոցիալ դեմոկրատական կուսակցության, վորից հետագայում ծագեց Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը:

Այդ համագումարի մեջ ընտրված կուսակցական կենտրոնական կոմիտետին հանձնարարվեց հրատարակել կուսակցության մանիֆեստը: Այդ մանիֆեստի մեջ հետևյալն էր ասվում:

«Ռուսական կառավարությունը գովելի յեռանդով ինքն էր ցանում դասակարգային կովի սերմերը, աղքատացնելով, հողազուրկ դարձնելով գյուղացիներին, հովանավորելով պոմեշչիկներին, աշխատող ազգաբնակչության հաշվին կերակրելով ու պարարտացնելով խոշոր կապիտալիստներին: Բայց բուրժուազիական կապիտալիստական հասարակակարգ չի կարելի մտածել պոռանց պրոլետարիատի կամ բանվոր դասակարգի: Այս վերջինը ծնվում է կապիտալիզմի հետ միասին, նրա հետ աճում է, նրա հետ ամրանում և քանի աճում է, այնքան ավելի ու ավելի ուժեղ կերպով առաջ է մղվում կովի բուլելու բուրժուազիայի հետ...»

«Ռուսական բանվորական դասակարգը յուր

ուժեղ ուսերի վրա պետք է տանի և կըտանի ու գլուխ կըբերի քաղաքական ազատութեան նվաճման գործը: Պրոլետարիատի պատմական մեծ առաքելութիւնը իրագործելու դա անհրաժեշտ, սակայն լոկ առաջին քայլն է: Այդ առաքելութիւնն հետևյալն է. այնպիսի մի հասարակարգ ստեղծել, վորի մեջ այլ ևս մարդուն մարդով շահագործելու տեղ չի լինի: Ռուսական բանվորը դեն կըշարտի յուր վրայից միահեծանութեան լուծը այն նպատակով, վորպեսզի ավելի մեծ յեռանդով շարունակի կռիւլը կապիտալիզմի և բուրժուազրայի դեմ մինչև սոցիալիզմի լիակատար հաղթանակը»:

Սակայն ցարական կառավարութեան հավատարիմ ծառաները քնած չեյին: Համագումարի պատգամավորներից շատերը՝ իրանց տեղերը վերադառնալուց հետո շուտով ձերբակալուած են: Կուսակցութեան տեղական կոմիտեաները բռնվեցին, քարուքանդ արվեցին. գրավվեց Յեկատերինսկայի գաղտնի տպարանը, վորտեղ տպագրւում էր «Բանվորական թերթը»:

Ձերբակալութիւնների և բանտարկութիւնների արիքը թավարվում էր ամբողջ Ռուսաստանի վրայով:

Սակայն ցարական կառավարութիւնը այնպես հեշտութեամբ չկարողացավ խորտակել ու ճնշել բանվոր դասակարգի սկսվող զարթնումը,

ինչպես վոր նա կարողացել էր խորտակել նարոդնիկական շարժումը, վորով բռնված էյին սակավթիվ ինտելիգենտական խմբակները, հաճախ ժողովրդական մասսաններից միանգամայն կըտըրված:

Ինչպես վոր առասպելի մեջ, յերբ բազմազլուխ վիշապի գլուխը կտրուած էյին, իսկույն տեղը մի ուրիշ գլուխ էր բուսնում, այդպես էլ այժմ բանվորական նոր հեղափոխական շարժումն էր: Սոցիալ-դեմոկրատական մի կոմիտեի կամ բանվորական մի խմբակի տեղակ, վորը ձերբակալուած էր, իսկույն բուսնում էր մի ուրիշը, վորը շարունակուած էր յուր ընկերների սկսած գործը:

Սիբիրի և Ռուսաստանի ծայրագավառների ամենահեռավոր հյուսիսային ու սովատանջ վայրերն ու բանտերը սկսում են լցվել նոր «քաղաքական կասկածելիներով», վորոնք հսկողութեան տակ էյին, բանվորներով և գյուղացիներով:

Առաջ բանտապետները իրանց բանտերի սահմաններում տեսնում էյին միմիայն հարուստ, աղայական միջավայրից դուրս յեկած քաղաքական հանցավորներ. իսկ այժմ բանտերի մշտական բնակիչները դառնում էյին բանվորները, ավելի ուշ՝ բանվորներն ու գյուղացիները միասին:

Միահեծան կառավարութիւնը շատ առատ էր

ամեն տեսակ ամենանուրբ և ընտիր տանջանքներ հնարելու մեջ: Յարական ծառաները՝ ժանգարմներն ու պահնորդայինները ամբողջ տարիներով պահում են բանտերում, մենարաններում աշխատավոր դասերի ազատագրման համար կըռվող լավագույն մարտիկներին, նրանց յենթարկում էյին սոսկալի հարցաքննությունների, վորոնք խելագարության աստիճանի յեյին հասցնում բանտարկվածներին, ապրելու առանց վոր- և է միջոցի աքսորում էյին հազարավոր վերատերով հեռու ընկած Սիբիր, վորտեղ յերիտասարդ հեղափոխականները անսովոր պայմաններում մեռնում, փչանում էյին սովի, ցրտի և թոքախտի ճիրաններում:

Ահա որինակ ինչպես են կարագրում Ի. Գենկինը 1905 թվի հեղափոխությունից հետո քաղաքական տաժանակիրների վիճակը յուր «Բանտերում և ետապներում» — գրքի մեջ:

«Տաժանակիրների բանտի մեջ մեզ ընդունեց ավագ բանտապետ Նովչենկոն, փորը մի կարճահասակ, հաստ Ֆելդֆելբելական բեխերով և ծաղրականորեն յուրձ ու կարևոր կեցվածքով ու քայլվածքով մարդ էր. խոսում էր բարձր ձայնով, բառերն յերկարացնելով և ցածի շրթունքն ուռցնելով: Այս Նովչենկոն, յերևում էր, շատ հպարտ էր ավագ բանտապետի յուր կոչումով և բանտի ցեյխնաուզի վարիչի պաշտոնով:

«Մերկանալ բոլորովին — հրաման արձակեց նա, յերբ մենք հայտնվեցինք բաղանիքի նախասենյակում. — հանվեցեք, թափեցեք ամեն բան. դեհ, շուտ:

Շտապով սկսեցինք հանել մեր բանտարկյալի շորերը: Բանտարկյալներից մեկը լուռ հավաքեց, կույտ շինեց այդ հագուստները և մի կողմ հրեց, իսկ ինքը ավագ բանտապետը սկսեց մի առանձին գրքի մեջ նշանակել:

— Այս ինչ բան է — հարցրեց նա ինձ, զննելով մի լուսանկարչական պատկեր, վորի վրա հանված էյին իմ ծանոթներս. — ազգականներդ են, ինչ:

— Այո, ազգականներս են. պատասխանեցի յես:

— Վոչ թե «այո», այլ «ճիշտ այդպես»: Այստեղ քեզ կըսովորեցնեն, ինչպես պիտի պատասխանել. սրիկա...

Իմ գրքերի մի մասը մի կտոր կաշիով կապված էր յերկաթե կապանքների ողակից. իսկ Արսենտիյեվի պայուսակում մի կտոր մատիտ գտնվեց.

— Վճրտեղից են այս իրերը. բղավեց ավագը. իրավունք չկա. զրա համար կարցեր կընստեք. ավագակներ, ձեր հերն ու մերը... ինչպես յերևում է ձեզ յերես են տվել... զրա փոխարեն այստեղ ձեզ խելքի կըբերեն...

Շատ յերկար քաշեց այդ տեսարանը— վերավորական նկատողութիւններով, ծաղրական և կծու հարցերով: Ընդհանուր առմամբ սակայն ընդունումը մեզ համար բարեհաջող անցավ: Շատ ավելի վատ կըլինէր, յեթե մենք շատվոր լինեայինք. այն ժամանակ տասնյակ բանտային վերակացուներ մեզ հատուկ պիտի քննեային և անխուսափելի կըլինէր ծեծն ու անարգանքը:

— Այս կնոյս—հրամայեց մեզ Նովչենկոն, ձեռքով ցույց տալով նախասենյակի ուղղութեամբ: Մենք դեռ բոլորովին մերկ, դուրս յեկանք փոքրիկ, ցուրտ միջանցքը: Փելզմանը ցըրտից դողալով, բոբիկ վտանքով կանգնեց վոչ թե ասֆալտյա հատակի վրա, վոր ձյունից խոնավացել էր, այլ այդտեղ փոված կեղտոտ սպիտակեղենի վրա:

— Խորամանկութիւն... սրիկա... բղավեց նրա վրա Նովչենկոն, ամբողջապես կարմրելով հատակի վրա չես ուզում կանգնել... և այլն:

Ահա քաղաքական տաժանակիրները հանդիպման նկարագիրը մի ուրիշ բանտում:

— Ի՞նչ բանի համար ես դատապարտված, հարցրեց նա, ուշադիր ու անթարթ նայելով ինձ, Սեվաստոպոլի պատամբութեան համար... Ահ, այն սրիկայի... ինչպես ե անունը... լեյտենանտ Շմիդի հետ... Քանի տարով միմիայն տասը տարի... Ափսոս, շատ ափսոս, վոր քեզ ել չեն կա-

խել... Յես քեզ անպատճառ սպանած կըլինեյի... Նո՛ւ, անցնենք բորժի: Դու դիտե՛ս, ինչու համար ես քեզ ինձ մոտ ուղարկել:

— Վո՛չ, չգիտեմ:

— Դե՛հ իմացիր, նրա համար, վոր դու անզգամ սրիկա յես... սրիկա:

Յես զարմանքով նայեցի նաչալնիկին: Յերբեք չէյի սպասում այդպիսի սիրալիրութիւն, այն ել առաջին հանդիպման ժամանակ: Վարսալով իմ զարմացական հայացքս, Չերլենիյեվսկին շարունակեց:

— Դե՛հ լսիր, թե քո մասին ինչեր են գրուում Վոլոզդայից...

Ապա նա բարձր ձայնով կարգալ սկսեց մի թուղթ, վորը նա ամբողջ ժամանակը ձեռքում պահում էր: Այդ թղթից դուրս ե գալիս, վոր յես վատ վարքի տեր եմ, դեպի մեծերը վոչ մի հարգանք չունեմ. ուրիշները ել այդ ուղղութեամբ եմ զրգուում. անհնազանդ, համառ բնավորութեան տեր եմ. աշխատում եմ կապ և հարաբերութիւն ունենալ հեղափոխական կազմակերպութիւնների և լրագրերի հետ. և վոր այդ բոլոր պատճառներով անհրաժեշտ ե ինձ առանձնացած պահել:

— Լսեցի՞ր— շարունակեց նաչալնիկը— թե ինչեր են գրուում քո մասին: Դե՛հ իմացիր, վոր ի դուր տեղը քեզ ինձ մոտ չեն ուղարկել: Յես

բոլորին խեղի յեւ բերում: Բոլորի մասին, ով հեռանում է այստեղից, յես տալիս եմ այսպիսի կարծիք. մեղմ է, հանգիստ, պատկառանքով, համեստ ե... Իսկ անուղղաներին յես պարզապես վոչնչացնում եմ: Հասկացար, պարզապես վոչնչացնում եմ... Վերովհետև յես գթոտ մարդ չեմ, ձեզպեսների մոտ չեմ սիրում քաղցրաբանություն անել: (Այդ խոսքերի ժամանակ նաչախիկը մի տեսակ շարագուշակ կերպով ծամըռեց բերանը և մի բեխը նյարդային կերպով վեր թռավ): Լավ իմացիր, զգուշ կաց, յես քեզ վանդակի մեջ կը փակեմ, և յեթե ծպտուն հանես, բերանդ չբանաս այնպես, ինչպես հարկավոր է, ծեծելով կը սատկացնեմ, լսում ես, կը սատկացնեմ... հասկացար:

Բայց այդ անսիրտ, տմարդի տանջանքներն ու ծաղրանքները վոչ միայն չկարողացան կասեցնել հեղափոխական շարժման յեկած ուռձացած հորձանքը, այլ միանգամայն ընդհակառակը, նրանք համակրանք ու սեր զարթեցրին դեպի անվեհեր խիզախ մարտիկները հասարակության ամենալայն խավերի մեջ. և սոցիալ-դեմոկրատ բանվորական կուսակցության շարքերը ամեն տարի նորանոր յերիտասարդ մարտիկներ եյին գալիս լցվում — ամենից առաջավոր բանվորները դառնում եյին հեղափոխական: Հեղափոխական մարտիկների այդ անսիրտ ու վայ-

րագ հարածանքները ավելի ևս նրանց ամրացրնում են կռվի մեջ և նրանց շարքերում բնական ընտրություն են առաջ բերում. թույլերը, փոքրողինները, ինչպես և բուրժուական միջավայրից դուրս յեկած պատահական ուղեկիցները չեյին գիմանում հեղափոխական կրակի տանջանքներին, զրկանքներին և վտանգներին և խմբերով շարքերից դուրս գալիս:

Մնում էր միանգամայն ուժեղը և համարձակը, վորը ընդունակ էր համառ և աննկուն կերպով շարունակելու հեղափոխական կռիվը:

Բացի դրանից, չնայած մենական բանտի և աքսորի բոլոր զրկանքներին ու ծանրությանը, այնուամենայնիվ նրանք նպաստում եյին բանվորական դասակարգից դուրս յեկած առաջավոր մարտիկների հեղափոխական զարգացմանն ու գիտակցությանը:

Բանվորը՝ վաղ առավոտից մինչև ուշ յերեկո աշխատելով գործարանում կամ զավոդում, համարյա բոլորովին ազատ ժամանակ չունեիր ինքնակրթության և զարգացման համար մտածելու, վորովհետև մի կտոր հացի համար յեղած նրա աշխատանքը խլում էր նրա բոլոր ժամանակն ու ուժերը: Իսկ բանտն ու աքսորը նրան ահագին ազատ ժամանակ եյին տալիս, վորը և նա գործ էր դնում յուր ինքնազարգացման համար:

Այսպես աճում և ամրանում եր կոփվելով կռվի մեջ այն հզոր ուժը, վորը հետագայում պիտի խորտակեր կապիտալիստներին և կալվածատերերին:

**ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՃՈՒՄԸ ԲԱՆՎՈՐ-
ՆԵՐԻ ՄԵՋ. ՀԵՐՁՎԱԾԸ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՅԵՎ ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԻ
ՀԱՆԴԵՍ ԳԱԼԸ.**

Բայց չնայած այն հանգամանքին, վոր վերևում մեր նկարագրած շարժումը բանվորական բավական ընդարձակ շրջաններ եր առել յուր մեջ, այնուամենայնիվ նա տնավարի, խմբակավոր բնավորություն եր կրում: Յեվ աստիճանաբար, քանի կառավարություն ճնշումն ու քմահաճույքը ավելի ու ավելի ուժեղանում եր, այդ շարժման մեջ եյին մտնում բանվորական ավելի մեծ շերտեր: Ուստի և թախանձորեն անհրաժեշտ ե գառնում բանվորների առանձին խմբերի նյութական վիճակի մասնակի բարելավման համար մղած կռիվներից անցնել ավելի տևական ու ռազմական անելիքներին:

Այն ժամանակվա բանվորների արամադրությունն առանձնապես ցայտուն կերպով եր արտահայտված մի բանվորի նամակի մեջ, վոր հետևյալ խոսքերով եր բնորոշում գրությունը:

«Բանվորներն այժմ շատ հեշտությամբ կարող են բոցավառվել. տակից արդեն մխում ե ամեն ինչ. բավական ե մի բոց, վոր խկույն հրդեհ ծագի...»

«Առաջ ամեն մի գործադուլ մի նշանավոր դեպք եր, իսկ այժմ յուրաքանչյուր վոք տեսնում ե, վոր մի գործադուլը վոչինչ ե. այժմ հարկավոր ե ազատություն ձեռք բերել, հարկավոր ե կրճքով նվաճել այդ ազատությունը, այժմ մեզ հարկավոր են վոչ թե դրամարկղներ, վոչ թե խմբակներ, վոչ ել նույնիսկ գրքույկներ, այժմ ուղղակի հարկավոր ե սովորել, թե ինչպես պիտի կռիվ գնալ, ինչպես կռվի մեջ հաղթել»:

Այդ ժամանակները արտասահմանում առանց գրաքննություն հրատարակվող «Իսկրա»-ն, վոր սոցիալ-դեմոկրատ կուսակցություն կենտրոնական կոմիտետի որգանն եր, աշխատում եր այդ վոգով բացատրել բանվոր դասակարգի հերթական անելիքները: Նա անդադար կոչ եր անում բանվորներին միահեծան կառավարություն հետ ակտիվ կռվի մտնելու:

1902 թվին մայիսի 1-ին ամբողջ Ռուսաստանում ցույցեր են տեղի ունենում կարմիր դրոշակներով և հեղափոխական յերգերով: Բացի հեղափոխական ուսանողությունից՝ այդ ցույցերին մասնակցում եյին գլխավորապես բանվոր-

ները: Կառավարութիւնը ցուցարարների վրա
բաց է թողնում վոստիկանների և լրտեսների
հսկայական վոնմակը, վորոնք գաղանարար ծե-
ծում են նրանց, խմբերով բանտերը լցնում,
իսկ հետո «գլխավորներին» դատի հանձնում և
աքսորում Սիբիր՝ այնտեղ բնակվելու...

Հեղափոխական շարժման լավագույն ապա-
ցույց կարող են լինել հետևյալ թվերը. 1898—
1900 թվականներին, ուրեմն յերեք տարվա ըն-
թացքում Սիբիր և հեռավոր հյուսիսային նա-
հանգներն են աքսորված 454 մարդ. իսկ 1901
— 1904 թվականներին այդ թիվն արդեն հաս-
նում է 1783 մարդու:

Աքսորվածների մեջ մեծամասնութիւնը սո-
ցիալ-դեմոկրատ բանվորներն էին:

1903 թվի ամրանը արտասահմանում հա-
վաքվում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ բան-
վորական կուսակցութիւն 2-րդ համագումարը,
վորի մեջ 36 տեղական կոմիտեաների և խմբակ-
ների ներկայացուցիչներ կային: Այդ համագու-
մարում մշակվում և ընդունվում է սոցիալ-դե-
մոկրատ կուսակցութիւն ծրագիրը, նույնպես և
այդտեղ մինչև այդ ժամանակ միաձույլ կու-
սակցութիւն շարքերում պառակտումի, հերձվա-
ծի սկիզբ է դրվում:

Այդ համագումարի մեջ տարաձայնութիւն-
ներն առաջ յեկան կուսակցութիւն կազմակերպ-

չական կանոնադրութիւն առաջին կետի ընդուն-
ման ժամանակ: Համագումարի մի մասն առա-
ջարկում էր կուսակցութիւնն ավելի ընդարձա-
կել, ավելի մատչելի դարձնել, մուտքը նրա մեջ
ծանր պայմաններով չզգվարացնել:

Մարտովի առաջարկած կանոնադրութիւն
նախագիծը, վոր պաշտպանվում էր համագու-
մարի «փոքրամասնութիւն» կողմից, այդ առա-
ջին կետը հետևյալ կերպով էր արտահայտում.
«Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ կուսակցու-
թիւն անդամ կարող է լինել ամենայն վոք, ով
ընդունում է նրա ծրագիրը և ոժանդակում է
կուսակցութիւնը նյութական միջոցներով և կու-
սակցութիւն կազմակերպութիւններից վորևէ
մեկի ղեկավարութիւնը անձնական դործակցու-
թիւն է ցույց տալիս նրան»:

Իսկ Հենինի առաջարկած կանոնադրութիւն
նախագիծը, վորը պաշտպանվում էր համագու-
մարի «մեծամասնութիւն» կողմից, «փոքրամա-
սնութիւն» նախագիծից նրանով էր տարբերվում:
վոր սա կուսակցութիւն անդամից պահանջում
էր (բացի ծրագրի ընդունումից և նյութական
ոժանդակութիւնից) «կուսակցական կազմակեր-
պութիւններից վորևէ մեկի մեջ անձամբ մաս-
նակցութիւն»: Այդ վեճն ինքն ըստ ինքյան կու-
սակցութիւն կանոնադրութիւն մի քանի բառե-
րի շուրջն էր տեղի ունենում և այն ժամանակ
մի առանձին նշանակութիւն չունէր: Բայց այդ
վեճի մեջ յերևան յեկան «մեծամասնութիւն» և
«փոքրամասնութիւն» դիրքերը:

Այստեղ վեճը վեր է ածվում այն հարցին,

թե ինչպես պետք է լինի ինքը, կուսակցությունը, նրա բնավորությունը, նրա հարաբերությունը դեպի շրջապատի անկազմակերպ մասսան:

Յե՛վ այս հարցերի լուծման ժամանակ արդեն քիչ թե շատ պարզ կերպով հայտնի յե՛լին լինում ուսական սոցիալ-դեմոկրատիայի յերկու ուղղությունները՝ հեղափոխական և համաձայնական:

Մարտովը՝ պաշտպանելով «փոքրամասնության» հայացքները, ապացուցում եր, վոր «ամենևին հարկավոր չե, վոր կուսակցության յուրաքանչյուր անդամ անպատճառ մտնի կուսակցական կազմակերպության մեջ, վորովհետև առանց այդ ել հնարավոր է նրա գործունեությունը հսկողության տակ առնել, քանի վոր կոմիտեաը՝ նրան վորևե գործ հանձնարարելով, միշտ հնարավորություն ունի հետևել նրա քայլերին»:

«Քանի ավելի լայն և ընդարձակ տարածվի կուսակցության անունը— շարունակում եր նա, այնքան ավելի լավ է»:

Այդ վեճն այժմ մեզ ծիծաղելի յե թվում, քանի վոր մենք փորձով արդեն համոզվեցինք, թե ինչքան վտանգավոր է կուսակցության մեջ առնել ամեն մի ցանկացողի, յուրաքանչյուր ուրիշատելի (обыватель):

Յեթե մենք հետևած լինեյինք «փոքրամասնության» խորհուրդներին, այսինքն մենչեխկներին, այն ժամանակ ստիպված կըլինեյինք վոչ միայն ամեն տարի գտել մեր կուսակցությունը պատահական տարրերից, այլ և մեզ ուղղակի կըխեղդեր այդ տարրը, և մենք կուլ կէրթայինք

այդ թանձրամած ուրիշատելական ճահիճի մեջ: Ուստի և «մեծամասնությունը» հանձին կենինի, կատարելապես բանավոր կերպով նրան պատասխանում եր:

«Քանի ավելի ամուր լինի մեր կուսակցական կազմակերպությունը, յուր մեջ առնելով իսկական սոցիալ-դեմոկրատներին, քանի ավելի քիչ լինեն կուսակցության ներսում անկայունություն և տատանումներ, այնքան ավելի ընդարձակ, բազմակողմանի, հարուստ ու արդյունավոր կըլինի կուսակցության ազդեցությունը բանվորական մասսաների այն տարրերի վրա, վորոնք նրան շրջապատում են և նրանից դեկավարվում են»:

Բացի այդ հարցից, «մեծամասնականները», բոլշևիկները պնդում և պահանջում եյին կուսակցության ավելի մեծ կենտրոնացում, այդ իսկ պատճառով նրանք պահանջում եյին, վոր կուսակցության կենտրոնական կոմիտեաը մեծ լիազորություններ ունենար, կուսակցության անդամները ավելի խիստ կարգ ու կանոնի, դիսցիպլինայի յենթարկվեյին, վորովհետև միահեծան կառավարության հզոր կենտրոնացած ապպարատին անհրաժեշտ եր հակադրել մեր կուսակցական կենտրոնացած, դիսցիպլինայի յենթարկված ապպարատը, վորպեսզի հնարավոր լիներ մեզ համար հաջող կերպով կռվել նրա դեմ:

Ահա սրանք եյին ընդհանուր գծերով այն տարածայնությունները, վորոնք յերկու մասի բաժանեցին սոցիալ-դեմոկրատ կուսակցությունը: Թեև այն ժամանակ այդ տարածայնություն-

ները յերկու ֆրակցիաների կողմից ել աննշառ եյին համարվում, բայց այդ մոմենտից սկսած նրանց մեջ ամենակատաղի կռիվ ե սկսվում թե կենտրոնում և թե գավառներում:

Այդ ժամանակից սկսած մենչեիկները մեջ ավելի ու ավելի մեծ թեքում ե կատարվում դեպի աջ, դեպի լիբերալ բուրժուազիան:

Իսկ ընդհակառակը բոլշեիկների շարքերում սկսում ե առաջ տարվել ավելի հետևողական հեղափոխական, մարքսիստական գիծը, վորը կովի մեջ միացնում, կռում կոփում ե կուսակցության անդամներին:

Բոլշեիկները և մենչեիկները մեջ յեղած տարբերություններն ավելի ցայտուն կերպով յերևան յեկան այն ժամանակ, յերբ 1905 թվականի հեղափոխության նախորդակին աճել, ընդարձակվել սկսեց բանվորական լայն մասսաների հեղափոխական շարժումը, ինչպես և սկսեց զարթնել նաև գյուղացիությունը և յերբ անհրաժեշտ դարձավ բանավոր վիճաբանություններից ու կռիվներից անցնել հեղափոխական իրական քայլերի:

Բոլշեիկներն իսկույն և յեթ սկսում են հեղափոխության հնարավոր ընթացքի վերաբերյալ իրանց յենթադրությունները կառուցանել և հիմնավորել, մի ընթացք, վորի մեջ պրոլետարիատը պիտի հիմնվեր գյուղացիները հետ կապած միության վրա:

Մենչեիկները վոչ մի նշանակութուն չե-

յին տալիս գյուղացիությանը, համարելով նրան հետադեմ ուսակցիան մի մասսա և հեղափոխության հնարավոր ընթացքի վերաբերյալ իրանց յենթադրությունները նրանք սկսում եյին հիմնել լիբերալ բուրժուազիայի հետ ունենալիք միության վրա. ճշմարիտ ե, նրանք վախենում եյին այդ մասին բաց կերպով արտահայտվել, սակայն այդ բանը անխուսափելի կերպով բղխում եր նրանց գործելակերպի ամբողջ ընթացքից:

Մենչեիկների կարծիքով պրոլետարիատը հեղափոխության մեջ դեկավարող դեր չպիտի խաղար. այդ դեկավարող դերը պիտի խաղար լիբերալ բուրժուազիան՝ կապիտալիստներն ու լիբերալ պոմեշչիկները, ուստի և մենչեիկները անհրաժեշտ են համարում նրանց ողնել, աջակցել և նույնիսկ նրանց հետ համաձայնություն կնքել:

Բոլշեիկները մատնացույց անելով և քննադատելով լիբերալ բուրժուազիայի անկայունությունը, պրոլետարիատի ամենահուսալի դաշնակիցը գյուղացիության են համարում, վորովհետև գյուղացիությունը ներկա մոմենտում շահագրգռված ե վոչ այնքան մասնավոր սեփականության պահպանումով, վորքան կալվածատերերից հողը խլելով:

Այդտեղից բղխում ե բոլշեիկների գործնական լոզունգը, վորը արտահայտված ե 3-րդ հա-

մագուստարի սեզոյուցիայի մեջ. «Պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխական—դեմոկրատական դիկտատուրա»:

Բոլշեվիկները իրանց անմիջական անելիքն եյին համարում հեղափոխութեան ժամանակ իրանց վրա վերցնել բանվորական մասսաների զինված ապստամբութեան կազմակերպութեան և դեկավարութեան նախաձեռնութիւնը, մինչդեռ մենշևիկները բավականանում եյին ազիտացիա անել հոգուտ մասսաների ինքնազինման:

Այդ տակտիկական դեռ այն ժամանակ պայծառ կերպով յերևան եր բերում մենշևիկական կուսակցութեան դավաճան բնույթը, վորը նրանք հանդես բերին 1917 թվի հեղափոխութեան ժամանակ՝ խաղալով բուրժուազիայի համար կամակատար սպասավորի դեր, մի դեր, վոր մենշևիկները, վորպես կուսակցութիւն խաղում են և մինչև այսօր:

=====

ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՍՈՅԻԱԼԻՍՏ-ՀԵՂԱՓՈՒՍԿԱՆՆԵՐԻ (ԵՍ.ԵՌ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեան դավաճանական բնույթը, վոր յուր ամբողջ ընդարձակութեամբ ծավալվեց մեր որերում, ի հայտ բերվեց մեր կոմսոնիս-բոլշեվիկները կուսակցութեան միջոցով համարյա եսեռական

դավաճանական կուսակցութեան ծագման քիսի որից: Չնայած եսեռների յերևութական «ճախութեանը» և «սոցիալիստական» կուսույումով պարզարվելու ձգտումին, մենք հանձին սոցիալիստ-հեղափոխական կուսակցութեան, միշտ տեսել ենք ամենախիսկական բուրժուազիական մի կուսակցութիւն, վորին մենք «ռումբով լիբերալներ» անուան եյինք տալիս:

Մեր այս վերաբերմունքը դեպի ես-եռները կուսակցութիւնը մենք պարզ կերպով արտահայտել ենք 1903 թվին, 2-րդ համագումարի սեզոյուցիաներից մեկի մեջ:

Այդ սեզոյուցիայի մեջ մենք ասում եյինք: «Ես-եռները տեսականապես ու գործնականապես ընդդիմադրում են մեր կուսակցութեան ջանքերին՝ ի միձուլել բանվորներին մի անկախ ինքնուրույն քաղաքական կուսակցութեան մեջ. ընդհակառակը նրանք աշխատել են բանվորներին շարունակ պահել քաղաքականապես անձև, անկազմակերպ դրութեան մեջ, վոր ընդունակ լինի լոկ վորպես գործիք ծառայել լիբերալ բուրժուազիայի ձեռքում:—Համագումարը գտնում ե, վոր ես-եռական կուսակցութիւնը հանդիսանում ե վոչ ավելի քան մի բուրժուազական—դեմոկրատական ֆրակցիա, այսինքն բուրժուազիայի ձախ թիւը:

Յեւ հետո. «Վոր ես-եռները իրանց բուր-

ժուլագիական ձգտումները առաջ են տանում սոցիալիզմի դրոշակի տակ», ուստի և համագումարը եսեռական կուսակցութեան գործունեութեանը համարում ե վնասակար վոչ միայն պրոլետարիատի քաղաքական զարգացման համար, այլև միահեծանութեան դեմ մղվող ընդհանուր դիմադրական կռիւի համար» : Եսեռների կուսակցութեանը ձգտում եր յուր մեջ միացնել ամենաանհարկը տարբեր՝ ինտելիգենցիան, գյուղացիներին և բանվորներին, վորոնց շահերը յերբեք չեր կարելի իրար հետ հաշտեցնել :

Մենք շատ անգամ ենք ամենախիստ քննադատութեան յենթարկել այդ «հարգելի» կուսակցութեան դեկլարաների անամօթ շարժատանութեանը :

Մենք ցույց եյինք տալիս և բացատրում, վոր չի կարելի գյուղացիութեանը միատարր մի դասակարգ համարել—միատեսակ տնտեսական շահերով : Գյուղն ել ե շերտավորվում—այնտեղ ել առաջ են գալիս հարուստ կուլակներ, միջին գյուղացիներ և աղքատներ—ասում եյինք մենք : Գյուղի մեջ ել դասակարգային կռիւ գոյութեան ունի հարուստների և աղքատների միջև, այդ պատճառով չի կարելի բոլոր գյուղացիներին մի կուսակցութեան մեջ, այն ել սոցիալիստական կուսակցութեան մեջ միացնել :

Հնարավոր չե նույնպես այդ կուսակցու-

թեան մեջ մացնել բանվորներին և ինտելիգենցիային, վորովհետև ինտելիգենցիան ևս միատարր մի խմբավորում չե : Ինքն ըստ ինքեան հասկանալի յե, վոր նրանց այդ մտադրութեանը հենց սկզբից ուրիշ կերպ չեր կարելի անվանել, քան յեթե ամենաանամօթ աչքակապութեան : Եսեռների կուսակցութեանը աշխատավորների պաշտպան չեր կարող լինել նաև ինքնակալութեան դեմ կռվելու յուր մեթոդներով—ցարական աչքի ընկնող չինովնիկների առանձին սպանութեաններով (տերրորով) :

Եսեռների կուսակցութեանը սկզբում անգիտակից, իսկ հետո նաև գիտակցաբար յուր շուրջն եր հավաքում մասսաներին, ինչպես այդ պատահեց 1917 թվին, վորպեսզի գրանց մասնի կապիտալիստների և պոմեշչիկների ձեռքը :

Բուրժուազիայի դեմ նա խոսքով եր միայն կռվում, իսկ իրականութեան մեջ համաձայնվում եր նրա հետ : Յուր ծրագրի մեջ բառերով նա խոստանում եր պոմեշչիկներից խլել հողը և տալ գյուղացիներին, բայց իրականութեան մեջ ոգնում եր կալվածատերերին պաշտպանել այդ հողը գյուղացիներից, խլելով և ձերբակալելով գյուղացիական կոմիտեաները 1917 թվին :

Եսեռները մենչևիկների պես խոսքով դեմ եյին պատերազմին, բայց իրականութեան մեջ

զինվորներին քշում եյին գերմանացիները դեմ կովելու—կապիտալիստների և պոմեշչիկների շահերի համար:

Իսկ յերբ պրոլետարիատի հաղթական ձեռքը գյուղացիների հետ միասին 1917 թվականի հոկտեմբերին խորտակեց, վոչնչացրեց կապիտալիստների և պոմեշչիկների կառավարութիւնը, ես-երները սովի վոսկրացած ձեռքերով ոգնում եյին կապիտալիստներին՝ խեղդելու ապստամբութեան դրոշը պարզած ուսս ժողովրդին:

Նրանք սկզբում ոգնում եյին չեխո-սլովակներին և սպիտակ-գվարդիականներին՝ ազատելու Ռուսաստանից ամենահացաշատ նահանգները՝ Ուկրայնան, Կովկասը, Սիբիրը, Ուրալը—վորպեսզի սովի միջոցով անձնատուր անեն բանվորներին և գյուղացիներին և նրանք նորից կապիտալիստների ու պոմեշչիկների իշխանութեան տակ ձգեն:

Բայց յերբ նրանց այդ չի հաջողվում, նրանք սկսում են քայքայել, քարուքանդ անել մեր արդյունաբերութիւնը. խորտակել յերկաթուղիները, կամուրջները, այրել, հրդեհել գործարանները, զավոզները, նավթահորերը և այլն:

Բայց յերբ աշխատավորների շահերի համար հերոսաբար կանգնած Կոմմունիստական կուսակցութիւնը նրանց յուրաքանչյուր մի

հարվածին յերկու հարվածով եր պատասխանում, ես-եռներն հասկանում են, վոր նրանց բոլոր անհաջողութիւններն առաջ են գալիս այն պատճառով, վոր Ռուսաստանում աշխատավորների ապստամբութիւնը զեկավարում ե մի այնպիսի միաձուլ, հզոր կազմակերպութիւն, ինչպիսին ե Կոմմունիստական կուսակցութիւնը: Այդ իսկ պատճառով նրանք վորոշում են իրանց հարվածներն ուղղել այդ կուսակցութեան դեմ—քայքայել, քարուքանդ անել, ուժասպառ անել մեր կուսակցութիւնը և այդպիսով բանվորներին և գյուղացիական մասսաներին առանց զեկավարութեան թողնել, հեղափոխութիւնը զրկել հեղափոխական զեկավարող շտաբից:

Յե՛վ այն ժամանակ պոմեշչիկներն ու կապիտալիստները հեշտութեամբ կարող են դատարկ ձեռքերով վերցնել, նվաճել բանվորներին և գյուղացիական մասսաներին, վորոնք զրկված են զեկավարող կենտրոնից: Մասսաներին նորից կարելի կըլինի հանգստացնել ծեծով ու սպանութիւններով, և հետո այդ մասսաները նորից կարելի յե հանձնել իրանց նախկին ճորտատերերի՝ կապիտալիստների և պոմեշչիկների ձեռքը:

Այդ սատանայական—անգութ ծրագիրն անկասկած ուղիղ եր:

Բայց ես-եռներն իրանց հաշիվների մեջ սխալվեցին: Նրանք ինկատի չառան այն հան-

գամանքը, վոր Կոմմունիստական կուսակցությունը բաղկացած է հանդուգն, համարձակ, ցարական կառավարութեան դեմ մղած կռիւ մեջ յեփված առաջավոր բանվորներից և փորձված անվեհեր խիզախ առաջնորդներից:

Բացի դրանից, Կոմմունիստական կուսակցությունը աշակցություն էր գտնում անկուսակցական բանվորների և գյուղացիական մասսաների լայն շրջանների կողմից, վորոնք առում էյին բուրժուազիային և պոմեշչիկներին և շեյին ցանկանում նորից ճորտ դառնալ նրանց ձեռքը:

Ես-եռները արտասահմանյան կապիտալիստներին՝ անգլիացիներին և Ֆրանսիացիներին փողերով սկսեցին իրանց դավաճանական «աշխատանքը»:

Նրանք մի շարք մահափորձեր կազմակերպեցին Կոմմունիստական կուսակցութեան ամենաաչքի ընկնող անդամներին՝ Լենինին, Զինովյեփին, Տրոցկու, Վոլոգարսկու և ուրիշներին դեմ:

Ահա ինչպէս է նկարագրում այդ «աշխատանքը» նախկին ես-եռ Սեմյոնովը.

«Կարևոր էմ համարում նկատել, վոր ես-եռական կուսակցութեան կենտրոնական Կոմիտեաին մեջ տերրորիստական ախտերի (այսինքն կոմունիստների դեկավարներին սպանելու) նպատակահարմարութեան և կարելիութեան միտքը

այդ ժամանակ արդեն բոլորովին պարզ էր և հայտնի:

«Ես-եռների կենտրոնական Կոմիտետը կարևոր համարեց (Կոմմունիստներին դեմ մահափորձեր պատրաստելու համար) մի խմբակ ստեղծել, վորի կազմակերպումը հանձնարարեց Ռաբինովիչին, (վորը Սահմանադիր Ժողովի անդամ էր):

«Ռաբինովիչը սկսեց խմբակի համար հարմար աշխատանքներ գտնել: Մասնավորապես ինձ դիմեց նա մտնել խմբակի մեջ և յես նրա հետ ունեցած խոսակցությունիցս համոզվեցի, վոր այդ խմբակի հիմնական նպատակը տերրորիստական աշխատանքն է:

«Կոնուպլեփան շուտով ես-եռական կենտրոնական Կոմիտետին առաջարկեց Լենինին տերրորի յենթարկել:

«Յես ձեռնարկեցի—առում է Սեմյոնովը մի այլ տեղ-կազմակերպել կենտրոնական մարտական մի խումբ: Այդ խմբի մեջ մտան Փետրորովը, Սերգեյեփը, Ռասովը, Զելենկովը, Կոնուպլեփան և Իվանովը:

«Վորոշվեցավ հետապնդել Զինովյեփին և Վոլոգարսկուն՝ իմանալու համար, թե նրանք վորտեղ են ապրում, վորտեղ են լինում և վորոշելու համար սպանությունը կատարելու ամենա-

հարմար տեղը: Հետապնդումը հանձն էյինք առել յես և Ֆեոդորովը:

«Մենք վորոշեցինք — ասում ե նույն Սեմյոնովը — վոր տեխնիկական տեսակետով ավելի հեշտ եր սպանել Վոլոդարսկուն և նրան ըսպանելու խնդիրը առաջին հերթին դրինք: Վրձոնեցինք Վոլոդարսկու ավտոմոբիլը կանգնեցնել Պետերբուրգից Ոբուխովսկու զավոդը տանող ճանապարհին. դրա համար տեղ ընտրեցինք մի մատուռի մոտ, վորտեղ ճանապարհը պտույտ ե գալիս, բավականին մի խուլ վայր: Ավտոմոբիլը կանգնեցնելու համար մենք մտածում էյինք ճանապարհի վրա ցաք ու ցրիվ լցնել ջարդված ապակի կամ մեխեր, վորով ավտոմոբիլի անիվները կըփչանային կամ թե չե մտածում էյինք ավտոմոբիլի առաջից ձեռքի մի ուումը նետել, ուղղական տեսակի: Զինովյեվին շարունակում էյինք հետապնդել, առանց ինկատի ունենալու առժամանակ վորև ե շոշափելի ծրագիր: Միաժամանակ մենք հետապնդում էյինք Ուրիցկուն, կարևոր համարելով սպանել նրան:

«Ուրիցկու հետապնդումը, մեր հանձնարարությամբ կատարում եր Կոնսպլեվան, վորը այդ նպատակով տուն եր վարձել նրա բնակարանի դիմաց: Հետո, մենք վորոշել էյինք սպանել Լենինին և Տրոցկուն: Մյո գործի նախապատրաստության համար, յերբ Վոլոդարսկուն

սպանելու նախապատրաստական հիմնական աշխատանքը քիչ թե շատ արդեն կարելի յեր կատարված համարել, Մոսկվա ուղևորվեցին Գվոզդը, Զելենկովը, Ուսովը և ուրիշները»:

Ինչպես հայտնի յե, ես-եռական կուսակցության այդ ավազակային աշխատանքի արդյունքըն այն ե լինում, վոր մեր կուսակցության ղեկավարներից նրանց հաջողվում ե սպանել Վոլոդարսկուն և Ուրիցկուն, և վիրավորել Լենինին:

Մեր Կոմունիստական կուսակցությունը քայքայելու համար, ինչպես վոր դա հետո դադարանում հայտնի յեղավ, այլ և արյան գետերի մեջ խեղդելու բանվորների և գյուղացիների ապստամբությունը, ես-եռական կուսակցությունը դաշն ե կապում ամենաաջխամբակների և կուսակցությունների՝ ճորտատեր պոմեշչիկների, սև հարյուրակային տերտերների, կապիտալիստների և այլ նման տարրերի հետ:

Անգլիական և ֆրանսիական կառավարությունները ամեն տեսակ միջոցներով աջակցում և ոժանդակում էյին աշխատավորների դավաճան այդ կուսակցությանը և ոժտում էյին նըրան մեծ գումարներով: Մի խոսքով իրան «սոցիալիստական» համարող ես-եռական կուսակցությունը դարձել եր ամենախայտառակ մի կուսակցություն, վոր չեր քաշվում և վոչ մի միջոցից յետ չեր կենում բանվորներին ու գյու-

դացիներին նորից պոմեշիկները և բուրժուազիայի ճորտ դարձնել: Յե՛վ կոմսոնիստական կուսակցությունը անյերևակայելի ջանքեր թափեց, մինչև վոր հաղթեց և հիմնովին վոչնչացրեց բուրժուազիական հակահեղափոխության ամենավտանգավոր և ամենավնասակար կուսակցություններից մեկը:

ԲԵԿՈՒՄ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԳԻՏԱԿ-ՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(1905 թվի հունվարի 9-ի դեպքերի իմաստն ու նշանակությունը).

«Աստված յերկնքում և ցարը յերկրի վրա» — ահա ոուս գյուղացու յերկու կուռքերը, վորոնք ամբողջ պատմության ընթացքում հաստատուն կերպով ամբացել են ոուս գյուղացու դիտակցության մեջ:

Մեր պատմության ամենահեռավոր շրջաններից սկսած մինչև վերջին ժամանակներս այդ յերկու մռայլ կուռքերը մնացել են հաստատուն և անսասան, չնայած այն հակայական ցընցումներին և ամեն տեսակ աղետներին, վորոնք ցնցեցին մեր անձայրածիր հետամնաց յերկիրը: Մեր ամբողջ պատմության ընթացքում վոչ մի առաջնորդ, գյուղացիական խռովությունների և ապստամբությունների մինչև անգամ ամենահանդուգն ղեկավարներից և վոչ մեկը չի հա-

մարձակվել բացարձակ կերպով դուրս գալ այդ յերկու «սրբազան անձերի» դեմ: Մտենկա Ռազինը անխնա կերպով վոչնչացնում էր բոյարներին, չինովնիկներին և ազնվականներին, բայց յուր ձայնը Մոսկովյան թագավորի դեմ չեր բարձրացնում: Յեմելյան Պուգաչովը աջ ու ձախ վոչնչացնում էր ազնվականներին, բայց իրան հայտարարում էր վորպես Պյոտր III կայսր: Նույնիսկ խիզախ հեղափոխականները, խռովաբար-նարողնիկները, յերբեմն ծածկվում, պաշտպանվում էին ցարական արտոնագրերի տակ, չհամարձակվելով բացարձակ կերպով դուրս գալ «ցար-հայրիկի» դեմ այն տգետ ու խավար գյուղացիական մասսաների առաջ, վորոնք հեծում էին պոմեշիկական և ցարական լծի տակ:

Գյուղացիական կարիքների համար հոգ տանող «ցար-բարեգործի» կամ «ցար-հայրիկի» մասին յեզած լեգենդան գյուղացիության գիտակցության մեջ ավելի ևս հաստատվեցավ 1861 թվից հետո, յերբ գյուղացիները ազատագրվեցին: Այդ լեգենդան յերկար ժամանակ մի հուժկու զենք էր ցարական կռավարության ձեռքում այն կովի մեջ, վոր նա մղում էր ինտելիգենտ հեղափոխականների դեմ:

— «Ո՞վ սպանեց ազատարար ցարին» — հարցրի յես իմ հորը՝ Մոսկովայի նահանգի միջակուռնուր մի գյուղացու, յերբ յես ղեռ մանուկ եյի:

— «Ուսանողները» — յեղավ իմ հարցի պատասխանը:

— «Իսկ ովքեր են ուսանողները»:

— «Ազնվականների և պոմեշչիկների գավակները»:

— «Բայց ինչո՞ւ համար սպանեցին նրան»
— շարունակեցի յես հարցնել հորս:

— «Նրա համար, վորովհետև «ցար-հայրիկը» գյուղացիներին ազատութիւն տվեց»:

Այս և սրա նման լեզենդաները շատ ամուր կերպով նստել եյին գյուղացիների խավար գըլուխների մեջ:

Նույնպիսի լեզենդաներով եյին բացատրում գյուղացիները հաճախ նաև իրանց սակավահողութիւնը՝ յերբ նրանք ազատվեցին ճորտատիրական կախումից:

— «Յար-հայրիկը հրամայել է ամբողջ հողը խլել պոմեշչիկներից և տալ գյուղացիներին — ասում եյին նրանք — իսկ ցարական չինվոնիկները այդ ցարական արտոնաթղթերը ծածկում, թագցնում եյին գյուղացիներին»:

Հաճախ գյուղացիների մեջ այդ հողի վրատեղի յեյին ունենում խռովութիւններ և անկարգութիւններ, վորոնք սովորաբար վերջանում եյին գյուղացիների մասսայական գանակոծութեամբ, իսկ նրանց «գլխավորներին» ցարական չինովնիկները ուղարկում եյին կամ տաժանա-

կիր աշխատանքների կամ մյուս աշխարհը: Բայց ցարական կառավարութեան այդ «խաղաղացման» մեթոդները, վորոնք չափազանց զգալի յեյին գյուղացիական մեղքերի համար, յերբեք չեյին տատանում գյուղացիութեան հավատը դեպի «բարեգործ» «ցար-հայրիկը»: Գյուղացին այդպիսի դեպքերում ասում էր. «Աստված շատ բարձր է, իսկ ցար-հայրիկը՝ շատ հեռու»:

Ուրիշ բան է, յեթե ցար-հայրիկը իմանար գյուղացիական բոլոր կարիքների ու նեղութեան, նրա բոլոր տանջանքների մասին, անշուշտ նա կըթեթեացներ նրա ծանր բեռը»...

Յե՛վ գյուղացիները, յերբ արդեն նրանց դրութիւնը բոլորովին անտանելի յեր գառնում, ամբողջ գյուղերով և վոլոստներով վտաւոր պատգամավորներ եյին ուղարկում ցար-հայրիկի մոտ:

Ռուս գյուղացիութեան պատմութիւնը լիքն է այդպիսի տխրահուշակ ուղևորութիւններով:

Պատգամավորները հաճախ մի քանի հարյուր վերստ վտաքով գնում եյին ցար-հայրիկի մոտ: Սովորաբար այդ ուղևորութիւնները և հետիտան պատգամավորութիւնների պատմութիւնը նրանով էր վերջանում, վոր պատգամավորներին լավ շարդում եյին ու բանա դնում:

Սակայն չնայած այդ շոշափելի որինակներին, դեպի աստված և դեպի «ցար-հայրիկն»

յեղած փրկարար հավատը շարունակոււմ եր ապրել ուուս գյուղացու գիտակցութեան մեջ:

Յեզվ փոչինչ զարմանալի բան չկա դրա մեջ: Գյուղացիական տնտեսութեան լճացած ցած տեխնիկան ամբողջովին և լիակատար կերպով նրան կախման մեջ եր դնում շրջապատող բնութեան խորհրդավոր ու անհասկանալի ուժերից, վորոնք անզարգացած գյուղացիական գիտակցութեան մեջ անձնավորվում եյին վորպես ամենագոր արարիչ—աստված, վոր նստած ե յերկնքում, նման յերկրի վրա նստած ցարին, և յուր քմահաճույքով ցած ե ուղարկում յերբեմն գանազան դժբախտութեաններ, յերբեմն ել «յերկրային առատ պարգևներ»:

Նույն այդ տնտեսական կենցաղական շրջապատն եր, վոր անունդ եր տալիս և ամրացնում այն հավատը, վոր գյուղացին տածում եր դեպի յերկրային թագավորը, վորը գյուղացիութեան համար որենքներ եր սահմանում, պահում պահպանում եր նրա ստացվածքը զանազան «թշնամիներից» և այլն:

Սակայն ցարի արդար որենքները խախտում եյին նրա գործադիր մարմինները—չինովնիկները, վորոնց հետ գյուղացին ստիպված եր անմիջական կերպով գործ ունենալ:

Այս լճացած «համատարած հոգեբանութեանը»—Գլեր Ուսպենկու արտահայտութեամբ, բազմ

մաթիվ դարերի ընթացքում կանգուն եր մնացել, մինչև վոր «պետական կապիտալը» շարժեց, խորապես տատանեց գյուղացիութեան նահապետական հիմունքները, իսկ «արքա-սովը» գյուղացիութեան յերիտասարդութեանը քաղաք քեց աշխատանքի ու վաստակի:

Իեպի աստված և դեպի ցարն յեղած գյուղացիական կույր հավատը դեռ յերկար ժամանակ կանգուն եր բանվորական դասակարգի հետամնաց խավերում նույնիսկ խոշոր արդյունաբերական կենտրոններում, վորտեղ նա գյուղերից ու ավաններից եր յեկել ընկել:

Այդ փաստը հատկապես փայլուն կերպով յերևան յեկավ 1905 թվի հունվարի 9-ի դեպքերի նախորդակին: Անցյալի մնացորդները չափազանց նպաստավոր հող եյին ստեղծում արկածախնդիր տերտեր Գապոնի ազխտացիայի համար:

Ահա ինչպես ե նկարագրում ակնատեսներից մեկը բանվորների այդ տրամագրութեանները. «դա այն յերեկոյան եր, յերբ զանազան իշխանավոր մարդկանց մոտ ապարդյուն կերպով գնալ գալուց և գլխացավանքներից հետո Գապոնը «միութեան» Նարվայի բաժնում արտասանեց յուր հուշակավոր ճառը. «Ընկերներ, մենք զնացինք Սմիլնովի մոտ (Պուտելովյան զավոդի դիրեկտորը), ասում ե Գապոնը, փոչինչ չստացանք. զնացինք վարչութեան, փոչինչ դուրս

չեկավ, գնացինք քաղաքապետի մոտ, դարձյալ վոչինչ. մինաստիւրների մոտ գնացինք—եւլի վոչինչ. այժմ գնանք, ընկերներ, գնանք ցարի մոտ»—այսպես եր խոսում Գապոնը բանվորներին:

—«Գնանք»—պատասխանում է բանվորների բազմահազար ամբոխը՝ գրավված յուր «պաշտպան-հայրիկի» պարզ արամաբանությամբ:

—«Յե՛վ յեթե պետք լինի, կյանքներս կըզոհենք, բայց կըհասնենք ուղածներին—շարունակում է Գապոնը:

—«Կըզոհենք, կըհասնենք»:

Պատահականութուն չեր նաև այն յերևույթը, վոր կմախքացած, վտիտ, քաղաքականորեն տգետ մի տերտեր կարող եր գրավել բանվորների արամադրութունը և առաջնորդել նրանց շարժումը, իսկ հեղափոխական կուսակցութունների ներկայացուցիչները համարյա անմիջական մերձեցում չունեյին բանվորներին: Տգետ, մուռացված, անկուլտուր գյուղական հոգևորականութունը համարյա պատմության ամբողջ ընթացքում վոչ նյութականապես և վոչ հոգևոր կերպով չեր բարձրացել լայն գյուղացիական մասսաների մակերևույթից և գյուղացիության հետ միասին նույն ճորտական ստրկական լուծն է քաշ ավել մինչև կապիտալիզմի ծագումն ու առաջացումը:

Այստեղից արամաբանորեն բղխում եր կիսագյուղացիական հետամնաց բանվորական մասսաների այն անսահման վստահութունը դեպի տերտերական մաշված փիլոն հագած մարդը և այն հանրածանոթ անվստահութունը դեպի հեղափոխական ինտելիգենցիան, վորպես մի տարր, վոր յուր անցյալում կապված է յեղել աղաների և պոմեշչիկների հետ: Այդ հոգեբանական մնացորդները բավականին ճարպիկ կերպով ոգտագործում եր ցարական կառավարութունը հանձինս յուր հավատարիմ սպասավորի՝ պահնորդային բաժանմունքի:

Բայց դա վերջին բռնկումն եր: Յերբ բանվորները տերտեր Գապոնի առաջնորդությամբ խաչվառներով և ցարի պատկերներով պալատ եյին քայլում ճշմարտութուն և արդարութուն գտնելու «ցար-հայրիկի» մոտ և յերբ ցարական արդարության փոխարեն նրանց դիմավորեցին գնդակներով և նրանցից շատերն այդ հիշատակալից որը իրանց գերեզմաններն այնտեղ գրտան, այն ժամանակ գյուղացիական հոգեբանության այն նախկին մնացորդները, վորոնցով հավատն ու վստահութունը վառ եր մնում դեպի «ցար-հայրիկը»—վերջնականապես խորտակվում են բանվորական լայն մասսաների մեջ:

Այդ արյունոտ հիշատակներով լի որվանից սկսած բանվորների գիտակցության մեջ վերջ-

նական բեկում ե կատարվում և նրանք սկսում են հավատով և վստահութեամբ վերաբերվել դեպի հեղափոխական կուսակցութիւնները:

— «Այդպէս ուրմն, նշանակում ե ուսանողները իրավացի եյին*):

Այս խոսքերը ակամայից դուրս թռան մի հասակավոր բանվորի բերանից, յերբ նա լսեց հրացանի առաջին արաքոցները, վորոնք ուղղված եյին խողող կերպով ընթացող բանվորներին: Այսպէս խորտակվում եյին դեպի ցարն յեղած հավատի վերջին մնացորդները:

Բայց հունվարի 9-ի դեպքերից դեռ շատ առաջ Պետերբուրգի գործարանների և զավոդների մեջ ուրիշ բանվորներ ել կային, վորոնք վոչ մի ընդհանուր բան չունեյին դեպի «ցարհայրիկն» յեղած այդ մութ հավատից:

Յարական կառավարութեան տրված մի գեկուցագրի մեջ հետևյալն եր գրվում.

«Վերջին 3—4 տարվա ընթացքում ուսս բարեհոգի յերիտասարդից մշակվում ե կիսագրագետ ինտելիգենտի մի տիպ—գրում ե Այվատոպոլկ-Միրսկին, ժանդարմների շեֆը, այդ գեկուցագրի հեղինակը—վորը յուր պարտքն ե համարում ժխտել կրոնն ու ընտանիքը, արհամարել որենքը, չհնազանդվել իշխանութեանը և ծաղ-

*) Ուսանող կոչումն այն ժամանակները նույն իմաստն ուներ, ինչ վոր հեղափոխական բառը:

րել, սպանել այդ իշխանութեանը: Այդ յերիտասարդութեանից—հանգստացնում ե իրան ժանդարմը—բարեբախտաբար այժմ զավոդներում դեռ շատ չկա, բայց յեղած աննշան քանակութեանը ահաբեկիչ կերպով դեկավարում ե բանվորների մնացած իններտ մասսային:

Բանվորական ագիտատորների և զանազան գործադուլների գլխավորների մեծամասնութեւնը հավաքվում ե կիրակնորյա դպրոցներ» — ինչպիսի սարսափելի յեղեռնագործութեւն:

Այս վերջին յերևույթն արդեն, բանվորական յերիտասարդութեան շրջանում ուսման ու գիտութեան տարածումը յերբեք չեր կարող ցարական կառավարութեւնը տանել, ուստի և գեկուցագրի հեղինակը առաջարկում ե առանձին հսկողութեան տակ առնել բանվորական բոլոր կիրակնորյա և յերեկոյան դպրոցները:

Ահա բանվորական հեղափոխական յերիտասարդութեան այդ կորիզն եր, վոր հետագայում յուր ուսերի վրա տարավ կիսագյուղացիական հոգեբանութեան տեր հետամնաց բանվորական մասսաների դասակարգային գիտակցութեւնը կրթելու, դաստիարակելու աշխատանքի բովանդակ ծանրութեւնը:

Այն ժամանակվա բանվորական յերիտասարդութեան այդ տրամադրութեւնը կարելի յե

արտահայտել բանվորական մի յերգի բառերով,
վոր շատ տարածված եր այն որերին.

Սհա տասնհինգ ասրի յե
Կարելի յե շատ ել անցնի,
Յես դեռ ջահել պատանի,
Դազգահի հետ ծանոթացա:
• Ապրեցի յես այն որից
Մինչև մազերս ձերմակեցին.
Իսկ սե որի համար
Վոչ մի գրոչ չունեմ յես:
Այն վոր գողն ե, վոր շարագործը,
Վոր քաջ կախարդը,
Վոր իմ փողերը առնում ե
Բանվորի արյունը խմում ե:
Ա՛խ, վոչ գողն ե, վոչ շարագործը,
Վոչ ել քաջ կախարդը.
Դա տերտերն ե, դաճառականը.
Դա ձերմակ ցարն ե, մեր հայրիկը:

Ինչպես տեսնում եք, այս յերգի բառերը
լի յեն բուռն ատելությամբ դեպի ցարն ու տեր-
տերը. դրանց մեջ հետք անգամ չկա գյուղացիա-
կան այն տրամագրությունների, վորոնց մասին
վերևում խոսեցինք:

Հունվարի 9-ի դեպքերը ընդմիջտ կըմնան
բանվոր դասակարգի գիտակցության մեջ վոր-
պես մի դարձակետ գյուղացիական պահպանողա-
կան տրամագրություններից դեպի նոր հեղափո-
խական պրոլետարական գիտակցությունը:

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԿՈՎՈՒՄ ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ (ԲՈՒ-
ՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1905 ԹՎԻՆ,
ԱՅԼՅԵՎ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՅԵՎ ԱՆԿՈՒՄԻ ՏԱՐԻՆԵ-
ՐՈՒՄ.

1905 թվականին, հեղափոխական շարժման
արտաքո կարգի բարձր հորձանքը արտահայտվե-
ցավ ամենից առաջ ընդարձակ գործադուլային
շարժումով վոչ միայն Ռուսաստանի արդյունա-
բերական կենտրոններում, այլ և նրա ամենա-
հեռաձայն և հեռավոր անկյուններում:

Ռուսաստանի հարավում՝ Ուկեսսայում «Պոտ-
յոմկին» գրահանավի վրա տեղի ունեցավ նա-
վաստիների ապստամբությունը: Իսկ դրանից ա-
ռաջ, ինչպես արդեն վերևում ասվեցավ հունվա-
րի 9-ին տեղի ունեցան նշանավոր դեքպերը-ցա-
րի պատկերներով և խաչվառներով ձմերային
պալատ դիմող խաղաղ բանվորների հրացանա-
զարկությունը:

Մեր կուսակցությունն այն ժամանակ նա-
խազգուշացրեց բանվորներին, հայտարարելով,
վոր անմիտ ու անոգուտ են ամեն տեսակ ա-
դերսները, բայց բանվորներն այն ժամանակ
չուղեցին լսել: Յեվ ահա, հունվարի 9-ին հա-
րյուր հազարավոր Պետերբուրգյան բանվորներ,
տերտեր Գապոնի առաջնորդությամբ փոխանակ
զենքով, ընդհակառակը սրբերի պատկերներով,

խաչվածներով և ցարի նկարներով շարժվեց դեպի պալատը:

Կատարվեց այն, ինչից վոր նախագգուշացնում եր մեր կուսակցութունը: Յարական գորքերը բանվորներին հրացաններն համագորկերով գիմավորեցին: Հարյուրներով ձյուննի վրա փրփում եյին սպանվածներն ու վիրավորվածները՝ տղամարդիկ, կանայք և յերեխաները:

Այդ որը սպանված բանվորներն թիվը հազարից ավելի յեր:

Այդ որը ցարական գորքերն հրացաններն պայթյուննի տակ վերջնականապես խորտակվեցավ ժողովրդի հավատը դեպի ցար-հայրիկը:

Հունվարի 9 ից հետո ամբողջ Ռուսաստանում արագորեն աճել ե սկսում հեղափոխական շարժումը, վորը թափանցում ե, կարելի յե ասել, հասարակության բոլոր խավերը:

Այդ աճման ազդեցության տակ բուրժուազիան և կալվածատերերը, նույնիսկ նրանք, ովքեր ինքնակալության կողմնակից եյին, սկսում են իրանց հավատը կորցնել դեպի հին կառավարության ընդունակությունը՝ պաշտպանել կալվածատերերի և բուրժուազիայի շահերը: Բանվորների գործադուլային շարժումը լայն հորձանքներով վողողում, լցնում ե ամբողջ Ռուսաստանը, նույնը և գյուղացիական շարժումը գյուղերում:

Գյուղացիներն շարժումը վերջիվերջո դառ-

նում ե այսպես կոչված ագրարային կատաղի ու մրդկային անկարգություններ: Գյուղացիները այրում եյին կալվածատիրական ագարակները, քշում եյին տավարը, հափշտակում եյին կալվածատերերի հողերը և այլն:

Իսկ գյուղացիների դրությունն իրոք վոր անտանելի ծանր եր: Ահա ինչ եր գրում գյուղացիների դրության առթիվ մի պրոկլամացիա, վոր բաց եր թողել մեր կուսակցությունը մի գաղտնի տպարանից:

— Յերը գյուղացիներին աղատեցին, «ազատագրված սարուկներին ստիպեցին հետ գնել այն հողը, վորը հարյուրավոր տարիներ վողողել եյին գյուղացիները իրանց քրտինքով և արյունով: Դա դեռ քիչ ե. միլլիոն ու կես մարդիկ վողոց շարվեցին բոլորովին մերկ, կես միլլիոնի չափ մարդիկ մուրացկանի հողաբաժիններ ստացան, ամեն մեկը քառորդ դեսյատին: Սակավահող ճորտերը վոչինչ չստացան: Հարյուր հազարավոր ծերունիներ Միբիբ քշվեցին նրա համար, վոր կարողացել եյին հողամաս ստանալ, մի բան, վորը կալվածատերերին ձեռնտու չեր: Յեվ որը ցերեկով կատարված այդ կողոպուտի և ավազակության արդյունքը գիտեք, ի՞նչ յեղավ: Այն, վոր գիտնական մարդկանց հաշվելով, մի ազնվական կալվածատիրոջը սրանից տաս տարի առաջ ընկնում եր 640 դեսյատին հող, մի վաճառական կապի-

տալիստին՝ 755 դեպյատին, իսկ մի գյուղացուն, սարսափելի յե նույնիսկ ասել-մի դեպյատինից ավելի քիչ»:

Այս բոլորի վրա ավելանում եյին ամեն տեսակի ծաղր ու վիրավորական վերաբերմունք, վոր գյուղացիների հանդեպ հանդես եյին բերում կալվածատերերը և նրանց ծառաները՝ զեմսկի նաչալնիկները, ուռյազնիկները և գյուղական այդ պաշտոնյաները: Իսկ յերբ գյուղացիները փորձում են «բուստ» անել, խռովություն անաջացնել, այն ժամանակ նրանց յենթարկում եյին ամենաանսիրտ ու անգութ պատիժների: Այսպես որինակ, Սարկովի ու Պոլտավայի նահանգներում գյուղացիական անկարգություններից հետո, վորոնք տեղի ունեցան 1902 թվականին, այդ նահանգների նահանգապետները ինքնիշխան կերպով, հակառակ տիրող որենքի, մի քանի գյուղերի բոլոր գյուղացիներին սաստիկ ծեծում են և այդ քանի համար արժանանում են ցարի պարգևներին:

Միանգամայն հասկանալի յե, վար ժողովրդի հանբերության բաժակը լցվում ե և ցարի, կալվածատերերի և կապիտալիստների դեմ յեղնում ապստամբում են քաղաքներում բանվորները, իսկ գյուղերում՝ գյուղացիք:

Հեղափոխական շարժումը 1905 թվին այնպիսի չափերի յե հասնում վերջիվերջո, վոր ցար-

րական կառավարությունը վախենում ե և շտապում ե հրատարակել «ազատությունների մասին» հոկտեմբերի 17-ի հուշակավոր հրովարտակը, վորը խոստանում եր Պետական Դումա տալ որենսդրական իրավունքներով:

Սակայն այդ հրովարտակը վոչ միայն բնակչությանը չի հանգստացնում, այլ ընդհակառակը, նպաստում ե ավելի լավ կազմակերպվել և յուր իրավունքների համար մղված կռիվը ավելի մեծ թափով շարունակել:

Պետերբուրգում և Մոսկվայում առաջին անգամ առաջ են գալիս բանվորական պատգամավորների խորհուրդներ: Առանձնապես Պետերբուրգի խորհուրդը վճռական կռիվ ե մղում միահեծան կառավարության և կապիտալիստների դեմ:

Միահեծան կառավարությունն ու նրա հետ կապիտալիստները մահու չափ սարսափեցին և վճռիցին մի կողմից վճռական կռիվ մղել նեղափոխության դեմ, մյուս կողմից վորոշ զիջումներ անել գյուղացիներին, վորպեսզի դրանով նեղափոխական կուսակցությունների վտառի տակի հողը խլեն:

Ահա ինչպես ե նկարագրում յուր հիշողությունների մեջ այն ժամանակների կառավարչական շրջանների տրամադրությունը ցարի հավատարիմ ծառան՝ Ս. Վիտտեն, վոր այն ժամա-

նակ մինիստրները խորհրդի նախագահ եր:

«Մի անգամ Յարսկոյե Սելւո յեկա նորին մեծությանը զեկուցում տալու ասում է Վիտաեն, հոկտեմբերի 17-ից հետո: Ընդունարանում ինձ հանդիպում է Տրեպովը (այն նշանավոր գեներալը, վոր հայտնի հրամանն է արձակել «չխնայել փամփուշտները և դատարկ համազարկեր չտալ») ապստամբ բանվորների վրա), խոսք է բաց անում գյուղացիների համատարած ապստամբությունների մասին և ինձ ասում է, դժբախտությանը վերջ դնելու միակ միջոցն է անմիջապես յեվ լայն չափերով վերցնել կալվածաիրական հողերը յեվ սալ գյուղացիներին: Յես կասկած հայտնեցի, վոր դժվար թե հնարավոր լիներ այժմ, Պետական Դումայի հավաքման նախորդակին, այդպիսի շտապ և քիչ մտածված քայլ անել: Նա ինձ պատասխանեց, վոր բոլոր կալվածատերերը շատ ուրախ կըլինեն այդպիսի միջոցի համար: «Յես ինքս կալվածատեր եմ, ասաց գեներալը, և շատ ուրախ պիտի լինեմ, վոր իմ հողի կեսը ձրի տամ գյուղացիներին. համոզված լինելով, վոր այդ զեպքում յես կըպահեմ հողիս յերկրորդ կեսը»: Թագավորն ինձ ըստ եության վոչինչ չասաց, յերբ յես այդ մասին զեկուցում արեցի նրան, սակայն մի նախագիծ զեկուցում տվեց ինձ՝ ասելով. «մինիստրները խորհրդի մեջ քննության նյութ

զարձրեք այդ խնդիրը. պրոֆ. Միգուլինի զեկուցումն ու նախագիծն է դա»: Դա մի զեկուցագիր էր հողի սիպոդական ոսարացման անհրաժեշտության մասին հոգուս գյուղացիների, վորպես մի միջոց, վոր անհրաժեշտ էր անմիջապես ձեռք առնել ինքնակալ քագավորի անմիջական կամով յեվ հրամանով: Ի հարկե, յես իսկույն հասկացա, թե ով էր այդ զեկուցագիրը թագավորին մատուցել:

Զեկուցումից հետո, Տրեպովը նորից հանդիպեց ինձ և վորպես կալվածատեր համոզում էր ինձ, վոր իրագործեմ կյանքի մեջ ինձ տրված այդ զեկուցումի մեջ առաջարկված միջոցը և վորքան կարելի յե շուտ, քանի դեռ գյուղացիությունը չի խլել ամբողջ հողը կալվածատերերից»:

Նույն տեսակի հայացքներ արտահայտում էր նաև Մոսկվայի զեկտեմբերյան ապստամբության հոչակավոր խաղաղացնողը՝ գեներալ Դուբասովը, վորը խաղաղացնելու նպատակներով յեղել էր Կուրսկի և Չերնիգովի նահանգներում:

— «Լավ կըլիներ հենց այժմ և յեթ տալ գյուղացիներին այն հողերը, վոր նրանք ինքնակամ կերպով խլել են, ասում էր Դուբասովը— իսկ հետո ուշ կըլինի, վորովհետև այն ժամանակ գյուղացիները կըխլեն արդեն բոլոր հողերը»:

Սարատովի նահանգի գյուղացիների հեղա-

փոխական շարժման մի ցայտուն պատկեր ետալիս Դ. Մասլովը:

«Հուզմունքներն ու անկարգությունները համարյա միաժամանակ մի քանի գավառներում սկսվեցին, ասում ենա—Սարատովի, Ատկարսկի, և Բալաշովի գավառներում, Այն գյուղերում, վորոնց մեջ ծայր եր առել շարժումը, բոլոր գյուղացիներն առանց բացառության մասնակցում եյին: Նրանք պահանջում եյին, վոր կալվածատերերն իրանց ընտանիքներով հեռանան կալվածներից, պահանջում եյին հացի և մթերքների, հաճախ նաև տնական շարժական իրեղենների բաժանում, պահանջում եյին բատրակների և տնական ծառայողների լիակատար հաշիվները մաքրել և հաճախ այրում, հրդեհում եյին կալվածատերերի տնտեսության մեջ շատ շինություններ:

«Կալվածատերերը գյուղացիների ստիպամբ թողնում եյին իրանց տները, դուրս եյին գնում, և նրանց վերաբերմամբ վոչ մի բռնություն թույլ չեր տրվում: Այս յեղանակով տնտեսությունները ավերելու հետ միաժամանակ, գյուղացիները սկզբունքով վճռում են գարնանից կալվածատիրական հողերը գյուղի համայնքին հանձնել՝ հավասար կերպով ոգտագործելու համար և դրա մասին շատ տեղերում հասարակական վրձիւներ եյին կայացնում: Ուրյադնիկները, ըս-

տրաժնիկները թագնվում են, իսկ տեղ տեղ ել գյուղացիները նրանց բանտարկում են:

«Կալվածատիրական ագարակների վրա հարձակվող գյուղացիներին սովորաբար առաջնորդում ե զինված դուռժինան (խմբակը): Հացի և մթերքների, ինչպես նաև փողի բաշխման գործով զբաղվում են տեղական գյուղացիներից ընտրված կոմիտեները կամ յեղբայրությունները: Տնտեսությունների գրասենյակներում, պետական ողելվածառատներում զբաղված գումարները կամ խմիչքեղենի հարկերը հավաքողների մոտ գտնված գրամները դառնում են հանրային սեփականություն: Գյուղացիները յերկու տեսակ նկատառումներով են բացատրում կալվածատիրական շենքերի հրդեհումը. յեթե շենքերը այրվեն, ապա կալվածատերերը շուտ չեն վերադառնա գյուղ, հետևապես և ավելի հեշտ կերպով կը հաստատվի նոր հողատիրական կարգը. յեթե շենքերն անվնաս մնան, ապա նրանք շատ հարմար բնակարան կը դառնան կազակների համար, վորոնց բոլոր գյուղացիները սաստիկ ատում են:

«Սարատովի գավառում հողային անկարգություններն սկսվեցին Կարաբուլակ գյուղում: Այստեղ հրդեհվում և կողոպուտի յե յենթարկվում Կատկովայի տնտեսությունը:

«Գյուղի մեջ թալանվում ե պետական ո-

ղեվաճառանոցը: Յերբ տնտեսութեան մեջ սկըսվում է թալանը, կառավարիչը, վոր ժամ առ ժամ սպասում էր կազակներին, առաջարկում է յեկվորներին հյուրասիրվել զինու մասանում, վորն և սիրով ընդունվում է: Դրանից հետո նըրանց տրամադրութունն այնքան բարձրանում է, վոր ստիպում են կառավարչին դաշնամուր նվագել, իսկ իրանք էլ սկսում են պար գալ... Բայց շուտով վրա յեն հասնում կազակները և հիսուն մարդ բռնում փակում են ամբարի մեջ: Թալանի հետևանքը. այրվում է յերեք տուն, կողոպտվում է հացը և ստացվածքը:

«Հոկտեմբերի վերջում Սարատովի նահանգում նշանակվում է զենեքալ-ադյուտանդ Սախարովը արտակարգ լիազորութուններով՝ վերջացնելու հողային անկարգութունները:

«Սև հարյուրակի ոգնությամբ սկսվում է գյուղացիների «խաղաղացումը» այն սոսկալի միջոցներով, վորոնք այդպիսի «խաղաղացումները» զեպըում միշտ ի գործ են դրվում:

Ահա այս էր 1905 թվականի հեղափոխական շարժման ընդհանուր պատկերը:

Մինչև հոկտեմբերի 17-ը մեր կուսակցութունը գաղտնի յեր գործում և յեռանդուն հեղափոխական աշխատանք էր տանում: Բոլոր խոշոր արդյունաբերական կենտրոնների մեջ սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների անկախ կոմիտեա-

ները թուլցիկներ էյին բաց թողնում, լրագրներ էյին հրատարակում, միտինգներ էյին սարքում և դրա հետ միասին խմբակային պրոպագանդա էյին անում: Կուսակցութունը հսկայական ազդեցութուն էր անում նաև տարերային կերպով ծայր առած գործադուլային շարժման վրա և լայն մասսաներին զինված ապստամբության կոչ էր անում:

Կառավարության արած զիջումների առթիվ մեր կուսակցութունն ասում էր, վոր դա բանվորական շարժումից վախեցած միահեծան կառավարության խաբեբայութունն է լուկ, Մենք այն ժամանակ ասում էյինք, վոր մեր հերթական անելիքը բանվորներին զինելն է ու քաղաքական իշխանության բռնագրավումը: Քանի դեռ զինված ուժը միահեծան կառավարության ձեռքումն է, մենք չենք կարող ընդհատել մեր զինված կռիվը: Յերբ «ազատութունները» հրովարտակը հրատարակվեց, մեր կուսակցութունը մի քանի ամսով թողեց յուր գաղտնի գործունեութունը և համարյա բոլոր խոշոր քաղաքներում սկսեց հրատարակել յուր լեզալ լրագրներն ու զանազան հեղափոխական գրքույկները:

Բայց դրա հետ միասին նա սկսում է կազմակերպել մարտական խմբեր կամ դրուժինաներ, վորոնք յեռանդուն կռիվ են մղում «Ռուս ժողովրդի միութուն» սև հարյուրակային շարժարար խմբերի դեմ:

«Ազատութեան որերին» յերկու սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւններ կային. թե բոլշեւիկները և թե մենշեւիկները իրանց հատուկ կենտրոններն ունեյին բոլոր խոշոր քաղաքներում, ունեյին իրենց հատուկ կազմակերպութիւնները: Բոլշեւիկների կենտրոնական որդանն արտասահմանում «Պրոլետար» («Пролетарий») թերթն էր, իսկ մենշեւիկներինը՝ «Իսկրա» («Искра» — կայծ): Իսկ յերբ ազատութեան որերին հնարավորութիւն ստեղծվեցավ Պետերբուրգում ևս թերթ ունենալ, բոլշեւիկներն անմիջապես հրատարակեցին «Новая жизнь» (Նոր կյանք), իսկ մենշեւիկները՝ «Начало» (Սկիզբ): Այդ թերթերից յուրաքանչյուրն յուր առանձին գիծն էր առաջ տանում:

Մենշեւիկները լիբերալ բուրժուազիայի նըկատմամբ իրանց համաձայնական գիծն էյին առաջ տանում, իսկ բոլշեւիկները պնդում էյին, վոր լիբերալ շարժումն յուր էյությամբ հակահեղափոխական մի շարժում է և հակառակ մենշեւիկներին, նրանք առաջ էյին քաշում հետեյալ լոզունգը. «Պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխական-դեմոկրատիկ դիկտատուրա», վորին զինված ապստամբութեան ճանապարհով պետք էր հասնել:

Շուտով, բուրժուազիայի դավաճանութեան և թուլամորթ ու անյեռանդ ինտելիգենցիայի

վախկոտութեան պատճառով ինքնակալ կառավարութիւնն ուշքի յեկավ, թոթափեց այն սուկալի վախը, վորով նա բռնված էր ու սկսեց արյունալի կերպով ճնշել ու հալածել հեղափոխական կազմակերպութիւնները:

«Ազատութեան որերը» յերկար չտևեցին: կառավարութիւնն այդ որերը հիանալի կերպով ոգտազործեց. նա հեղափոխական շարժման ամենից աչքի ընկնող գործիչների ցուցակները կազմեց: 1905 թվականի դեկտեմբեր ամսի առաջին որերին ամբողջ Ռուսաստանում սկսվեցին ձերբակալութիւնները՝ համաձայն այդ ցուցակների:

Պետերբուրգում վոստիկանութիւնը գնում է բանվորական պատգամավորների խորհրդի փոլովին և բոլորին ձերբակալում է: «Начало» և «Новая жизнь» թերթերը փակվում են:

Կառավարութեան այդ հալածանքներին վորպես պատասխան, 1905 թվին դեկտեմբեր ամսին Մոսկվայում ծագում է զինված ապստամբութիւն, վորի ղեկավարը մեր բոլշեւիկական կազմակերպութիւնն էր: Մոսկվան ծածկվում է բարիկադների ամբողջ ցանցով: Ապստամբութեանը մասնակցում են բնակչութեան ամենալայն խավերը: Առանձնապես համառ և ուժեղ էր ապստամբութիւնը Պրեսնայում, վորտեղ հրացանազարկ են լինում ցարական մի քանի

լրտեսներ, վորոնց թվում հետախուզական բա-
ժանմունքի վարիչ Վոլյոշնիկովը: Այդ ապստամ-
բության ղեկավարը բուլղարիկ Լիտվինն էր (Се-
до́й), վոր ապրում է այժմ: Կռիվը մի քանի որ
է տևում և վերջանում է միահեծան կառավա-
րության հաղթանակով: Մոսկվան հազարավոր
բանվորների արյունով է ներկվում, վորոնք
ընկնում են կռվի մեջ, իսկ ավելի շատերը հրա-
ցանազարկ են լինում գեներալ-նահանգապետ
Դոբրասովի և Սեմենեվսկի գնդի գլխավոր՝ գե-
ներալ Մենի հրամանով:

ժամանակակիցներից մեկը՝ Ն. Նորովը հե-
հետևյալ կերպով է նկարագրում այդ շրջանում
Մոսկվայի բանվորների հերոսական կռիվը.

«Արագ կերպով պատրաստվում էին
պաշտպանվելու և հարձակվելու: Ռայոններում
մարտական խմբեր էին կազմակերպում: Բան-
վորները գենք էին ձեռք բերում և վարժվում
էին կրակելու մեջ: Վոչ մի բարձրագույն կըր-
թական հաստատություն չէր մնացել, վորտեղ
մարտական խմբակ չլիներ: Կազմակերպություն-
ները յեռանդուն կերպով գենք էին գնում:
Հանգանակություններ էին կատարում: Միտին-
գի դահլիճի դռան առաջ դրված գլխարկը մի
քանի բոպեյում լցվում էր: Հանում էին
վոսկյա զարդերը, տալիս էին նշանդրեքի
մատանիները... բայց բուրժուազիան թեև դեռ

չէր նզովում հեղափոխական շարժումը, սա-
կայն արդեն մի կողմ էր քաշվել: Բանվորների
հետ մնացել էր միմիայն ինտելիգենտ յերիտա-
սարդությունը: Մոտենում էր գեկտեմբերը:
Բանվորները ծարավի էին կռվի:

«Դեկտեմբերի սկզբին հավաքվում է հա-
մառուսական յերկաթուղային համագումարը:
Ապստամբում է Ռոստովյան գունդը՝ փակված
Սպասսի կազարմաներում: Ամեն կողմից լու-
րեր էին գալիս զորքերի մեջ յեղած հուզմունք-
ների և աղմուկների մասին: Պետերբուրգյան
խորհրդի ցրումն ու ձերբակալությունն ավելի
ևս սրացնում են կռիվը:

«Դեկտեմբերի 5-ին Ռուս. Սոց. Դեմոկ.
Բանվորական կուսակցության (բուլղարիկ.) Մոսկ-
վայի կոմիտետը Ծիղերի դպրոցում հրավի-
րում է համաքաղաքային կոնֆերենցիա: Կազ-
մակերպչական մի փոքրիկ հարց պիտի վճռվեր:
Հանկարծ բանվորներից մեկը որակարգի մեջ
անմիջապես զինված ապստամբության խնդիրն
է դնում: Կոմիտետը հայտնում է, վոր նա այդ
խնդիրը քննության նյութ չէ դարձրել, ուստի
և այդ առթիվ յուր կարծիքը չի կարող հայտ-
նել: Վճռում են հայտնել ուայոններին և առան-
ձին գործարաններին: Բաժանվում են առանձին
խմբակների և դասավորվում են ըստ րայոնների:
Հարցումը մի քանի ժամ է տևում: Դահլիճում

սաստիկ լարվածութունն ե տիրում, լսվում ե նույնիսկ հարևանի զգյուշ շնչառութունը:

— «Բանվորները կռիվ են տենչում, զենք չկա»:

— «Բանվորներն իրանք կապստամբեն, յիթե կոմիտետը նրանց չկանչի»:

— «Գործարանում տաս ատրճանակ կա»...

— «Բանվորները դաշույններ և նիզակներ են կոփում, դժվար ե նրանց զսպել: Հանդես ե գալիս զինվորական կազմակերպիչը: Գունատ ե և զգալի յե նրա հուզմունքը: Նա առում ե, վոր Մոսկվայի զինվորները, վոր նույնիսկ կազակները, մինչև անգամ սպաները ժողովրդի վրա չեն կրակի: Զորքերը հուզվում են: Զորքերը պատրաստ են ժողովրդի կողմն անցնել, բայց նրանց հրացանները կառավարութունը հավաքել ե:

«Յերկու ճառ». «Թեր» և «դեմ»: Քվեարկութուն: «Թեր» ձեռքերի անտառ ե բարձրանում: Հարցը վճռված ե: Զեմլյաչկայի զոգևորիչ ճառը:

— «Հուզարկավորության յերգն հնչեց այստեղ: Այս քվեարկությամբ մենք կորստի մատնեցինք մեզ... Բայց հարցը վճռված ե արդեն: Նրանք, ովքեր ձեզ հակառակ են, նրանք ել ձեզ հետ կըմեռնեն: Ընկերներ, առաջ, դեպի կռիվ: Դեպի ըրայոնները»:

«Մի ուրիշ հոետորի մի քանի տաք ու սրտառուչ խոսքերը. հիշում եմ մի կտորը:

— «Թող բուրժուազիայի սև աստվածը ըսկսվող կռվի մեջ ոգնի նրան: Մենք կըհաղթենք մեր ձեռքերի ուժով և մեր սերտ ու ամուր միությամբ միայն»:

«Անցնում ե յերեք որ և ամբողջ Մոսկվան կաթվածահար յեղածի պես սսկվում, լռում ե: Բուրժուազիան շտապ կերպով մթերքների, մոմի և ջրի պատրաստութունն ե տեսնում: Բնակիչները ջրով լցնում են լողարանները, սրվակներն ու բանկաները: Պրոլետարիատը խաչում ե ձեռքերը. և ամեն ինչ լետարզիայի մեջ ե ընկղմվում: Կոնֆերենցիայի վորոշումին միանում ե բանվորական պատգամավորների խորհուրդը և համառուսական յերկաթուղային համագումարը: Մեռնում, լռում ե ամբողջ Ռուսաստանը: Կյանքը կանգ ե առնում:

«Այդպես լռում ե քամին փոթորկից առաջ:

«Ռայոններում ինչ վոր տատանում ե ըզգացվում: Գործադուլը հեշտությամբ ե անց կենում: Միտինգներին տաք ու բորբոք ճառեր են լսվում: Մասսան լսում, ականջ ե դնում, բայց փողոց դուրս չի գալիս:

«Ակվարիումի մեջ միտինգ կա... Հոետորների ձայների արձագանքը գալիս ե պատերից, վորոնք մարդկանց շնչառութունից գունատվել

եյին: Հանկարծակի վրա յեն պրծնում մի խումբ կազակներ և վոստիկաններ: Մուտքի մոտ խուզարկում, ծեծում են, զենք են փնտրում: Մարտական խմբակին հաջողվում է անվնաս հեռանալ:

«Ռմբակոծում են Ֆիզլերի տանը... Արտիլերիա... Նրանք սկսեցին: Առաջինը նրանք սկսեցին, չկարողացան համբերել: Ելեքտրական ալիք է անցնում ռադիոների միջով և վորոշում է գեպերի ընթացքը:

«Գործադուլը դառնում է ապստամբություն: Մարտական խմբերի անդամները վոչնչացնում են փողոցների անկյուններում կանգնած քաղաքապահերին:

«Սարսափահար վոստիկանությունն անհետանում է, փոխում է շորերը և թագնվում տրոսերում ու բնակարաններում: Դուբասովը փակվում է կրեմլում: Յերկաթուղային մարտական խմբակը զրավում է կայարանները: Յերեկոյան դեմ հասարակությունը փողոց է դուրս գալիս, վոր արդեն վոստիկանությունից մաքրված էր: Պոկում, հանում են պարպասները, բակերից փայտ են տանում: Բարիկադներ են շինում: Բակապանը (զվորնիկը) հայհոյանքներով է դիմավորում այն մարդկանց, վորոնք նրանից բահ ու քլունգ էյին ուզում. բայց մի քանի բոպեյից հետո, մյուսների հետ միասին, ինքն էլ

յեռանդուն աշխատում է, սղոցում է հեռագրասյունները և ցույց է տալիս այն բակերը, վորոնց միջով կարելի յե անցնել մյուս թաղերը:

«Առավոտյան դեմ Մոսկվան զայրացել, բռնուցք էր դարձել. նա անանցանելի յեր. սպասուկող կազակների ճանապարհին հազարավոր բարրիկադներ էյին բուսել: Բայց այդ բարրիկադները անմարդ ու ամայի էյին համարյա. պաշտպանները քիչ էյին, զենք չկա: Ամբողջ քաղաքի մեջ հազիվ յերեք չորս հազար ատրճանակ կար:

«Դուբասովը սարսափահար է ու անգոր: Վոստիկանության և հարյուրավոր կազակների հրակայական ջանքերով հազիվ է հաջողվում պաշտպանել ու իրանց ձեռքը պահել Տվերսկայա փողոցը և կենտրոնը: Ստրաստնիից գնդացիները ճարճատում են: Դրությունն անվորոշ է: Յերկու կողմերն ևս չեն կարող վորևե վճռական բան ձեռնարկել: Յերկուսն էլ սպասողական դրության մեջ են:

«Շանթի պես մի լուր է գալիս, թե Պետերբուրգում և Նիկոլայեվսկի ճանապարհի վրա բանը լավ չե: Պետերբուրգը գործադուլ է արել, բայց միություն չկա: Նոյեմբերյան գործադուլի մեջ և ութթամյա բանվորական որվա համար մղած կռվի մեջ թուլացած և ուժասպառ՝ նա մղած կարող հարկավոր յեռանդով ոգնել Մոսկվային: Նիկոլայեվսկի զիծը շարունակում է աշխատել:

տել: Գալիս են հարբած, գազանացած Սեմենով-ցինները: Թնդանոթներ և գնդացիները... Ռմբակոծութիւնն այն տների, վորտեղ ապաստան են գտել մարտական խմբի անդամները... Հերոսական Պրեանայի կողոպուտն ու հրդեհումը... Մարտական խմբերի նահանջը... Դիակներ... Գեներալ Մինի պատժող արշավանքը... Դիակներ... Ալիքն իջնում ե... Բանվորների փախուստը Մոսկվայից... Մի տարի ել հեղափոխական կըռիվ. փոփոխակի հաջողութիւններից և հսկայական ջանքերից հետո կառավարութիւնն հաջողվում ե բանակը յուր կողմը պահել: Հեղափոխութիւնը ճնշված ե*):»:

Պետերբուրգը չկարողացավ ոժանդակել Մոսկվային, վորովհետե նա ուժասպառ եր յեղել նախընթաց կռիւ մեջ և թուլացել եր՝ կապիտալիստների միացյալ գրոհի առաջ. կապիտալիստները լուհաւտ ելին հայտարարել (գործարաններից մասսայական կերպով արձակում ելին բանվորներին):

Յերբ Դումբասովը ոմբակոծեց Մոսկվան, իսկ մյուս քաղաքներում յերբ պատժողական արշավանքները բազմաթիւ մարդկանց հրացա-

*) Տես „Декабрьское восстание в Москве“ Ժողովածուն:

նազարկ արին կամ կախաղան բարձրացրին, դըրանից հետո անա մեր կուսակցութիւնն ստիպված եր նորից ծածկվել ու գաղտնի գործունեութիւնն անցնել:

Բայց նվաճված ազատութիւններից համեմայն դեպս ելի մի քանի բան մնաց. դրանք մի քանի «որինական—լեզալ հնարավորութիւններն» ելին:

Շարունակ ձերբակալութիւնների և բռնութիւնների յենթարկվելով՝ մի կերպ իրանց գոյութիւնը կարողանում ելին քաջ տալ արհեստակցական միութիւնները, ռբանվորական ակումբները», մի քանի լրագրներ և այլն:

Բացի դրանից հնարավոր եր մասնակցել Պետական Դումայի ընտրութիւններին և նրա մեջ նույն իսկ յուր սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան ունենալ: Յերկկողմանի մի դրութիւն եր ստացվում. մի կողմից սոցիալ-դեմոկրատիական կուսակցութիւնը պատկանելու համար ցարական զատարանը մարդկանց աքսորում եր, նույնիսկ գատապարտում տաժանակիր աշխատանքների, մյուս կողմից սոցիալ-դեմոկրատները պղատորեն հանդես ելին զալիս Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակ, և հենց Դումայի մեջ:

Բայց և այնպես ռեակցիան ուժեղանում եր: Մեր կուսակցութիւնն ավելի աչքի ընկնող

առաջնորդները կամ բանտ եյին նստած, կամ արտասահման եյին փախել, վրոմանք ել ծածկը վել եյին, գաղտնի եյին ապրում: Մանր-բուր-ժուազական ինտելլիգենտական շրջաններում սկսել եր հեղափոխական տրամադրությունների անկումը, առաջ եյին յեկել դավաճաններ և մասնիչներ, վորոնք սկսել եյին հեռանալ հեղափոխական կուսակցություններից և անցնել բուրժուազիայի բանակը, մամուլի մեջ և զանազան լիբերալ-բուրժուական ընկերությունների շրջանում կարգացվող հրապարակային գեկուցումների մեջ այսպանելով և նզովելով հեղափոխությանը: Ուրիշները ուղղակի թողնում, հեռանում եյին կուսակցության մեջ գաղտնի գործելուց և դառնում եյին սոսկ բնակիչներ: Յերևան եր գալիս կրոնականություն հասարակության այնպիսի շրջաններում, վորոնք առաջ հավատացյալ չեյին և կրոնի նկատմամբ անտարբեր եյին:

Մենշեիկներն սկսել եյին կոչ անել բանվորներին՝ ամբողջովին անձնատուր լինել լեգալ-որինական աշխատանքի, որինականության սահմաններում և վերջ տալ, լիկվիրացիա անել գաղտնի հեղափոխական կուսակցությունը, այդ պատճառով ել նրանք կոչվեցին «լիկվիրատորներ»:

Ճշմարիտ ե, մենշեիկների մի մասը նույն-

պես կողմնակից եր, վոր գաղտնի կուսակցությունը պահպանվի, բայց դրանք քիչ եյին:

Իսկ նրանց մեծամասնությունը մամուլի և այլ կազմակերպությունների միջոցով բուրժուական ազգեցության ազատ ու բացարձակ հաղորդիչներ դարձան բանվորների համար:

Յեվ միմիայն մի կուսակցություն, բուլշեիկների կուսակցությունը պահեց յուր գաղտնի կազմակերպությունը և շնորհիվ յուր դիմացկանությանն ու տոկնությանը ամենից քիչ տուժեց, յերբ ցարական կառավարությունը ավերում, ջախջախում եր հեղափոխական կազմակերպությունները:

Նույնիսկ, յեթե կուզեք, այդ հանգամանքը բուլշեիկական կուսակցությանը մասամբ նաև ոգուտ բերեց, վորովհետև կուսակցությունը մաքրվեց: զավեց այն ուղեկցող ինտելլիգենտներից, վորոնք սովորաբար ամեն մի հեղափոխական շարժում քաշ են տալիս դեպի աջ: կուսակցության մեջ միայն անձնվեր և յեփված, գելված մարտիկները մնացին:

Մեր կուսակցությունն ևս չեր հրաժարվում լեգալ-որինական հնարավորություններից ոգուտ քաղել, բայց նա ամենից առաջ լիակատար կերպով պահեց յուր գաղտնի կազմակերպությունը և ապա այն բոլոր աշխատավորներին, վորոնք աշխատում եյին լեգալ կազմակեր-

պությունները մեջ, կառավարութեան հսկողութեան տակ դրեց և սկսեց առաջնորդել ու ղեկավարել նրանց: Մեր աշխատակիցները, կուսակցութեան անդամները, բոլշևիկները աշխատում էին արհեստակցական միությունները մեջ, բանվորական ակումբներում, կիրակնօրյա դըպրոցներում, մասնակցում էին բուրժուական համագումարների և Պետական Դումայի մեջ:

Բայց այդ աշխատանքը մենք առաջ էլինք տանում գաղտնի կուսակցութեան ցուցմունքները և ղեկավարութեան տակ և պատասխանատու էին նրա առաջ: «Լեզալ» կազմակերպությունները մեջ մենք նրա համար էլինք աշխատում, վորպեսզի կարողանանք բանվորներին ավելի լայն մասսաների վրա ազդել և առաջ տանել մեր կոմունիստական գիծը:

ԼենՍԿԻ ԶԱՐԴԸ 1912 ԹՎԻՆ ԱՊՐԻԼԻ 4. ԻՆ.

Բանվորական շարժման պատմութեան մեջ «Լենսկի շարժը կամ գնդակահարությունը խոշոր պատմական դեր է խաղացել: Հեռավոր ճահճային անտառի մեջ հարյուրավոր վերստերի վրա տարածվում էր Լենսկի վոսկեարդյունաբերական ռայոնը:

Կապիտալն այդտեղ լիակատար տեր էր: Եկոնոմիկան և քաղաքականությունն այստեղ իրար հետ միացել էին ամենաբացահայտ, ամենաանամոթ ձևով, քաղաքական իշխանութեան բո-

լոր որգանները՝ վոստիկանություն, դատարան, զինվորական վարչություն, դպրոց, այդ բոլորը գտնվում էին վոսկեարդյունաբերողների ձեռքում կամ նրանց ազդեցութեան տակ: Յե՛վ այդ բոլոր ֆիրմաների վրա ինքնակալ և միահեծան կերպով իշխում էր ամբողջ ռայոնում «Լենզոտո»-ն*): Նրա ինքնակալությունը անմիջականորեն կապված է իր պետական ինքնակալութեան և միջազգային իրպերիալիզմի հետ, վորովհետև նրա ակցիաների մեծ մասը պատկանում էր անգլիացիներին:

Վոսկոլ հանքերում կատարելապես հին որերի կենցաղն ու սովորություններն էին տիրում, ճորտատիրական իրավակարգի բարձրը, այն աստիճան, վոր մինչև անգամ բարձրաստիճան չինովնիկները իրանց իրավունք էին համարում իրանց քմահաճույքին յենթարկել բանվորների կանանց ու աղջիկներին: Իսկ գործավորների կանանց ու աղջիկներին սիստեմատիկ կերպով վատացնում էր բանվորների դրությունը. քչացնում էր աշխատավարձը, շատացնում էր տուգանքները, բարձրացնում էր մթերքների գները, (այդ մթերքները կարելի չէր գնել միմիայն գործատերերի խանութներում)

*) „Лензото“ Ленское золотопромышленное товарищество

և այլն: Ուստի և փետրվարի 20-ին զուտ տընտեսական հողի վրա գործադուլներ սկսեցին:

Վոսկեհանքերի ռայոնում զորքեր քիչ կային և հանքերի վարչութիւնը սկզբում իրան զիջող ու զսպված եր պահում համաձայնվելով բավարարել բանվորների նույնիսկ փոքր պահանջները. բայց յերբ զորքերը գալիս են, գրութիւնը սուր կերպով փոխվում է. ձերբակալվում են բանվորների պատվիրակները, վորոնք ընտրված էին իսպրավնիկի և շրջանային ճարտարապետի առաջարկութեամբ:

Ապրիլի 4-ին բանվորները գնացին Նազեթ-դինսկի վոսկեհանքը՝ այդ ձերբակալութիւնների մասին դատախազի հետ խոսելու և նրան հանձնելու «գիտակցական» գրութիւններ, վորոնց մեջ բանվորները միատեսակ յեղանակով հետևյալն էին հայանում. «Յես, Լենգոտոյի բանվորս, գիտակցաբար դադարեցրի աշխատանքը: Գործադուլի ժամանակ բանվորների կողմից վոչ մի բռնի միջոց չի գործ դրվել և գրգռող չի յեղել: Յեզ մենք շարունակում ենք գործադուլը, վորովհետև Լենգոտոն խախտել է մեզ հետ կապած պայմանագիրը և չի բավարարում մեր պահանջները»:

Բոլորը գնում էին պարզ սրտով: Բոլորի սրտերը բաց էին. կարծես յեկեղեցի էին գընում: Գնում էին խնդրելու, վոր պատվիրակ-

ներին ազատեն: Բոլորը գնում էին հանդարտ սրտով. շատերը իրանց ձեռքում բռնել էին «գիտակցական» գրութիւնները: Բանվորներին համազարկերով դիմավորեցին. 270 բանվոր սպանվեցին, 250 հոգի վիրավորվեցին:

Սպանվածներին և վերքերից մեռածներին թաղեց վոստիկանութիւնը: Բանվորներին թույլ չտվին հուղարկավորութեանը մասնակցելու:

Կապիտալի շահի համար բանվորներին հրացանազարկ անելու հանգամանքը Ռուսաստանում առաջ էլ հազվագյուտ յերևույթ չեր: Մոսկվայի սպատամբութիւնը խաղաղացնելու ժամանակ վոստիկանութիւնը շատ ավելի մեծ վայրագութիւն եր հանդես բերել, քան ապրիլի 4-ին Լենսկի վոսկեհանքերում: Մակայն բանվորական շարժման պատմութեան համար նորութիւնը վոչ թե հրացանազարկութիւնն էր, այլ այն, թե ինչպես նայեցին այդ հրացանազարկութեան վրա ամբողջ Ռուսաստանի բանվորական մասսաները:

Նրանք այդ դեպքի հանդեպ հանդես բերին վոչ թե լուութիւն, այլ տաք ու յեռանդուն բողոք:

Պետական Դումայի նիստում ապրիլի 11-ին քննվում եր Լենսկի դեպքերի հարցը: Յեզ այստեղ ներքին գործերի մինիստր Մակարովը՝ աշակողմյան պատգամավորների ծափահարութեան

տարափի տակ հետևյալ նշանակալից պատասխանը տվեց:

— Այդպես ե յեղել և այդպես ել կլրինի սրանից հետո:

Մակարովի պատասխանը հեռագրով անցավ հաղորդվեց ամբողջ Ռուսաստանին: Վոչ մի հեղափոխական ազդեցության այնպիսի ուժեղ տպավորություն չեր կարող անել, վորպիսին արին մինիստրի այդ խոսքերը: Վոչ միայն Պետերբուրգի բոլոր գործարաններից, այլ և Ռուսաստանի բոլոր ծայրերից հեռագիրը լուր բերեց բողոքի գործադուլների և ռեզոլյուցիաների մասին:

Վերջապես, 1912 թվի բանվորական խանդավառ վերելքի որերում, Լենսկի վոսկեսանքերում բանվորների հրացանազարկումից հետո մեր կուսակցությունը ազատ ու արձակ սկսեց Պետերբուրգում յուր բանվորական «Правда» թերթը հրատարակել, վորը միանգամից յուր վրա գրավեց բանվորների լայն շրջանները: «Պրավդա»-ն իսկական բանվորական թերթ եր. բանվորների շրջանում հավաքված աշխատանքային կուպեկներով եր հրատարակվում նա և հենց բանվորներն ել նրա գլխավոր և ճշտապահ աշխատակիցներն եյին:

Իսկ արտասահմանում այդ ժամանակ հրատարակվում եր մեր կուսակցության կենտրոնա-

կան որգանը՝ վոր կոչվում եր «Պրոլետար» («Пролетарий»), վորը ղեկավարում եր բանվոր դասակարգի պայքարը և ուղղութուն եր տալիս կուսակցության այն աշխատակիցներին, վորոնք աշխատում եյին լեգալ կազմակերպությունների մեջ:

Յերբ 1914 թվի համայնվորուպական իմպերիալիստական պատերազմը պայթեց, մեր կուսակցությունը միակն եր, վորը համատարած հայրենասիրական արբեցումի մեջ՝ անվախ ու անյերկուղ յուր ձայնն եր բարձրացնում յեղբայրասպան ու անազորույն սպանդանոցի դեմ:

Պետական Դումայի մեջ մեր կուսակցության ներկայացուցիչները բացահայտ կերպով կոչ արին բանվորներին և գյուղացիներին թույլ չտալ այդ յեղբայրասպան պատերազմը: Յեվ մենք «պատերազմին պատերազմ» հայտարարեցինք: Այդ կոչի համար ցարական կառավարությունը բուրժուազիայի հետ միասին բանտ նետեց Դումայի բոլշևիկ «անձեռնամխելի» անդամներին, և ապա աքսորեց Սիբիրի ամենահեռավոր վայրերը բնակվելու:

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ
ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ. Ե.
ՂԵԿՏՐՈՖԻԿԱՅԻԱ ՅԵՎ ՆԵՊ.

Յերբ փետրվարյան հեղափոխությունն սկըսվեց, մեր կուսակցությունը գաղտնի գործունեության մեջ եր. իսկ նրա ամենաաչքի ընկնող ղեկավարներն ու առաջնորդները բանտումն եյին, տաժանակիր աշխատանքների դատապարտված, աքսորի մեջ կամ արտասահմանում: Նկափոխության գլխավոր կենտրոններում՝ Պետերբուրգում և Մոսկվայում կազմված խորհուրդներն այս շրջանում ընկնում են համաձայնական կուսակցությունների՝ մենչեվիկների և եսերների ձեռքը, վորոնք բարձրագույն Ֆրագներով հիմարացնում և խաբում են մասսաներին և կարճ ժամանակով իրանց հետևից քաշ տալիս նրանց: Այդ համաձայնական կուսակցությունների ղեկավարները սկսում են կոչ անել մասսաներին՝ շարունակել պատերազմը կապիտալիստների և կալվածատերերի շահերի համար, մի պատերազմ, վորը մեր յերկիրը բավականաչափ արդեն քայքայել և ուժասպառ եր արել:

Իսկ մեր կուսակցությունը հենց սկզբից Վճռական հակառակորդ ե դուրս գալիս այդ ամբիտ սպանդանոցին: Բանտերից ու աքսորից բիչքիչ սկսում ե վերադառնալ հեղափոխական կռիվ-

ների մեջ յեփված ու մարդված հին բուլեիկական գվարդիան: Կուսակցության շարքերն ամբանում են:

1917 թվի ապրիլի սկզբին արտասահմանից վերադառնում են հին ղեկավարները՝ ընկ. Ղեխինն ու ընկ. Զինովյեվը:

Նոր թափ ե ստանում կուսակցության աշխատանքը, նրա գիծը դառնում ե անշեղ, հաստատուն և անդրդվելի: Պետրոգրադի մեր «Պրավդա» թերթը, ինչպես և խոշոր արդյունաբերական կենտրոններում մեր ունեցած մյուս որգանները գորեղ ագիտացիա յեն մղում բովանդակ իշխանությունը Սորհրդներին հանձնելու համար: «Ամբողջ իշխանությունը Սորհուրդներին», «Կորչի պատերազմը» — ահա որվա լոզունգները: Մեր կուսակցության այդ կոչերը կատարի թշնամանք և չարություն են հարուցանում բուրժուազիայի և համաձայնական կուսակցությունների շարքերում: Բուրժուազիական և սոցիալ-դավաճան թերթերը սկսում են մեր կուսակցության առաջնորդների վրա ցելսի ու զըրպարտությունների հեղեղ թափել, անվանելով նրաց «դավաճան», «գերմանական լրտեսներից կաշառված»: Մենք համարձակ կերպով դիմանում ենք մեր վոխերիմ թշնամիների մոլեգին չարությանն ու զըպարտանքներին, ճառերի և թերթերի մեջ մերկացնելով նրանց զգվելի դա-

վաճան դերը բանվորական լայն մասսաների առաջ:

«Յուրաքանչյուր հեղափոխություն ժողովրդի հսկայական մասսաների կյանքում մի սուր բեկում է — գրում է ընկ. Լենինը 1917 թվականին հուլիսի 3—5-ի դեպքերից հետո «Հեղափոխության դասերը» հոդվածի մեջ: Յեթե այդպիսի բեկումը դեռ չի հասունացել, ապա հեղափոխությունը չի կարող առաջ գալ: Յեւ ինչպես վոր վորեւե մարդու կյանքում կատարված յուրաքանչյուր բեկում շատ բան է սովորեցնում նրան, ստիպում է նրան շատ բան կրել, ապրել ու զգալ, այնպես ել հեղափոխությունը յուրաքանչյուր ժողովրդի կարճ ժամանակվա ընթացքում տալիս է ամենաբովանդակալից ու արժեքավոր դասերը:

Հեղափոխության ընթացքում միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր մարդիկ յուրաքանչյուր շաբաթվա մեջ ավելի շատ բան են սովորում, քան մի ամբողջ սովորական ու կիսաքուն փարվա մեջ: Վորովհետև մի ամբողջ ժողովրդի կյանքի մեջ առաջ յեկած սուր բեկման ժամանակ առանձնապես պայծառ կերպով հայտնի յե լինում, թե ժողովրդի վոր դասակարգերն են, վոր այս կամ այն նպատակներն են հետապնդում, ինչ ուժի տեր են նրանք, ինչ միջոցներով են գործում նրանք:

Յուրաքանչյուր գիտակից բանվոր, զինվոր և գյուղացի պարտավոր է ուշադիր կերպով մտածել, խորանալ հեղափոխության դասերի մեջ, մանավանդ հիմա, հուլիսի վերջերին, յերբ պայծառորեն հայտնի դարձավ, վոր մեր հեղափոխության առաջին շերտը անհաշու անցավ:

Հիրավի, տեսնենք, թե ինչ նպատակներ և սպասելիքներ ունեյին բանվորների և գյուղացիների մասսաները, յերբ կատարում եյին հեղափոխությունը: Ինչ եյին սպասում նրանք հեղափոխությունից: Հայտնի յե, վոր նրանք սպասում եյին ազատություն, խաղաղություն, հաց ու հող:

Իսկ ինչ ենք տեսնում մենք այժմ:

Ազատության փոխարեն, սկսում են վերականգնել նախկին կամայականությունը: Ձինվորների համար մահվան պատիժ են հաստատում ռազմաճակատում, գյուղացիներին կալվածատիրական հողը ինքնագլուխ հափշտակելու համար դատարան են քաշ տալիս, բանվորական թերթերի տպարանները ավերում են: Առանց դատարանի փակում են թերթը: Ձերբակալում են բոլշեվիկներին, հաճախ նույնիսկ վոչ մի մեղադրական կետ առաջ չբերելով, կամ ակնահայտնի զրպարտիչ մեղադրանքներ բարձելով նրանց վրա:

Թերևս առարկեն, թե բոլշեվիկներին հալա-

ծելով ազատութիւնը չեր խախտվում, վորովհետև միայն այնպիսի անձնավորութիւններ եյին հալածվում, վորոնց նկատմամբ վորոշ մեղադրանք կար: Բայց այդպիսի առարկութիւնը ակնհայտնի սուտ է, վորովհետև ինչպես կարելի չէ առանձին անձնավորութիւնների հանցանքների համար ավերել տպարանը, յեթե նույնիսկ այդ մեղադրանքները դատարանի կողմից ապացուցված լինեյին: Ուրիշ բան է, յեթե վարկառավարութիւնը որեւէ ուղիով հանցավոր ճանաչել բոլշևիկների ամբողջ կուսակցութիւնը, նրանց ուղղութիւնը հայացքները:

Այժմ գլխավորն այն է, վոր կապիտալիստների և կալվածատերերի թերթերը կատաղի կերպով հայհոյում եյին բոլշևիկներին այն բանի համար, վոր նրանք պայքարում են պատերազմի, կալվածատերերի և կապիտալիստների դեմ, և պահանջում եյին, վոր բոլշևիկները առանց այլևայլութեան ուղղակի ձերբակալվեն և հալածվեն և այդ այն ժամանակ, յերբ վոր դեռ վոչ մի մեղադրանք չեր գտնված վոչ մի բոլշևիկի դեմ: Ժողովուրդը խաղաղութիւն է ուզում: Իսկ ազատ Ռուսաստանի հեղափոխական կուսակցութիւնը նորից առաջ է տանում նվաճողական պատերազմը նույն այն գաղտնի դաշնագրերի հիման վրա, վոր նախկին Նիկոլա II-ը ցարը կնքել եր անգլիական և ֆրանսիական

կապիտալիստների հետ, վորպեսզի ռուսական կապիտալիստները շահվեն՝ ոտար ժողովուրդներին կողոպտելով: Այդ գաղտնի դաշնագրերը մինչև այժմ այդպես ել չհրատարակված մնացին: Ազատ Ռուսաստանի կառավարութիւնը զանազան պատճառանքներով բավականացավ, մինչև վերջն ել չառաջարկեց իրավացի խաղաղութիւն բոլոր ժողովուրդներին:

Հաց չկա: Սովը նորից է մոտենում սպառնալից ընթացքով: Բոլորը տեսնում են, վոր կապիտալիստներն ու հարուստները անխիղճ կերպով խաբում են պետական զանձարանը պատերազմական պատվերների ու կասպիների մեջ (պատերազմն այժմ ժողովրդին որական հիսուն միլիոն ռուբլի յենստում). բարձր գներն պատճառով չլսված ոգուտներ են ստանում. իսկ պրոլետկներն լուրջ հաշվեառման և նրանց՝ բանվորների միջև կանոնավոր բաշխման համար բացարձակ կերպով վոչինչ չի արված: Կապիտալիստներն ավելի ևս անամոթ են դառնում, բանվորներին փողոց նետելով և այդ մի այնպիսի ժամանակ, յերբ ժողովուրդը ապրանքների պակասութիւնից տառապում է: Գյուղացիների հսկայական մեծամասնութիւնը անարգարութիւն և կողոպուտ է հայտարարել հողի մասնավոր սեփականութիւնը: Իսկ կառավարութիւնը, վոր իրան հեղափոխական և դեմոկրատ

տիկ ե անվանում, ամիսներով շարունակում ե գյուղացիներին խաղացնել և խափում ե նրանց խոստումներով ու ձգձգումներով:

Կառավարութիւնը այն աստիճան անամութիւնքան ե հասնում կալվածատերերին պաշտպանելու մեջ, վոր սկսում ե գյուղացիներին դատի յենթարկել «ինքնագլուխ գրավումներին» համար:

Բանվորական մասսաների համակրութիւնն ու տրամադրութիւնը աստիճանաբար ղեպի մեր կողմն են սկսում թեքվել: Յե՛վ վերջիվերջո մենք բողոքովին կրնվածենք մասսաներին և մեր կուսակցութիւնը համարյա նրանց հետ միանում ե: Մեր կուսակցութիւնը, վոր մի կողմից բուրժուազիայի, մյուս կողմից սոցիալ-դավաճանների հալածանքների պատճառով ստիպված ե գաղտնի գործել — սկսում ե յուր շարքերը նոր անդամներով լրացնել: 1917 թվի սեպտեմբեր ամսին, յերբ հավաքվեց մեր կուսակցական կոնֆերենցիան, իր շարքերում մտտ յերկու հարյուրհազար անդամ ևւներ արդեն:

1917 թվի հոկտեմբեր ամսին մեր կուսակցութիւնը Սորհուրդների մեջ մեծամասնութիւնն ե ձեռք բերում, դարձնելով այդ համաձայնական խորհուրդները հեղափոխական, իսկ ամբողջ յերկրում նա նվաճում ե աշխատավոր բնակչութիւնն մեծամասնութիւնն համակրութիւննե-

րը: Հնչում ե վերջին ժամը կապիտալիստների և կալվածատերերի իշխանութիւնն, վորոնք պաշտպանութիւնն եյին գտնում մենշևիկների և եսեռների կողմից. տեղի յե ունենում հոկտեմբերի 25-ի հեղաշրջումը և մեր կուսակցութիւնը իշխանութիւնն ե անցնում:

Ահա ինչպես ե նկարագրում ընկեր Տրոցկին այդ հեղաշրջումը իր «Հոկտեմբերյան հեղափոխութիւնը» գրքի մեջ:

«Կառավարութիւնն առաջվա նման իր նիստերը գումարում եր Ձմերային Պալատում, բայց այդ կառավարութիւնն լոկ ստվերն եր մնացել: Գաղաքականորեն նա գոյութիւնն չուներ այլևս: Ձմերային Պալատը հոկտեմբերի 25-ին աստիճանաբար ամեն կողմից մեր գործերով սկսվում ե շղթայվել: Կես որվա ժամը 1-ին Պետրոգրադի Սորհրդի նիստում Ռազմահեղափոխական Կոմիտեայի անունից յես հայտնեցի, վոր Կերենսկու կառավարութիւնն այլևս գոյութիւնն չունի և վոր մինչև Սորհուրդների Համառուտական համագումարը իշխանութիւնն անցնում ե Ռազմահեղափոխական Կոմիտեայի ձեռքը:

Վենիսն արդեն դրանից մի քանի որ առաջ թողել եր Փինլանդիան և ծածկվում եր քաղաքի ծայրամասերում և բանվորական թաղերում: Հոկտեմբերի 26-ի յերեկոյան նա ծածկաբար յեկավ Սմոլնի: Լրագրական տեղեկութիւններից նա

այնպես եր պատկերացնում դրուժյունը, վոր իբր թե մեր և կերենսկու կառավարութեան միջև ժամանակավոր կոմպրոմիսս ե տեղի ունենում: Բուրժուազիական մասուլը այնքան շատ եր ազդակում մոտալուտ ապստամբութեան, զինված սոլդատներն փողոց դուրս գալու, ջարդերի և կողոպուտներն, արյան անխուսափելի գետերի մասին, վոր այժմ այդ բուրժուազիան չեր նկատում այն ապստամբութեանը, վոր իրոք կատարվում եր և մեզ հետ շտաբի ունեցած քանակցութեանները խակական ճշմարտութեան աեղ եր ընդունում: Մինչ այդ զինվորներն, նավաստիներն և կարմիր գվարդիականներն մարզված ու հոյակապ շարքերը, առանց քառսի, առանց փողոցային ընդհարումներն, առանց հրացանաձգութեան և արյունահեղութեան գրավում եյին հաստատութեանները մեկը մյուսի յետևից, համաձայն այն ստույգ հեռախոսային հրամաններն, վորոնք գալիս եյին Սմոլնի ինստիտուտի յերրորդ հարկի փոքրիկ սենյակից:

«Ձմեռային Պալատն այդ ժամանակ արդեն շրջապատված եր, բայց դեռ աննված չեր: ժամանակ առ ժամանակ նրա պատուհաններից կրակում եյին պաշարողների վրա, վորոնք դանտազորեն և զգուշ կերպով իրանց ողակը նեղացնում եյին:

Պետրոպավլովսկի բերդից յերկու յերեք թըն-

դանոթի ումը նետեցին Պալատի վրա: Թնդանոթների հեռավոր թնդյունը գալիս հասնում եր Սմոլնի պատերին: Մարտովր անխնա զայրույթով եր խոսում համագումարի ամբիոնից քաղաքակացիական կռվի մասին, առանձնապես Ձմեռային Պալատի պաշարման մասին, վորտեղ մինիստրների թվում գտնվում եյին—ս սարսափ—մենչիկներն կուսակցութեան անդամները: Մարտովին զեմ են դուրս գալիս յերկու նավաստիներ, վորոնք կռվի վայրից այդտեղ եյին յեկել տեղեկութեաններ տալու: Դատապարտողներին նրանք հիշեցնում են հուլիսի 18-ի հարձակման մասին, հին իշխանութեան բովանդակ դավաճանական քաղաքականութեան մասին, զինվորների համար մահվան պատիժը վերականգնելու մասին, հեղափոխական կազմակերպութեաններն ձերբակալութեաններն, ավերումներն մասին: Այս անելով նրանք յերդվում են հազթել կամ մեռնել:

Նրանք եյին, վոր միլենույն ժամանակ լուր են բերում Պալատի հրապարակում մեր ունեցած զոհերն մասին: Կարծես մի անտեսանելի նշանից ազդված բոլորը վեր են կենում միասիրտ ու միաբան. մի տրամադրութեան, վոր առաջ ե գալիս միմիայն բարոյական բարձր լաբումի ժամանակ. յերգում են հուղարկավորման մարտը: Ով ապրել ե այդ վայրկյանը, նա յերբեք չի մոռանա այդ:

«Նիստը խանգարվում է: Անհնարին եր իշխանությունը հաստատելու յեղանակներէ մասին տեսականապէս դատել, յերբ հասնում էին մեզ Չմերային Պալատի պատերի տակ տեղի ունեցող կովի և հրազարկերի արձագանքները. այն տեղ գործնականորեն ուղղակի իշխանության հարցն եր վճռվում: Սակայն Պալատի առումը ձգձգվում եր ու յերկարում. և այդ հանգամանքը համագումարի ավելի պակաս հեղափոխական տարրերի մեջ տատանում եր առաջ բերում: Այլ թևը յուր հոետորներէ բերանով մեզ մոտալուստ կորուստ եր գուշակում:

«Բոլորը լարված ուշադրութեամբ լուրերի էին սպասում Պալատի հրապարակից: Մի փոքր ժամանակից հետո յեկավ Անտոնովը, վորը զեկավարում եր այնտեղի ոպերացիաները: Դահլիճում տիրում է կատարյալ լուռութուն:—Չմերային Պալատը վերցված է, Կերենսկին փախել է, մյուս մինիստրները բանտարկված են և տարված Պետրոպավլովսկի բերդը:—Հոկտեմբերյան Հեղափոխութեան առաջին գլուխը վերջացել եր».

Մեր կուսակցութեան կատարած առաջին մեծագույն հեղափոխական գործերից մեկն այն եր, վոր նա կալվածատերերից հողը խլում է յեվ սալիս է գյուղացիներին: Այն, ինչ վոր լոկ խոսքով էին ես-եռները խոստանում, իրոք իրա-

կանացնում է մեր կուսակցութեանը:

Այդ ըոպեյից արդեն հողի մասին աշխատավոր գյուղացիութեան ունեցած դարավոր յերազանքները իրանց իսկական իրագործումը գտան:

Այդ ըոպեյից արդեն պատմութեան մեջ այդ մեծագույն գործով Կոմսունիստական կուսակցութեանը հաստատուն և անբաժան կերպով յուր ճակատագիրը և հեղափոխութեան ճակատագիրը կապեց աշխատավոր գյուղացիութեան հետ:

Մեր կուսակցութեան յերկրորդ մեծ գործը ինկերիալիսական քայքայիչ պատերազմից դուրս գալն եր, մի պատերազմ, վորը հիմնովին քարուքանդ արավ մեր տնտեսութեանը:

Յեվ վերջապէս յերրորդ գործը ոսար պետրոյուններին ունեցած պարսերը վնարելու մեծումն եր, պարտքեր, վոր արել եր ցարական և բուրժուազիական կառավարութեանը և վորոնք իրանց ամբողջ ծանրութեամբ ընկնում էին գյուղացիութեան աշխատավոր ուսերին:

Բոլոր աշխատավորներէ թշնամիները սարսափով և անհաշտ կատաղութեամբ բռնվեցին, յերբ նրանք տեսան, վոր իրանց պարապ և անհոգ կյանքին վերջ դրվեցավ: Մոռանալով իրանց մեջ բոլոր ներքին մանր մունր տարաձայնութեաններն ու վեճերը, նրանք կազմակերպվում, մի միաձույլ հակահեղափոխական մասսա յեն կազմում, ոգնութեան են կանչում ոտար բուր-

ժուլագիտայի զորքերը և իրանց ամբողջ ուժով ընկնում են աշխատավորների վրա:

Կոմմունիստական կուսակցութունն ի պատասխան կազմակերպում է Կարմիր Բանակը և զենքի տակ է առնում աշխատավոր ժողովրդին, վորը չեր ցանկանում նորից վերադառնալ կալվածատիրական և կապիտալիստական ճորտությանը:

Յեռում, բորբոքվում է յերկարատե քայքայիչ քաղաքացիական պատերազմը, վորը հեղափոխական կռիվների մեջ յեփված և ամրակուռ Կոմմունիստական կուսակցության տուաջնորդության տակ աշխատավորներին հաղթության է տանում և վերջնականապես ամրացնում է Հոկտեմբերյան հեղափոխության բոլոր նվաճումները:

Այդ վիթխարի կռվի մեջ Կոմմունիստական կուսակցութունը կորցնում է յուր լավագույն ընկերներին շատ շատերին, վորոնք քաջի մահով մեռնում են սպիտակ գվարդիականների դեմ մղած կռիվների մեջ:

Կոմմունիստական կուսակցութունը կռվելով յուր վայրագ ու մոլեգին թշնամիների դեմ, չեր մոռանում սակայն առաջ տանել յուր անդամների կազմակերպության կապակցության և դաստիարակության վերաբերյալ յուր ներքին աշխատանքը: 1918 թվի մարտ ամսին հավաքվում է կուսակցության 7-րդ համագումարը:

Այդ համագումարի մեջ միաձայն վճռվում է զրանից հետո կոչվել «Ռուսաստանի Կոմմունիստական կուսակցութուն (բոլշևիկներ)»:

Այդ նոր անունը մեր կուսակցութունը հետևյալ պատճառներով է ընդունել:

Ամենից առաջ, այդ «սոցիալիստ» անունը ուղիղ չեր, վորովհետև «սոցիալիզմ» խոսքի տակ զանազան բաներ են հասկացվում. վոմանց կարծիքով սոցիալիզմ այն հասարակակարգն է, յերբ ամբողջ արտադրութունը հանձնվում է պետությանը, թեկուզ և բուրժուական պետությանը. ուրիշները յենթադրում են, վոր սոցիալիզմը այն կարգն է, յերբ արտադրութունը հանձնվում է քաղաքային և այլ հասարակական ինքնավարություններին՝ պահելով բուրժուական պետութունը և այլն: Բացի դրանից սոցիալ-դեմոկրատիական կուսակցութունները իրարից տարբերվում են այն ուղիներով և միջոցներով, վորոնցով պիտի իրականանա սոցիալիզմը: Վոմանք կարծում են վոր այդ ճանապարհները պետք է լինեն խաղաղ համաձայնական, մյուսները յենթադրում են, վոր սոցիալիզմին հասնելու այդ ուղիները պետք է լինեն հեղափոխական և այլն:

Յերկրորդ, սոցիալ-դեմոկրատները բոլոր յերկրներում պատերազմի ընթացքում պաշտպանելով և ռժանդակելով իրանց բուրժուական կառավարություններին, ոգնում եյին նրանց՝ պա-

տերազմը մղելու գործում, մի պետութեան բանվորներին զրգուում եյին մյուս պետութեան բանվորները դեմ, ուստի և բանվորների և գյուղացիութեան լայն մասսաների աչքում իրանց արատավորել են դավաճանութեամբ և մատնութեամբ: Ահա դրա համար ե, վոր մենք սոցիալ-դեմոկրատ բոլշևիկներս, վճռեցինք փոխել մեր անունը:

Իսկ կոմմունիզմը կատարելապես ստույգ կերպով արտահայտում ե մեր ձգտումները, վորովհետև նա ձգտում ե աշխարհի մեջ այնպիսի կարգ հաստատել, վորի ժամանակ արտադրութեան և աշխատանքի բոլոր գործիքները պետք ե ամբողջ հասարակութեան տրամադրութեան տակ գտնվեն և յերբ վոչ մի պետութիւն չի լինի այլևս, հետևապես և պետութեան հետ կանհայտանան ամեն տեսակ ճնշում և ստրկացում:

Այն ճանապարհներն ու միջոցները, վորոնցով զանազան յերկրների կոմմունիստական կուսակցութիւնները ձգտում են իրականացնել կյանքի մեջ իրանց հայացքները-դա զինված ապստամբութեան միջոցով կապիտալիստների և կալվածատերերի իշխանութեան գահավիժումն ե և բանվորների (իսկ մեզ մոտ նաև գյուղացիների) իշխանութեան հաստատումը, վորպես մի ժամանակավոր անցման շրջանի իշխանութիւն, վոր անհրաժեշտ ե բուրժուազիայի դիմադրութիւնը

ճնշելու համար: Իսկ յերբ կապիտալիստների ուժերը բոլոր յերկրներում խորտակվեն և ջարդովոյ լինեն, յերբ կրթվի ու դաստիարակվի նոր սերունդը, վորը չիմանա այլևս, թե ինչ բան ե ստրկացումը և մարդու բռնութիւնը յուր նմանի վրա, այն ժամանակ ահա պետութիւնը, վոր պես բռնութեան և ճնշումի մի գործիք, կըվոչնչանա:

Բացի դրանից, մի ուրիշ հանգամանք ել կար, վոր ստիպեց մեր կուսակցութեանը ընդունել կոմմունիստական կուսակցութեան անունը-դա այն եր, վոր կոմմունիզմի առաջին հիմնադիրներն ու առաջնորդները՝ Մարքսն ու Ենգելսը 1848 թվին իրանց նույնպես կոմմունիստ եյին անվանում և իրանց կազմած բանվորական միութիւնը կոմմունիստական եյին կոչել:

Մենք չենք կարող և չենք ել ուզում թագցնել և այն, վոր կոմմունիստների կուսակցութիւնը յերբեմն սխալներ և վրիպումներ եր ունենում: Առաժն ասում ե. «չի սխալվում միմիայն նա, ով վոչինչ չի անում»: Իսկ մենք մեզ համար մի այնպիսի նոր գործ եյինք անում, վորը վոչ վոք պատմութեան մեջ յերբեք չեր արել: Ուստի և զարմանալու վոչինչ չկա, վոր մենք յերբեմն և սխալվում եյինք: Բայց այդ սխալները վոչ վոք ավելի լավ չեր նկատում և զգում, քան ինքը, մեր կուսակցութիւնը և յուր

ուժերի չափով նա ինքը ձգտել է և ձգտում է մինչև այսօր ինչքան հնարավոր է, խուսափել այդ սխալներից և ուղղել այդ սխալները: Իսկ յեթե ինկատի ունենանք այն հանգամանքը, վո՞ր մենք բուրժուական հասարակությունից ժառանգություն ստացանք յերկարամյա պատերազմի պատճառով մինչև հիմքերը քայքայված մի յերկիր, մեր վոխերիմ ու չարագուշն թշնամիների՝ սպիտակ գվարդիականների արշավանքներից ու ասպատակություններից քայքայված գյուղացիական մի տնտեսություն, այն ժամանակ մեր այդ սխալներն ել հասկանալի և ներելի կըլինեն:

Այժմ մենք ստիպված ենք մեր տնտեսական շենքը կառուցանել համարյա դատարկ տեղում, առանց մեր արտասահմանյան հարուստ և զարգացած հարևանների վորևե ոգնության և օժանդակության: Այնտեղ, արտասահմանում իշխանությունը դեռ կապիտալիստների ձեռքումն է. և մեր արտասահմանյան կոմմունիստ ընկերները պետք է դեռ համառ կռիվ մղեն իշխանությունը նվաճելու համար:

Մենք այժմս աշխատավորներին չենք կարող ասել, թե մեզ մոտ ամեն բան լավ է:

Ընդհակառակը մենք չենք թագցնում և ուղղակի ու բացահայտ կերպով ասում ենք, վոր մեր զրությունը դեռ շարունակվում է մնալ ծանր. բայց այս վերջին ժամանակներս մեր կյան-

քի բոլոր ընադավառներում մենք զգալի բարելավման յենք հասել:

Չնայած մեր վրա հասած այն սոսկալի անբերրիությանը, վորի հետևանքները մենք համենայն դեպս հաջողությամբ չեզոքացրինք, մենք բայլ առ բայլ դիմում ենք դեպի բանվորների զրության բարվոքումը: Յեթե մենք մի հայացք նետենք ծանր կռվի և տանջանքների այն ճանապարհի վրա, վոր մենք արդեն անցել ենք, և համեմատենք այն վիճակի հետ, վորին հասել ենք այժմըս, ապա մեր նյութական զրության բարվորումը մեզ համար շատ զգալի կըթվա:

Համենայն դեպս, ինչ ել վոր ասելու լինեն մեր մասին մեր թշնամիները, մենք առաջ ենք գնում՝ մեր զրության բարվոքման ճանապարհով դեպի վեր, մինչդեռ արտասահմանյան կապիտալիստական յերկրները անտանելի կերպով շեշտակի սրանում են դեպի ցած արդյունագործության քայքայման ու աշխատավորների լայն մասսաների աղքատացման ճանապարհով: Յեվ այդ շեշտակի սրընթաց անկումի սահմանները չեն յերևում, յեթե բանվորները պետական իշխանությունը նվաճելով զրան վերջ չդնեն:

Այժմ մեզ վոչ վոք չի կարող ստիպել, վոր մենք պատերազմի դուրս գանք կապիտալիստների շահի համար, և մենք զգալի կերպով կըճատում ենք մեր կարմիր բանակը և մեր մյուս

վոչ արտադրական ծախքերը, վորոնք կապված են պատերազմի հետ:

Իսկ յեթե յերբևիցե մեզ ստիպելու լինեն պենքի դիմելու, ապա այդ գնքը ուղղված կը լինի նրանց դեմ, ովքեր իրանց սեփական շահի համար արյունահեղ կռիվների պատճառ կը լինեն:

Մենք հույս ունենք, վոր այդ պատերազմը վերջինը կը լինի, վորովհետև նա կը վոչնչացնի նրանց, ովքեր պատճառ են լինում այդ պատերազմներին:

Կապիտալիստական յերկրներում այժմս անընդհատ քաղաքացիական պատերազմներն են տեղի ունենում:

Մի կողմից զանազան բարոյական յերկրներ իրար հետ պատերազմում են շահի համար, մյուս կողմից սև հարյուրակային բուրժուազիան կատաղի կռիվ է մղում բանվորների և աճող կոմունիստական շարժման դեմ: Մեծացվում, զորեղացվում են բանվորները, աճում են զինավորման ծախքերը և այդ բոլորը յուր ամբողջ ծանրությամբ ընկնում է աշխատավորների ուսերի վրա:

Շնորհիվ այն համաամանքի, վոր մենք մեր յերկրից դուրս քշեցինք կապիտալիստներին և կալվածատերերին, դրանով ազատվեցինք պատերազմական լարված դրությունից և դրա հետ կապված ծախքերից:

Այժմ մենք ավելի ազնիվ և ավելի շնորհակալ գործ ունենք անելու՝ կարգի դնել մեր սեփական արդյունաբերությունը և ոգնել գյուղացուն՝ վերականգնելու յուր քայքայված տնտեսությունը:

Ինչպես պիտի անել այդ: Վերցնենք թեկուզ մեր գյուղական տնտեսությունը: Խնչպես վերականգնել այդ տնտեսությունը և բարձրացնել նրա արտադրողականությունը:

Նախկին, նախապատերազմյան ձևերով գլուխ բերել այդ, հնարավոր չէ նույնիսկ ամենահարուստ պետության համար անգամ:

Նախկին ձևով վերականգնել գյուղացիական տնտեսությունը, դա կընշանակեր վոր յուրաքանչյուր առանձին գյուղացիական տնտեսություն ունենար յուր սեփական ձիերը, յուր սեփական մանր գյուղատնտեսական յերկրագործական գործիքները, սերմերը և այլն: Իսկ յեթե ինկատի ունենանք, վոր Ռուսաստանում տաս միլլիոնից ավելի ինքնուրույն գյուղացիական տնտեսություններ կան, ապա պարզ կը լինի, վոր առանձին առանձին այդ բոլոր տնտեսությունները վերականգնելու համար վոչ իրանք գյուղացիները և վոչ ել պետությունը վոչ մի ուժ և միջոց չի ունենա: Բացի դրանից, տնտեսությունների այդպիսի մանրացած առանձնակի վերականգնումը ձեռնտու չէ նաև իրանց գյուղացիների համար, վորովհետև նա կը լսի նրանցից շատ ուժ, շատ ժամանակ և

միջոց, ոգուտ շատ քիչ կըստացվի. միևնույն է, անհնարին է անդըջըհեղյան յեղանակներով մշակված հողի արդյունքներով ապրել:

Հաշվի առնելով այդ ամենը, մեր Կոմսո-նիստական կուսակցութիւնը 1920 թվին Խորհուրդների 8-րդ համագումարում անցկացրեց մի վորոշում, վորպեսզի բանվորների և գյուղացիների աշխատանքը թեթևացվի, մոտակա տաս տարիների ընթացքում իրականացնել Ռուսաստանի Ելեքտրոֆիկացիան, այսինքն մեր տնտեսութիւն վերականգման համար կիրառել այն առանձնահատուկ ուժը, վոր կոչվում է Ելեքտրականութիւն, վորը կարող է շարժման մեջ դնել բոլոր գազգահները, քաշել գնացքները, և տրամվայի վագոնները, հերկել հողը, ազալ հացը, լուսավորութիւն և տաքութիւն տալ, հեռախօսի և հեռագրի միջոցով հաղորդել մարդու խոսքը և ընդհանրապես շատ ոգտակար աշխատանք կատարել:

— «Մեր շոգեկառքերի համար վառելիք չունենք մենք — ասում է Բորիս Կուշները յուր «Հեղափոխութիւնը և Ելեկտրոֆիկացիան» գրքուկի մեջ. Ելեքտրոտեխնիկան կըսանձահարի ջրվեժների և գետերի իգուր ու պարապ վրժրացող ուժը և կըստեղծի գնացքների սանձարձակ արագութիւնը: Պակասել են ձիերը՝ դաշտերը հերկելու համար: Ելեքտրական գութանը կըփափ-

կացնի ու կըփորի մեր անծայրածիր դաշտերի պարարտ ծոցը:

«Մոմ պատրաստելու համար հում նյութերը պակասել, սպառվել են. կերոսինը մեզ դժվարամտչելի յե դաբձել: Ելեքտրոտեխնիկան կըբարձրացնի տորֆային ճահիճների նիրհող ուժը և ճահիճները կըսկսեն լուսավորել քաղաքներն ու գյուղերը:

«Ելեքտրականութիւն համար չկա վոչինչ անմատչելի. նա կըպտտացնի մեր գործարանների և զավոդների գազգահները. կըհալի մեր հանքերի մետաղները և կըմշակի ու նրանցից մեզ համար անհրաժեշտ առարկաներ կըպատրաստի: Լուրերն ու տեղեկութիւնները ամենահեռավոր տարածութիւնները կըհասցնի. ուր ուզենաք սրընթաց կըտանի թե մեզ և թե մեր բեռները: Տները կըտաքացնի, կըլուսավորի, կերակուր կըպատրաստի և այլն»:

Ելեքտրականութիւնը գյուղացու կյանքի մեջ շատ հարմարութիւններ կըմտցնի և բոլորովին կըկերպարանափոխի մեր մութ ու հետամնաց գյուղը: Բացի նրանից, վոր Ելեքտրականութիւնը գյուղացիական տնտեսութիւնը նյութական ոգուտ կըտա, նա կըկրճատի նաև գյուղացու բանվորական ժամանակը, կըհեշտացնի նրա ծանր աշխատանքը և հնարավորութիւն կըտա բարձրացնել կուլտուրական և հասարակական պարգացման մակարդակը:

Բայց ինքնըստինքյան հասկանալի յե, վոր առանձին գյուղացու ուժերից վեր ե յուր տրնտեսութեան մեջ ելեքտրականութիւնն անցկացնել. ուստի և նրան ընդառաջ ե գնում մեր բանվորա-գյուղացիական իշխանութիւնը: Սակայն, բացի դրանից, գյուղացու կողմից ևս անհրաժեշտ ե հանդես բերել ավելի շատ ներգործականութիւն և հետաքրքրութիւն դեպի յուր սեփական վիճակը: Այդ նպատակի համար անհրաժեշտ ե, վոր նա գյուղացիական կոոպերատիվ ընկերութիւններ ձևի միանա և յուր հերթին ոժանդակի Խորհրդային պետութեանը՝ ելեքտրոֆիկացիայի ծրագիրը կյանքի մեջ վորքան կարելի յե շուտ իրագործելու:

Այս մի քանի տարիների ընթացքում ելեքտրոֆիկացիայի գործը զգալի կերպով առաջ ե գնացել և մենք արդեն պատրաստ ունենք մի քանի ելեքտրական կառուցումներ:

Մեր կուսակցութեան առաջ դրված այդ նըպատակների իրագործումը առաջնակարգ խընդիր ե:

Տնտեսական նոր քաղաքականութիւնը (նեպը) առաջացնում ե նոր գիշատիչ բռունցքներ, կուլակներ գյուղի մեջ, իսկ քաղաքներում սպեկուլյանտներ և կապիտալիստներ, վորոնք ձգտում են իրանց ձեռքը ձգել սկզբում ապրանքային փոխանակութիւնը գյուղում, իսկ հետո

նաև նվաճել ու տեր դառնալ արդյունագործութեանը և հենց դրանով խանգարել և քանդել բանվորների ու գյուղացիների միութիւնը՝ այս անգամ արդեն խաղաղ ճանապարհով, քանի վոր նրանց դա չհաջողվեց զլուխ բերել զենքի ուժով:

Կովի մեջ զենքը ձեռներիս մենք զիմացկուն եյինք և մենք հաղթեցինք: Անհրաժեշտ ե, վոր մենք կարողանանք հարմարվել, լինել այնքան ճարպիկ ու ճարտար, վոր կարողանանք մեր հակառակորդին հաղթահարել նաև խաղաղ շինարարութեան ճակատում. սովորել կազմակերպել արդյունագործութիւնը, շինել մեքենաներ, նոր գործարաններ և զավոդներ, մատակարարել գյուղացիներին գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ, նրանց հետ առևտրական կապեր ըսկըսել և մատչելի գնեքով նրանց մատակարարել տնային գործածութեան բոլոր առարկաները:

Յե՛վ այն ժամանակ գյուղացիների յե՛վ բանվորների միութիւնը ավելի ևս կամրանա:

Իսկ այժմ ավելորդ չի լինի ընդհանուր ամփոփում անել և միևնույն ժամանակ մեզ համար խրատական յեզրակացութիւններ հանել թե ինչու համար հաղթեց Կոմմունիստական կուսակցութիւնը:

Նախ և առաջ, մեր կուսակցութիւնը, վոր յեփվել ու մարզվել ե ինքնակալութեան դեմ վարած յուր գաղտնի պայքարի մեջ, բաղկացած

ե առաջավոր պրոլետարիատի ավելի զիտակից, անձնվեր, զիմացկուն և հերոսական մասից:

Յերկրորդ, նա կարողացել է կապվել, մոտենալ, և յերբեմն նույնիսկ միանալ աշխատավոր բանվորների և գյուղացիների լայն մասսաների հետ: Իրանից հասկանալի կըդառնա արդեն մեր կուսակցության թախանձագին պահանջը յուր անդամներից. «մտացեք մասսաներին, մի կտրվեք նրանցից, կապ պահեցեք ստորին խավերի հետ, ահանջ դրեք և հաշվի առեք ստորին խավերի տրամադրությունը» և այլն:

Յերրորդ, մեր կուսակցությունը կարողացել է յուր քաղաքական ուղիմազիությունն ու գործելակերպը՝ յուր ստրատեգիան ու տակտիկան անսխալ դնել, կարողացել է զեկավարել մասսաները և կարողացել է յուր անդամների մեջ յերկաթե կարգ ու կանոն պահել:

Մեծ են յեղել աշխատավորների զոհերը ազատության համար նրանց մղած կռվի մեջ, բայց այդ զոհերը հազարապատիկ ավելի քիչ են, քան յեթե աշխատավորները նորից ճորտ դառնային կապիտալիստների և կալվածատերերի ձեռքին: Մենք առույգ ու աշխույժ նայում ենք ապագային, վորովհետև այդ ապագան պատկանում է աշխատավորներին:



ԸՆԿԵՐ ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒ-
ՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ


Մեր կոմմունիստական կուսակցության ըս-
տեղծողն ու վոգի տվողը անկասկածորեն հան-
դիսանում է մեր հանճարեղ առաջնորդն ու ու-
սուցիչը՝ Վլադիմիր Իլիչ Լենինը: Մեր կուսակ-
ցության պատմությունը մենք չենք կարող Լե-
նինից անջատել:

Դեռ 90-ական թվականներին ընկ. Լենինը
կատաղի կռիվ էր մղում նարոգնիկության դեմ,
մի շարք հողվածների և գրքերի մեջ ապացու-
ցանելով, վոր Ռուսաստանը վոչ միայն կապի-
տալիստական զարգացման ճանապարհն է ըն-
կել, այլ և մեղանում արդեն գոյություն ունի
կովի համար արթնացած բանվոր դասակարգ,
վորը առաջիկա ուսական հեղափոխության մեջ
բոլոր ճնշվածների և շահագործվողների շահերի
համար մղված կռվում ղեկավարի և առաջավոր
մարտիկի դեր պիտի խաղա: Բայց վորպեսզի
բանվոր դասակարգը հեղափոխական շարժման
գլուխը կանգնի, դրա համար նրան անհրաժեշտ
է կազմակերպվել ու կազմել յուր անկախ, մի-
աձույլ և մարդված կուսակցությունը: Յերբ
ընկ. Լենինը այդ առաջին խնդիրը լուծեց, նրա
առաջ դուրս յեկան այլ խնդիրներ և առաջին

հերթին. այդ կուսակցութիւնը դարձնել ուղի-
մունակ, անհաշտ ու դիմացկուն առաջիկա հեղա-
փոխական կռիւներէ մեջ:

Այդպիսի դիմացկուն, մարզված կենտրոնա-
ցած բանվորական դասակարգային կուսակցու-
թիւնն ստեղծելու համար ընկ. Լենինը անխնա
և համառ կռիվ մղեց սկզբում «եկոնոմիստներին»
դեմ, վորոնք ցանկանում էին բանվորական դա-
սակարգը լիբերալ բուրժուազիայի մի հավելվածը
դարձնել. ապա նա կռիվ մղեց մենշեվիկներէ և
այլ համաձայնական և կեսանիշխանական հո-
սանքների ու խմբակների դեմ, վորոնք այս կամ
այն ձևով ձգտում էին բուրժուազիայի ազդե-
ցութիւնը տարածել բանվորական դասակարգի
վրա և հենց դրանով դուրս բերել նրան հեղա-
փոխական ճանապարհից՝ իշխանութիւնը նվա-
ճելու ճանապարհից: Բայց ընկ. Լենինի գլխա-
վոր ու ամենահիմնական արժանիքը, վորի մեջ
առանձնապէս պայծառ կերպով յերևան է գա-
լիս նրա հանձարեղ միտքը, այդ այն էր, վոր
նա առաջինն էր, վոր ըստ արժանվույն գնահա-
տեց գյուղացիութիւնի դերն ու նշանակութիւնը
և նրան ցույց տվեց նրա իսկական տեղը հեղա-
փոխական կռիւի մեջ — բանվորական դասակարգի
հետ միանալով և նրա ղեկավարութիւն տակ:

Նորերս մեզանից անջատված մեր սիրելի
առաջնորդի և արտոյցիկ սպիտակամետրե մենք
անշեղ կերպով կենդանի հեղափոխական իրակա-
նութիւնը կրկնումք:



Հ. Կ. Կ. Լեւոնովի հրատարակչությամբ լեւ
Գ. Ալբունյանի քարգնանությամբ լույս են տե-
սել հետեւյալ աշխատություններ.

- 1) Պրոֆ. Լ. Լյուբիմով Քաղաքաանտեսության
գասընթացք. 1924 թ. 357 էջ. գինն է 1—50 կ.
- 2) Չ. Խորրաբին Ուրվագիծ պատմա-տնտեսական
աշխարհագրության 1925 թ. 198 էջ. գինն է
1 ռ. 30 կոպ.
- 3) Ս. Կանասյիկով Բանվորական կուսակցու-
թյունն ու գյուղացիութիւնը. 168 էջ. գի-
նըն է 30 կոպ.

Պատրաստվում են նույն հրատարակչությամբ մի-
ջանի կարեւոր գրքեր եւ:

ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊ.

«Ազգային գրադարան»



NL0182000

